



Հարգելի՛ ընթերցող.


ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



ՄՓՅՈՒՆՅԱԿԱԿՆ  
ԳՐԱՐԱՆ

Ջ Ա Շ Ր Ա Տ

Մ Ե Յ

Բ Ա Մ Ե Ի Ի  
Ի Ի Ի Ի Ի Ի



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1978

Կազմեց և առաջաբանը գրեց՝  
Ալեքսանդր Թոփչյանը

70202 (195)  
2 705 (04) 77 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1978

## ՁԱՐՄՍ

### 1.

Չահրատի բանաստեղծությունները հայ դասական պոեզիային ընտելացած ընթերցողներին կարող են անսովոր թվալ. բանաստեղծություն ստեղծող գրեթե բոլոր ատրիբուտներից հեռու, պրոպահիկ, կես-լուրջ, կես-կատակ տողեր, երբեմն կարծես մի փոքրիկ քամի է մտնում այս «անբանաստեղծական» աշխարհը, որը մեզ տեղ-տեղ հիշեցնում է դուրյանական տողերը, մեծա-րենցյան թախիծը, պարոնյանական խիստ ու անողոք սարկապմը և վարիֆյանական կենսասիրությունը: Բայց և այնպես, մեզ համար սովորական դարձած դասակարգումով և ավանդների հերթաշարումով գուցե դժվարանանք Չահրատի կեւմ. ասենք, իստամբուլահայ մեկ այլ բանաստեղծ Չարեհ Խրախունու ճյուղը սարքուկարզին պատել հայ պոեզիայի ծագումնաբանական ծառի մեջ: Դժվար է ասել, թե նման փորձերը որքանով արդյունավետ կլինեն, որովհետև այստեղ կա մի քանի վտանգ և դժվարություն. Պեշիկթաշլյանից մինչև Չարիֆյան և Թեքեյան ձգվող հանրածանոթ ճանապարհի վրա այսօրվա Չահրատին և նրան շրջապատող պոետական մթնոլորտը դժվար թե գտնենք (այնպես, ինչպես մենք կուպեինք, այնպես, ինչպես տասնհինգերորդ դարի ծնունդ Վիլյունին պզում ենք քսաներորդ դարի գրեթե յուրաքանչյուր ֆրանսիացի բանաստեղծի տողերում): Պատճառը միայն այն չէ, որ հայ քերթության ծագումնաբանական ծառի ճյուղերը բավական խճճված են, այլ գուցե ավելի շատ այն, որ իրար հաջորդող դարաշրջանների էսթետիկական սկզբունքները երբեմն իրարից շատ տարբեր են լինում, չասած այն մասին, թե Չահրատի և արևմտահայ պոեզիայի միջև ընկած է ոչ միայն մի քանի տասնամյակ, այլև սպգային մի

մեծ աղետ, որը կարող էր ամեն ինչ գլխիվայր շրջել: Կարդալով այսօր արևմտահայ այս կամ այն բանաստեղծին, լավագույն դեպքում կարող ենք կռահել նրա «ստեղծագործական որևէ սկզբունքի հնարավոր վարձագումը այսօրվա սփյուռքահայ պոեզիայում, և հակառակը, Չահրատի և իստամբուլյահայ մյուս բանաստեղծների տողերում դժվարությամբ կգտնենք արևմտահայ մեծ պոետների պեռադան, այնպես, ինչպես, ասենք, սովետահայ մի շարք բանաստեղծների տողերում այսօր տեսնում ենք Չարենցին և Իսահակյանին:

Չտապենք այս երևույթը դրական կամ բացասական գնահատել:

Չահրատին և նրա սերնդակիցներին արևմտահայ պոետներից (Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Միամանթո, Չարիֆյան) բաժանում է 30—70 տարի, ըստ որում տարիներ, որոնց ընթացքում իստամբուլյահայ գրական մթնոլորտում կգալի շարժումներ չեն եղել:

Բացի այդ, որքանով և ինչպես վերը հիշված արևմտահայ բանաստեղծները կարող էին ներկա լինել Չահրատի կամ Նրախունու տողերում: Մեզ քաջ հայտնի է, որ սփյուռքահայ գրականությունը այնպիսի համաչափ և աստիճանական զարգացում չունեցավ, ինչպես սովետահայ գրականությունը: Յուրաքանչյուր գաղութի գրական շարժումը, մյուսների հետ ունեցած իր ընդհանրություններով, շատ հաճախ պայմանավորված էր տվյալ երկրի սոցիալ-տնտեսական վիճակով, այդ երկրի ազգային մշակույթի մակարդակով, հետևաբար, տարբեր էր նաև անցյալի գրական ժառանգության գնահատման հարցը: Եթե լիբանանահայ կամ եգիպտահայ գրողները ձգտում էին շուտափույթ վերականգնել նախորդ սերունդների հետ կապող կախիդները, ապա ֆրանսահայ գաղութում վիճակն ուրիշ էր: Իստամբուլյահայ գրականության մեջ այս ակամա «բախումը» անցյալի ժառանգության հետ տեղի չունեցավ, այլ պարզապես մի քանի տասնամյակի ընդմիջումը և իրականության պարտադրող խնդիրները թելադրեցին յուրովի մոտենալու իրենց մեծ նախորդների պոետական ավանդներին: Գնալ ոչ թե ոճավորման, արտաքին նմանության (որը նույնպես, ինչ-որ էտապում, ժամանակավոր կարող է ավանդների շարունակություն լինել), այլ ոգու, ավանդների ներքին էության շարունակման և զարգացման ճանապարհով: Եվ, վերջապես, պետք է անպայման հաշվի նստել քաղաքական այն պայմանների հետ, որոնցում ապրում և ստեղծագործում են թուրքահայ բանաստեղծները: Թերևս այստեղից է գալիս այդ պոետների

պեգորիվը, խոր ենթատեքստը, ձգտումը դեպի համամարդկային իմաստները և հնակացողությունները, սոցիալական սուր պաթոսը և աբսուրդի պգացողությունը:

## 2.

Մատթեոս Չարիֆյանը Մեծ Եղենի սարսափներից անմիջապես հետո նամակներից մեկում գրում էր. «Երբեք չնայի կյանքի ողբերգական կողմին՝ առանց ժպիտ մը ունենալու շրթունքիդ... Ա՛հ, եթե կարելի ըլլար որ թույն մը, միակ թույն մը, ամեն մարդ մոռնար իր վիշտերը, ու խենթ զվարթություն մը տիրեր Երկրի չորս անկյուններուն՝ կերակրվեմ թե ինչ ապուշ դեմք մը պիտի առնեիր Չար Ոգին որ մեզ կկառավարե:

Կհավատամ, թե օր մ'ալ հարկ պիտի չըլլա պոռայու «կեցցե՛ր ապատությունը», որովհետև ամեն մարդ կատարելապես ազա՛տ պիտի ըլլա, ու պիտի մոռնանք սա թշվառական բառը «քաղաքականություն». այն առեն ուրիշ բան պիտի բարձրանա բոլոր շրթներին՝ «կեցցե՛ր ծիծաղը»:

Չահրատի մուտքը գրականության Չարիֆյանի այս տողերից մոտ երեսուց տարի հետո եղավ: Դժվար է ասել, թե արևմտահայ ո՛ր մեծ բանաստեղծին էր աշակերտում իր առաջին փորձերում, բայց կասկածից դուրս է կենսահաստատման և լավատեսական այն առողջ ոգին, որ Չահրատը ժառանգեց իր նախորդներից՝ Մեծարենցից և Չարիֆյանից, Պարոնյանից և Օռյանից:

Ինչպիսի՞ն էր ներկայանում աշխարհը Չահրատի առաջին բանաստեղծություններում: Հասկանալի է, որ թուրքական իրականության պայմաններում «Հայրենի եպերքը» իր պատմությամբ ու ներկայով չէր կարող քերթողական այնպիսի ատաղձ լինել, որպիսին դարձավ Բյուզանդ Թոփալյանի, Վահե Վահյանի, Ժակ Հակոբյանի բանաստեղծություններում: Թերևս սա էր այն կարևորագույն պատճառը, որ հենց սկզբից պարտադրեց Չահրատին այլ ձևերի, այլ պատկերների և երբեմն ուրիշ բովանդակության մեջ որոնել ու ստեղծել բանաստեղծականի նոր սահմանները: Բացի այդ, Չահրատից առաջ արդեն բանաստեղծական նոր դպրոց էր ծնվել Ստամբուլում. իստամբուլյահայ բանաստեղծների առաջին սերունդն արդեն ասպարեզ էր իջել սոցիալական պոեզիայի հետաքրքիր պրպտումներով:

Այս երկու հանգամանքները որոշիչ եղան Չահրատի ստեղծագործության համար: Բայց Չահրատի էական տարբերությունն այդ պոետներից

այն էր, որ կարողացավ սոցիալական քննադատության սուր պաթոսը գունավորել անսեթնեթ լիբիզմով և բարի հուժկով: «Ենց առաջին քայլերից երևում էր Չահրատի կենսասիրությունը: Սոցիալական պոեզիան միայն մերկացում չէ, այլև ապրելու, ինքնահաստատման միջոց: «Կաղանդ Պապայի» մանկական հեքիաթը կարծես ցրվում է, երբ «Ճերմակ մորուքի» կայուն մեռաֆորը դրվում է անխուսափելի և կոպիտ իրականության մեջ.

Կաղանդ Պապայի մորուքը Ճերմակ է  
ԱՆՅՈՒՐԻ նման

Ըսե Կաղանդ Պապա  
Մորուքեդ հաց կշինվի\*:

Պատրաստի էսթետիկական ծրագիրը բախվում է կյանքի թելադրանքին, պոեզիան ստիպված է շեղել ճամփան, դադարում է մնալ որպես հաստատուն վիճակ՝ այլուրի նման Ճերմակ մորուք: Պոետական հին ծրագիրն ի վիճակի՝ է արդյոք սնունդ տալու այսօրվան, ո՞րն է այսօրվա պոեզիայի հացը: Չահրատի պոետական ճշմարտությունը ծնվում է կյանքի հրամայական պահանջներից. պատրաստի պոեզիան հանդիպում է կյանքի մի քիչ դառը, մի քիչ հեզևական ուտիլիտարիզմին՝ մորուքեդ հաց կշինվի\*: Բանաստեղծի առջև արդեն նոր աշխարհ է՝ նոր իրերով, նոր մարդկանցով և նոր հարաբերություններով: Կարող ես քո հին և մշտական երազներով հանրակառք նստել, երազել, հեռունները գնալ.

Տառը դրու է կըսե—կնստի  
Կերպե—կուպե հեռուններն երթա  
— Ուր—ով գիտե—

թերևս ետ մանկության տարիներուն  
թերևս առաջ հուսացած օրերուն

Բայց հանրակառք է այս—գիծեն դուրս չելեր  
Բայց հանրակառք է այս—գիծեն դուրս չելեր

Ահա երազի և իրականության հավերժական և անխուսափելի բախումը բանաստեղծական նոր խոսքով: Բանաստեղծությունը եզրափակող տողերը, ավելի ջուտ կրկնվող տողը, տրամվայի (հանրակառքի) ռելսերի պատ-

րանքն է ստեղծում: Բանաստեղծը նույնիսկ անշատել է, որպեսզի հանկարծ ենթաստեղծատով չհնչի: Մյուս կողմից, այդ կրկնված տողը առարկայական շոշափելիությամբ եզրափակում է բանաստեղծական սյուժեն. ժամանակ-հանրակառքը իր շավղից դուրս չի գա, անցյալի և ապագայի երազների իրականացումը կապված է այդ հանրակառքի ընթացքից: Որքան կուպե ձգտիր առաջ, իդեալականացրու անցյալը, միևնույն է՝ «գիծեն դուրս չելեր»: Գուցե միակ ելքը անցյալի երազներով և ապագայի հույսերով ներկան ճանաչելն է:

«Անիկա տարօրինակ աշխարհ մըն է» — գրում է բանաստեղծը: Մարդիկ իրենց հին երազներով շարունակ պիտի ապրեն այդ բախումը, պողոտան առաջին անգամ պիտի մարդու միս ճանաչի: Կարողավ Չահրատի առաջին շրջանի բանաստեղծությունները, ակամայից վարմանում են և ցանկություն է առաջանում բանաստեղծին բնորոշել մի բառով, որը կարծես չպիտի սազեր նրան՝ **ավանդապատ**: Թվում է, թե Չահրատն իր ավանդապատության մեջ անցյալի դյուրըմբռնելի արժեքներին կառչող է, բայց նա արթուն հայացքով է նայում ամեն մի նորության, նրա տողերում խուճապ և ատելություն չկա «անհասկանալի» ներկայի հանդեպ, չկա վախ և ատելություն ամեն մի նոր բանից և շատ ու շատ «ավանդապաշտ» բանաստեղծների պես պայքարի լուրդիտական մեթոդներ չի կիրառում այդքան ատելի «նոր ժամանակների» դեմ: Չահրատի տողերում, ինչպես հատուկ է ամեն մի ճշմարիտ բանաստեղծի, անցյալի հարապատ, ավանդական և սիրելի մթնոլորտը վարմանալի մտերմությամբ գալիս մերվում է ներկայի ամեն պահ ծնվող նոր արժեքներին, իմաստներին և հարաբերություններին: Երկու հակադիր տարերքներն իրար ստերմացնելու այս ձիրքը Չահրատին օգնում է ամբողջական պատկերացում ստեղծելու մարդու մասին, ամեն մի երևույթի մեջ տեսնել էականը, անցյալի մեջ տեսնել արդիականություն, գնալ ետ, բայց չհնանալ, չծերանալ, միաժամանակ լինել ներկայի մեջ, զգալ նրա քմայքոտ ուրիշը, բայց չվերածվել սխեսմայի, չկտրվել մարդկային հավերժական արժեքներից: Մարդու հոգեբանության անդադար բարդացումը, նոր ժամանակների պարադոքսները հրապուրում են նրան: Ճշտորեն զգալով նորի բարդությունը, չխաբվելով նոր ժամանակների միֆերից, բանաստեղծը վարմանալի ունակություն է հանդես բերում երևույթները գնահատելու մարդկային առողջ բանականության և կենսախիղճ հուժկովի դիրքերից: Նոր ժամանակների տեխնիցիզմը, մետաղական փայլը, գերձայնային արագությունը, հապար ու մի տեսակ ին-

տելեկոուալ շղարշները քանի՜ արվեստագետների մոլորեցրին: Նրանք մի պահ մոռացան, որ «ամեն ինչի չափը մարդն է»:

Այո, Ջահրատը ավանդապահ է, ավելի շուտ այն բանաստեղծներից է, որոնք վերջնականորեն չեն կաշկանդվում ժամանակի անդադար հոսքի մի պահի մեջ, այլ հավասար կերպով կարող են ապրել ուլիսի ժամանակաշրջանում և միշտ լինել արդիական: Նոր աշխարհի, նոր հարաբերությունների անխնա ներխուժումը ստիպում է նրան պահպանել ամենաթանկ բանը՝ մարդկային առողջ և բանական սկզբունքները, երազելու կարողությունը, ջերմությունը, գիտակցված լավատեսությունը և, վերջապես, բանաստեղծների և մարդկանց փրկարար վենքը՝ հեզնանքը: Ահա պահրատյան հումանիզմի բաղադրիչները:

Անցյալի պարզ ու հարապատ արժեքների և նորի բարդ, օտար ու վախեցնող իրականության բախման մեջ միշտ ծնվում է փոքր մարդու միկրոդրաման, որն արդեն սովորական երևույթ է դարձել քսաներորդ դարի գրականությունների մեջ: Նման բախումներից ծնվող սոցիալական դրաման երբեմն գունավորվում է իրոնիկ երանգներով, որովհետև բանաստեղծը կյանքի նորոգումը դիտում է որպես հավերժական, անխուսափելի և անհրաժեշտ մի երևույթ, որտեղ մեր հին, հարապատ և սովորական դարձած կյանքից հրաժարվում ենք ծիծաղով: Այդպիսին է Ջահրատի Կիկոն, որի «Համառոտ կենսագրության» մեջ հեզնանքը տեղ-տեղ պամֆլետային սրության է հասել՝ ավելի սրելով Ջահրատի վաղ շրջանի ստեղծագործության սոցիալական քննադատության ուժը: Ջահրատի Կիկոն հիշեցնում է Հ. Մնձուրու պոլսական պատմվածքների հերոսներին, այն տարբերությամբ, որ Մնձուրին իր հերոսների դրաման տեսնում է մեծ մասամբ հայրենի բնաշխարհի կորստի մեջ, մինչդեռ Կիկոն սկսվում է այնտեղից, որտեղ վերջանում է Մնձուրու հերոսի կենսագրությունը: Նա արդեն հեզնանքի նյութ է դարձրել այն անհեթեթ վիճակը, որը Մնձուրու հերոսը փորձում է անցյալի արժեքներով իմաստավորել:

Մեկ անգամ մեկ մեկ  
Մեկ անգամ Կիկո վերո

Երկու անգամ մեկ երկու  
Երկու անգամ Կիկո վերո

Տասն անգամ մեկ տառը  
Տասն անգամ Կիկո վերո

Հարյուր անգամ մեկ հարյուր  
Հարյուր անգամ Կիկո մենջ

Եվս մեկ բախում, այս անգամ իր մերկացրած ճշմարտացիության մեջ անողոք, դաժան, բայց իրական և մաթեմատիկորեն ճշգրիտ: Կյանքից արատահվող գիտական, մաթեմատիկական պարզ գործողությունը (Մեկ անգամ մեկ մեկ) դադարում է համապատասխանել կյանքի, առկա, կենդանի փաստին (Մեկ անգամ Կիկո վերո): Ծանոթ երևույթ նոր ժամանակների համար՝ մարդու արժեպրկում: Ահա պահրատյան ձևի և բովանդակության ներդաշնակության փայլուն օրինակ, այսպիսի փաստը պետք էր նկատել և հնարավորին զսպաստությամբ, բայց պակաստային հնչեղությամբ նշել: Բուռն ապրումները, այսորժայուր հանգը և պոետական այլնայլ քաղցրահունչ հնարանները պոետական այս փաստագրումը ըստ երևույթին կդարձնեն ֆիլանտրոպի թույլ բողոք: Այս բանաստեղծության մեջ մի փոքր ընդգծված, բայց և բյուրեղացված վիճակում երևում է Ջահրատի բանաստեղծական հիմնական սկզբունքը. պոեզիա, առանց մեկ հայտնի պոետականության, կյանքի սուր արտահայտված մանրամասները իրենց թաքնված պոեզիայով: Բանաստեղծությունը սովորական թվարկումից այն կողմ չի անցնում, չիներ իմաստի վարզացման շեշտված ռիթմը, կարելի էր նույնիսկ շփոթել արձակ ստեղծագործության հետ: Այդ ռիթմը հենց նախապատրաստում և սաստկացնում է երկու իմաստների բախումը, որից և ծնվում է պոեզիան:

Մարդու արժեպրկման թեման այն լծակն է, որ հնարավորություն է տալիս Ջահրատին սոցիալական քննադատությանը ավելի խոր բովանդակություն հաղորդել: Մարդկային թշվառության պատճառները նա միայն հացի պակասի կամ երազի և իրականության բախման մեջ չի տեսնում, որի վրա իրենց հիմնական ուշադրությունը սևեռեցին Ջահրատի սերնդակից մի շարք թուրք բանաստեղծներ (Օրհան Վելի, Մելիխ Ջեվդեթ Անդայ, Օքթայ Ռիֆաթ): Դրանք անհեթեթ իրականության արտաքին նշաններն են, որոնցով հրապուրվելը կարող է խանգարել այդ իրականության բուն էության մերկացմանը: Հետո, չմոռանանք, որ վերոհիշյալ թուրք բանաստեղծների համար այդ թեմաները իրենց հայրենիքի անհետաձգելի

խնդիրներն էին, թերևս սա էր պատճառը, որ ստիպում էր նրանց ավելի կենտրոնանալ այդ հարցերի վրա և հրապարակախոսական ավելի սուր պաթոս հաղորդել բանաստեղծություններին, ավելի հակվել դեպի քաղաքական պոեզիան, վերջինս շատ հասկանալի պատճառներով խալառ բացակայում է իստամբուլահայ բանաստեղծների գործերում: Չահրատը չի սահմանափակվում մեկ իրականության, մեկ երկրին հատուկ օրինաչափություններով, չարիքի արմատը որոնում է ժամանակի ավելի լայն ընդգրկման մեջ, աշխարհագրական ավելի ընդարձակ սահմաններում:

Սա էլ, իր հերթին, բանաստեղծին ստիպում է որոշակի առաքելություն ընձեռնել պոեզիային: Իհարկե, Չահրատը բանաստեղծությունը դիտում է ոչ որպես կյանքի ծրագիր, սակայն հավատում է պոեզիայի վերափոխիչ կարողությանը: Այստեղ է, որ նրան օգնության է գալիս վարիճյանական լավատեսությունը և ծիծաղը: Նոր իրականության բարդ և հակասաբար երևույթները այդ ոգին՝ չեն ընկճում, բանաստեղծը չի դիմում միասիկայի միախառնությանը, այլ ստեղծում է այդ իրականության ռեալ պատկերը, որն առաջին հայացքից գուցե անսովոր է, ոչ իրական, բայց իր ռեալ դրսևորմամբ հենց ցույց է տալիս իրականության անհեթեթ էությունը:

Եթե որոշ բանաստեղծությունների մեջ իրականության արտորդ առիթ է տվել ֆանտաստիկ պատկերի, ապա «Գիշերապահը» բանաստեղծությունը, որի հիմքում ընկած է մեր դարին այնքան հատուկ մարդու երկվության թեման, լուծված է բանաստեղծական հետաքրքիր հնարքով: Առաջին հայացքից այդ բանաստեղծությունը կարող է քնահաճ կատակ կամ ճարային բառախաղ թվալ, բայց բավական է ուշադիր նայել և կտեսնենք, թե հեղինակն ինչպես է արդարացրել բանաստեղծական դժվարին հնարանքի՝ քիպով օգտագործումը: Հասկանալի ու պարզ բառերը հանկարծ հնչում են աղավաղված: Գիշերային միայնության մեջ գիշերապահը տեսնում է իր երկվորյակին: Պարզ ու սովորական երևույթները մերկանում են և ցույց տալիս նրա կեղծ գոյությունը, որ թաքնված է առօրյայի ծանոթ և արտաքուստ հասկանալի պատյանի տակ: Բառախաղի իմաստը պարզվում է, մենք տեսնում ենք մարդու էությունը՝ արտաքուստ կանոնավոր, բայց ըստ էության կեղծ. «նիհարակալ գիշերապահը» և արտաքուստ անկանոն, բայց իրական, ներսից խաթարված. «Գիշերակալ միհարապահը»: Բանաստեղծական հնարանքը դադարում է որպես բառախաղ հնչել և բացում է մեր ժամանակի երևույթներից մեկը: Սակայն այս գիշերային հայտնությունը երկար չի տևում և գիշերապահն ապավում

է իր իսկական գոյի, սուկայի երկվորյակի ներկայության մղձավանջից: Նման դեպքերում ասում են. բանաստեղծը մեղավոր չէ, որ իրականությունն այլանդակ է, նա պարզապես հավատարիմ է մնում կոչմանը և փորձում է տալ այդ իրականության ճշմարտացի պատկերը:

## 3

Չահրատի երկրորդ ժողովածուն՝ «Բարի երկինքը» լույս տեսավ տասնմեկ տարվա ընդմիջումից հետո՝ 1971 թվականին: Իհարկե, «Մեծ քաղաքի» (1960 թ.) և «Բարի երկինքի» միջև, 1968 թվականին բանաստեղծը մի փոքրիկ գրքույկ լույս ընծայեց՝ «Գունավոր սահմաններ», բայց դա փաստորեն թեմատիկ մի շարք էր, որի ծավալը հարյուր տողից պակաս էր: Այդպիսի մի փոքրիկ ժողովածու լույս տեսավ 1976 թ. «Կանանչ հող» վերնագրով՝ Փարիզում: Չահրատը հեղինակ է նաև երկու անգլերեն ժողովածուների՝ 1969 թ. «Gigo poem's»-ը «Կիլիկիա պոեմս» հրատարակչությունում (թարգմ. Հակոբ Խաչիկյան) և 1974 թ. «Selected poem's»-ը «Մաննա» հրատարակչությունում (թարգմ. Բաֆֆի Մեթյան), առաջինը ԱՄՆ-ում, երկրորդը Կանադայում:

Տասնմեկ տարին մեծ ժամանակահատված է բանաստեղծի համար, և «Բարի երկինքը» կարդալիս առաջին հերթին ուզում են նկատել, թե ինչով է փոխվել Չահրատը: Արտաքին փոփոխություններն աննշան են: Բանաստեղծը հավատարիմ է մնում իր ոճին, իր բարի, կիսահեզնակակիսաբանձոտ տրամադրությանը, որ երբեմն-երբեմն սարկավալի կամ անհուսալի թախծի բռնկումներ է ունենում: Բանաստեղծական հնարքներն էլ կարծես մնացել են նույնը, իմաստի անսպասելի շրջադարձներ, սրամիտ և խորհմաստ բառախաղեր, կենցաղային մանրամասնի և փիլիսոփայական եզրահանգումի միացություն, մեծ վստահություն փողոցի կեղանի և առօրյա լեզվի, դարձվածքների բազմմաստությունը, առողջ հոսքին: Չի փոխվել նաև բանաստեղծական տեսողությունը՝ անկանխակալ մոտեցումը կյանքի, իրերի պոեզիային: Այդ առումով հետաքրքիր է «Միրածներույ բերնին մեջ» բանաստեղծությունը, որտեղ հրաշալի կերպով ներկայացված են պոեզիայի և իրականության, իրի և բառի սահմանները: Հետաքրքիր է նշել Չահրատի կարևոր արժանիքներից մեկը. նրա բանաստեղծությունները արդեն թարգմանվել են բազմաթիվ լեզուներով և կարելի է ասել, որ թարգմանությունների մեջ բանաստեղծական միտքը, «ծրագիրը»

գրեթե չի փոխվել: Պատճառը բառերի ազատ վիճակներն են, որ հառուկ է Չահրատին և այսօրվա պոեզիային: Չահրատը հապվադեպ է ապավինում լեզվական-բառային սրբությունների վրա կառուցված բանաստեղծությանը, այն պոեզիան, որը ցույց է տալիս ռոմանտիզմի և սիմվոլիզմի ուշացած ազդեցությունները թույլ զարգացած կամ հեռ մնացող գրականություններում: Չահրատի բանաստեղծությունները գրեթե ամբողջապես թարգմանվում են, միակ բանը, որ կորչում է, արևմտահայերենին հատուկ որոշ ճկունությունն է:

«Միրածներուդ բերին մեջ» բանաստեղծությունը կառուցված է ոչ այնքան ազատ բառերի շարահյուսումից, որքան բառի կաշկանդված, որոշակիացված իմաստների հակադրումից: Սա իր կառուցվածքով հիշեցնում է «Ջերո» բանաստեղծությունը, սակայն տարբեր է բովանդակությամբ:

Չահրատի «Մեծ քաղաքը» շարունակվում և ավարտվում է «Բարի երկինքում»: Կիկոյի կենսագրությունն էլ շարունակվում և ավարտվում է այս գրքում: Փոքր մարդու միկրոդրաման կարծես վերացել է, վերացել են այդ դրամայի արտաքին սրությունները, բայց չի փոխվել դրամայի սոցիալական էությունը, այն վերաճել է ավելի անհեթեթ վիճակների, որոնք ավելի շատ զգացվում են Չահրատի մյուս բանաստեղծություններում: Կիկոն թշվառների դասակարգի որոշակի տիպն է: Կիկոյի տարբերակը՝ ապադասակարգայնացած, սոցիալական հակադրության վիճակից դուրս եկած, մի փոքր կլոունային գծերով օժտված, հանդիպում ենք Բեկետի դրամաներում: Կիկոն չնայած գտնվում է անհեթեթ վիճակներում, բայց և այնպես արտաքին չի հասնում: «Բարի երկինքում» սոցիալական քննադատության սրությունը ինչ-որ չափով կորել է, դարձել անեկզոտիկ, արդեն նկատվում է մաներայնություն: Բայց դրանց կողքին «Կիկոյի երգը» ինչն է որպես «համառոտ կենսագրության» փայլուն ավարտ.

Կիկոյին երգը ճշինչ հողավար  
Չաղացքի հեքիաթ—մեքենային դեմ

Կիկոյին երգը բզյուն միալար  
Մծեղի կարմաւը—հրթիռներուն դեմ

Կիկոյին երգը մրմունջ սիրավար  
Աշուղի խռովը—զվայտության դեմ

Սույլ համբերատար  
Երբ վաղն է խավար—  
Փսիսուք գաղտնի որ չի հասուննար  
Կայրի ինքն իր դեմ

Կիկոյին երգը մռնչյուն արդար  
Բողոք մը վերջին—սահող կյանքին դեմ

Կիկոյին երգը լուռություն մարմար

Կիկոն ավարտվում է այնտեղ, որտեղից որ սկսվել էր: Կիկոն հեռացող, ավարտվող աշխարհն էր («Ջաղացքի հեքիաթը», «Մծեղի կարմանքը», «Աշուղի խռովքը») նոր ժամանակների դեմ, նա այնքա չի «հասուննար», այլ «կայրի ինքն իր դեմ»: Բանաստեղծության վերջին տողը (հրաշալի տողը) նաև Կիկոյի թեմայի ավարտն է: Այն Կիկոյի, որը ծնվել էր որոշակի ժամանակում, որոշակի սոցիալական դիմագծերով, Կիկոն այժմ կարող է ապրել որպես կիսաանեկզոտիկ-կիսալեզենդար պոետական մի պերսոնաժ, նրա սոցիալական տիպն արդեն անսխրունիկ է:

Սոցիալական հարաբերությունների բարդությունները ավելի որոշակի են դարձնում առաջին գրքից եկող մի քանի թեմաներ՝ ապոկալիպսյան տագնապը, անցավոր աշխարհի, կյանքի անիմաստության թեման, մարդու միայնության և մարդկային գոյության ողբերգականության զգացումը, բանաստեղծի դերն այս ունայն և անցավոր աշխարհում: Չահրատը մի պահ հիշեցնում է արևելքի և հայ միջնադարի բանաստեղծներին.

Որդը—որ կկրծե անվերջ կկրծե

Որդը—որուն համար կպարարտանան բոլոր մարդիկը  
կպարարտանան հույսերով ցանկություններով կիրքերով

Որդը—որուն պիտի երթամ օր մը ինքնպինքս հրամցելի

Որդը—որ կկրծե անվերջ առանց գիտնալու թե զով կկրծե

Որդը—որ բոլորին կսպասե նույն անտրոսկով

«Ինչնք Չարեի խրախուսու «Հանրակառքը», որտեղ նույնպես անցավոր կյանքի թեման էր՝ իրար հրմտող, կանգնելու, նստելու տեղ՝ որունդ մարդկանցով լի, ինչ-որ տեղ հասնող և կանգ առնող հանրակառքով խոր-

հըրդանշված: Սոցիալական անարդարության, ռեակցիայի պայմաններում այս փիլիսոփայությունը սոցիալական քննադատության հետ երբեմն զուգահեռաբար դրսևորվող պասսիվ պայքարի մի ձև է: Եվ եթե առաջին գրքում այդ զգացումն իսկապես միջնադարյան միստիցիվի որոշ երանգավորում ուներ, հիմնականում կյանքի և մահվան խնդիրների շուրջն էր դառնում, ապա «Բարի երկինքում» այն ավելի խորացած է, դարձել է աշխարհի կործանման սարսափ:

Քար չի բավեր քարկոծելու անջատ անշատ բոլորս ալ  
Կհավաքվինք նույն աշխարհին վրա ամենքով միատեղ  
Ու կսպասինք ահագնադորդ երկնաքարին որ չի գար

Արդյոք հուսահատությունն է սա: Չաիրառը երևույթներին արթուն նայող, պատճառաբանող է, հապիվ թե սարսափին հեշտությամբ կուլ գնա: Չարիքը նկատող մերկացնող բանաստեղծը հապիվ թե այդքան դժին վախճան խոստանա մարդկությանը: Չաիրատի բանաստեղծություններում հաճախակի երևացող այս տագնապը ճիշտ հասկանալու համար պետք է հիշել, որ նա այն պոետներից է, որոնք չեն հանդուրժում կեղծիքը՝ թե սոցիալական, թե էթիկական, թե էսթետիկական, նա հեռու է պատրանքներով ապրելու դյուրին միջոցից, ժառանգակի դժվարալույծ հանգույցները հորինովի հրճվանքով և սարքովի թախիծով չի կոծկում:

Վերն արդեն ասացինք, որ պրոտագորասյան հայտնի ասույթը՝ «Ամեն ինչի չափը մարդն է» Չաիրատի պոեզիայի հիմնական սկզբունքն է: Այս սկզբունքն է, որ նրա պոեզիայի սոցիալական սուր քննադատությամբ հագեցված գործերը փրկում է մերկ կոնտրաստներից և պարզունակ լուսնոգայությունից, որ «Նայունի» և «Գիշերապահի» անսովոր հնարքները հիմնավորում էր և հեռու պահում չինաստավորված բառախաղերից, որ, վերջապես, օգնում է բանաստեղծին թշվառության մասին գրելու հեզնանքով:

Չաիրատյան հումանիզմը տեղ-տեղ վերածվում է ֆոկլորային մարդասիրության կամ, պարզապես, ուտոպիայի: Չգացվում է որոշակի ավանդների բացակայությունը և բանաստեղծի ապրած իրականության սահմանափակ կողմերը: Թերևս դրանից է, որ Վաիրատյան հումանիզմը այդպիսի բևեռներով է արտահայտվում՝ սոցիալական սուր քննադատություն և

կյանքի ունայնության զգացում: Չարի բացահայտումը զուգորդվում է Չարի վերացման անկարելիությանը:

Սակայն հուսահատության զգացումն այնքան չէ, որպեսզի կարողանա իսպառ չեզոքացնել բանաստեղծի կենսասիրությունը: Այս երկու բևեռների միջև զգացվում է մի կարևոր մոտիվ՝ բանաստեղծի դերն այսօրվա աշխարհում և, վերջապես, սարկավալը, որ տեղ-տեղ նույնի է պրեվերյան «Գինյոլին» և «սև հումորին»:

#### 4.

«Երկնաքար» բանաստեղծության մեջ որքան որ ապոկալիպսյան մոայլություն կա, նույնքան էլ հումոր, որը կարծես մանկական անհոգությանը ծիծաղելի է դարձնում աշխարհի կործանման այդ սուգնապը և հուսահատության անիմաստությունը: Բանաստեղծության վերջին տողի վերջին բառերն արտաքուստ ոչինչ չունեն, եթե ոչ սովորական ինֆորմացիա այն մասին, որ ահուգողով «...կայասնք երկնաքարին որ չի գար»: Թաքնված հումորի կողքին դրված է կյանքի անհերքելի փաստը. ինչու՞ ողբալ աշխարհի կործանումը, եթե այդ երկնաքարը չի գալիս: Բազմաթիվ ողբերգությունների կեղծիքը, փքուն ծանրությունը քանդվում է մանկական մի հասարակ, ճշմարիտ և սրամիտ ռեպլիկի կողքին: Որքան որ աշխարհը առիթ է տալիս Չաիրատին «Սև երգեր» գրելու, նույնքան էլ լավատեսություն ասելու:

Գացեք ըսեք չար բաներուն որ չըլլան

Որ չըլլա թե պատահին...

Չար բաներուն բարև ըսեք մեր կողմեն:

Չաիրատը չէր կարող չժառանգել արևմտահայ գրականության մեծագույն հարստություններից մեկը՝ նուրբ հումորը, արդեն ծնունդով բնիկ պոլսեցի լինելը բավական էր այդ հումորն ունենալու համար: Պարոնյանական, Օտյանական բաց հումորը դարձել է աշխարհը բանաստեղծորեն տեսնելու միջոց: Այսինքն, ոչ միայն բաց, այլև թաքնված, տողերի, բանաստեղծության ամբողջ ենթատեքստում ներթոմված էություն: Սա հումորի դիապագոնի լայնացում է: Ոչ միայն պախարակող, մերկացնող, ոչընչացնող միջոց (ի դեպ, «Պարոնյան» բանաստեղծության մեջ տեսնում ենք,

թե պարոնյանական սատիրան այսօր որքանով է ոչնչացնող բոլոր նրանք, որոնց դեմ կովեց Պարոնյանը, այսօր «կնային հայելիիդ մեջ կմեռնին խնդալեն»): Այսինքն, այդ հուժորը դառնալով սատիրա, պահպանում է մանկական նախկությունը, անմիջականությունը: «Չար բաներուն» կարծես միամտորեն բարև է ուղարկում և խնդրում, որ չլինի թե հանկարծ պատահեն: «Չար բան» արտահայտությունը ինքնին մանկական մտածողությունից է գալիս: Մեկ հայտնի չէ, թե «Չար բանի» տակ բանաստեղծը որոշակիորեն ինչ է պատկերացնում՝ ամեն ինչ, որ կարող է խանգարել, դժբախտացնել մարդուն: Սա չնայած նման, բայց տարբեր է ֆոկլորային նախկ հավատից, երբ Չարը կյանքում հաղթում էր, բայց հեքիաթներում պարտվում: Այսօրվա Չարը ի վիճակի չէ վախեցնել բանաստեղծին, բայց և այնպես Չահրատը չի հրաժարվում հեքիաթի դեկորացիաներից, միֆի պայմանականությունից, և Չարը, ռեալ բովանդակությունից կրկնվելով, դառնում է մոլորախլիկացիոն պերսոնաժ, որին բանաստեղծը լուր է ուղարկում.

Երբ պատահին հեռու մնան մեր այս տաքուկ երդիքեն  
Համն ու հոտը խաթարելու չհասնին

Որքան որ «Չար բաները» մտացածին են, այնուամենայնիվ, բանաստեղծը մաղթում է, որ «հեռու մնան մեր այս պզտիկ աշխարհեն»: Իսկ «Պարոնյան» բանաստեղծության մեջ Չարը կարծես հարատևում է. սարսափելի, ծաղրանկարային և բանականության համար անհասանելի վիճակում ենք տեսնում հասարակության այն մոլախոտերին, որոնց փորձում էր սատիրայի ուժով ոչնչացնել Պարոնյանը: Պարոնյանական դաժան սատիրան կարծես անկոր, անօգնական և նույնիսկ անհեթեթ վիճակում լինի՝ ծիծաղելիները նայում են իրենց և ծիծաղում, բնավ չեն տուժում այդ սատիրայից, այլ «կմեռնին խնդալեն»: Հայելիների թագավորություն, որտեղ մեկը մյուսի անդրադարձն է, մեղավորն անհայտ է, գուցե անխնայատ է փնտրելը: «Նայլոնում» սարկավազը սկսվում է կենցաղային նատուրալիստական պատկերով և անսպասելի շրջադարձով դառնում արսուրդ, իրերի ֆետիշիզմը ծնում է մի անհեթեթ վիճակ՝ նայլոնե վարտիքներով ծառ: Կախարդական օղակը կարծես գալիս փակվում է. սոցիալական սուր քննադատություն, հուժոր, սատիրա, սարկավազ, գրոտեսկ, արսուրդ (հիմքում դարձյալ սոցիալական քննադատություն՝ իրերի կուլտը,

մարդու արժեպրկումը, երկվությունը), այնուհետև կյանքի ունայնությունից ծնվող անհուսություն, աշխարհի վերափոխման անկարելիությունից ծնված ապոկալիպսյան տագնապ: Եվ այս բոլոր սարսափները չեպզանում են բանաստեղծի կենսասիրության կողքին:

## 5.

Ֆրանսիացի բանաստեղծ Ռայմոն Բենոն գրում է Պրեվերի մասին. «Ի սկզբանե Բանն էր» կարդում ենք Հովհաննի Ավետարանում: «Ի սկզբանե գործն էր» ասում է Ֆաուստը: Պրեվերը նորից է ջնջում և ավելացնում. «Ի սկզբանե բաներն էին»:

Իսկ Չահրատի համար ամենից առաջ իրերն են, հետո նոր բառը, որոշակի վիճակը, հետո նոր բառը՝ բանաստեղծությունը: Մենք տեսանք, թե ինչպես էր բացում կարծրացած ալեգորիան, Կաղանդ Պապայի մոլորքը ամեն ինչից առաջ բառ է, որը հանդիպելով իրերի անհրաժեշտությանը կորցնում է իր պոետականությունը, նորից դառնում իր, այնուհետև ձեռք բերում նոր իմաստ:

«Rem tene, verba sequentur» («Իրը գտիր, բառը կհաջորդի նրան»), ասում էր Կատոն Ավագը, ասում է Չահրատի պոեզիան: Բանաստեղծը նախ և առաջ գտնում է իրը, էությունը, որոշակին: Իրերի՝ պոեզիա, թե՛ բառերի պոեզիա: Բանաստեղծն ընտրում է առաջինը: Մենք դուրս ենք գալիս բառերի իշխանությունից, մեկանից առաջ տեսնված, ստեղծված և զնահատված աշխարհների կապանքներից, բառաբանային պոեզիայի դյուրանքից և գնում դեպի իրերի պոեզիան: Դա մեկանից դուրս ելած պոեզիան է, մշտապես շարժվող և փոփոխվող: Իրերը և հավերժական շարժումը չէ, որ պիտի հարմարվեն բառերի հավերժական դեպոզիտին, այլ բառերը պետք է հետևեն և որսան իրերի դիալեկտիկան: Ստեղծագործական կենդանի այս սկզբունքն է, որ Չահրատի պոեզիայում կայուն, «սեփականացրած» բառեր չի ստեղծում: Նույն երևույթը, նույն ապրումը, նույն առարկան հարյուր անգամ կարող է գրավել բանաստեղծի ուշադրությունը, բայց հարյուրերորդ անգամ էլ կինչի այնպես, ասես բանաստեղծը նոր նկատեց: Ընդհակառակը, Չահրատի և Խրախունու մոտ նկատվում է մի սկզբունք. բանաստեղծական շարքերը կառուցել ծանոթ սխեմաների շրջանակների մեջ, ծանոթ իրերին և երևույթներին նոր իմաստ տալ: Օրինակ՝ Չահրատի «Նախաքերթվածներ» և «Աղյուսակ» շարքերը,

որտեղ նախապես հայտնի թեման նորից «ստուգվում» է կյանքի փաստով, նոր իմաստ ստանում: Բառերի և իրերի մշտական հակամարտությունը հրաշալի է ներկայացված Չահրատի «Մայմուն» բանաստեղծության մեջ:

Մայմուն որ կըսեմ կապիկ չկարծեք  
Տան սև փիսիկին անուռն է  
Փիսիկ որ կըսեմ ազվոր չկարծեք  
Աշխարհիս ամենն տգեղ կատուն է

Սև է որ կըսեմ սեփսև չկարծեք  
Սևությանը մեջ աչքերը դեղին են  
Դեղին որ կըսեմ արև չկարծեք  
Արևը մեկ է—աչքերը երկու են

Երկու որ կըսեմ զատ զատ չկարծեք  
Երկուքին խորն ալ երազը մեկ է  
Երազ որ կըսեմ մեծ բան չկարծեք  
Մարդու մը կողմն սիրվին է

Բանաստեղծն այստեղ հոռմեական ստույթը կարծես մասնավորաբար շրջել է: Իրերն են հաշորդում բառերին, զալիս ճշտում են բառերի իմաստները: Մայմունը պարզվում է, որ կապիկ չէ, փիսիկը տգեղ է, իսկ երազն էլ ընդամենը «Մարդու մը կողմն սիրվին է»: «Եղինակը կարծես շարունակ հիասթափեցնում է ընթերցողին, սուռն է մեկը, բայց պարզվում է, որ ուրիշ բան նկատի ունի: Եթե շրջենք այս բոլորը, բանաստեղծությունը հապիվ թե պահպանի իր հմայքը: Պոեզիան հենց այս անսպասելի բացահայտումներն են, այս «շրջուն շարադասությունը»:

6.

Բանաստեղծի և պոեզիայի դերի մասին Չահրատը շատ տողեր ունի: Աշխարհի վերափոխման անկարելիության անհուսությունը և ապոկալիպսյան տագնապը չեն խանգարում նրան այս «եզական աշխարհում» բանաստեղծին մեծ առաքելությունը ընձեռնելու: Առաջին ժողովածուի մեջ

այս թեման հստակորեն չի երևում: «Մեծ քաղաքում» Չահրատը դեռ հանգիստես է:

Իսկ ես այսպես հանդիսատես կմնամ

Նա դեռ վննում է իրականությունը, նա իր «թաղի քերթողն» է և տաղերի միակ հարստությունը «թաղեցիներու հոգերն են»: Նա դեռ ուտոպիկ երազներ ունի, բանաստեղծի անձնագիտության կարիքը դեռ չկա: Սակայն «Բարի երկինքում» բանաստեղծը գործող անձ է դարձել: Ավելի քան տասնհինգ բանաստեղծություն, որոնցում պոետը համեմատվում է ամեն ինչի հետ: Նա ալքիմիկոս է, որ տարրադադրում է բոլորի սերերը, պատրանքը և հույսը, պոետը նոր տող է, «որմե վեյջ ամեն կյանք // Երջանկության կնայի»: Պոետը յուրի կաթիլ է մարդկային ծովի երեսին, իսկ ծովը նրա սրտում է, անջրպետի լարախաղացն է, ոք աստղից աստղ է թռչում, հետո իջնում իր կորսված մարդկությունը մուրալու, նա բոլորի դեսպանն է և այլև, և այլև: Այսպես անվերջ, բազմատեսակ և անսպառ է պոետը, նա ամենուր է, նա ամեն ինչ է: Միայն իրերը չեն, որ խորհրդրանջում են բանաստեղծի ծրագիրը, յուրատեսակ խորհրդանիշ է դառնում ինքը պոետը և պոեզիան: Անձնագիտության, լույսի, պատրանքի, սպասումի, անոջումի, սիրո... մի խոսքով, այն ամենի խորհրդանիշը, որով ապրում է մարդը:

— Համաձայն ձեր ամենակալ օրենքին

Պետք է կամ խուլ անջարժությամբ կանգնիլ-փրկել ամեն չափ

Եվ մնալ մեծ պանզավածիդ կշիռքով—

Կամ լույս դառնալ և անհետիլ տիեզերքին մեջ իսպառ

— Իսկ քերթողներն այդ վառ լույսն են անկորուստ—

Այսպես է որակում հանձարեղ գիտնականը բանաստեղծական սխրանքը «Պարոն Այնշթայն» պրույց-բանաստեղծության մեջ, այսպես է պատկերացնում Չահրատը բանաստեղծի դերն այսօրվա աշխարհում:

7.

Մենք ազգ իր ձևով է կորցրածը վերադարձնում: Հայ ժողովուրդը միշտ ձգտել է նյութական փոխհատուցման հետ ավելի շատ հոգևոր վերելքով վերադարձնել կորուստները: Տեսնել սեփական ժողովրդին աշխարհի

առաջավոր ազգերի հետ հավասար, ապրել հոգևոր. նույն մթնոլորտում, դառնալ մարդկության առաջավոր զաղափարների պաշտպան: Ֆիզիկապես և բարոյապես տուժած ազգերը որքան որ ցավով են զգում իրենց կորուստը, նույնպիսի ահագնությամբ էլ ձգտում են վերադարձնել հոգևոր այն առաջնությունը, որ ունեցել են ժամանակին, այլապես անցյալի անվերադարձ կորստի գիտակցությունը օրեցօր ավելացնելու է աշխարհի մեծ գործերից ետ մնալու ցավը, որը մեծ մասամբ հակառակ ձևով է դրսևորվում ինքնամոխիում, անտարբերություն դեպի համաշխարհային պրոգրեսը: Իսկ ազգային ցավերը եթե ծնվում են մի քանի օրվա մեջ, ապա շատ հաճախ բուժվում են դարերի ընթացքում:

«Այդ ձգտումը՝ հասնելու միջազգային մակարդակին, շարունակ աշխարհի ռիթմով ապրելու՝ կարող է հիվանդագին դրսևորումներ ունենալ, դժվարին խնդիրներ դնել բանաստեղծի առջև, հատկապես բանաստեղծի, քանի որ քերթության արվեստը որքան որ սիրում է հեղաբեկումներ, անսովոր, չլաված գյուտեր, նույնքան էլ ի վիճակի է բառի գաղտնիքների մեջ խորանալու անպատրաստ ընթերցողին ընդմիջտ կամ երկարատև թշնամացնել պոետական նորարարությանը: Արդիական լինելու թուլջանքը սուղորեցնող է և վտանգավոր, դրա համար պետք է լինել մեծ տաղանդ, որպեսզի կարողանա խոսել բոլոր ժամանակների ընթերցողների հետ:

Լև Տոլստոյը Գանդիի առիթով ասում է.

«Որքան լայն ու խորն է միտքը, նույնքան անսահման են այն հայրենիքի սահմանները, որին պատկանում է այդ միտքը»: Չաիրատի պոեզիան ձգտում է այդպիսի անսահմանության:

**Ալեքսանդր Քոփչյան**

Մ Ե Մ Բ Ա Ղ Ա Բ Ը

(1960)

ՄԵՄ ՔԱՂԱՔԸ

Ամեն ինչ մեծ է մեծ քաղաքին մեջ  
հաճույքը մեծ  
ցավը մեծ

պողոտաներուն ու շենքերուն նման

Ու անոնք որոնք պպտիկ մարդիկ են  
Երբեք հանդարտ պիտի չըլլան մեծ քաղաքին  
մեջ

Բ Ա Ղ

Ես իմ թաղիս քերթողն եմ  
Լեզուս աղքատ է թաղեցիներուս նման  
Տաղերուս միակ հարստությունը կկապմեն  
Թաղեցիներուս հոգերը

Կսիրեմ թաղին բնակիչները  
Անոնք լիալուսինը չտեսնելու չափ կույր  
Չեփյուռին երգը չխանալու չափ խուլ են  
Համր են անոնք  
Իրենց ապագային մասին խոսիլ չկարենալու չափ  
Իսկ ես աղքատ լեզվովս կրնամ երգել Օրփեոսի նման  
Որովհետև պատկերներս ունին թաղեցիներուս երապները  
Գույն գույն երապները  
Լույս լույս երապները

Նորածինին նման գոց մի պահեք—բարեկամներ—ձեր աչքերը  
Ամեն թաղ իր երապը ունի  
Ամեն մարդ իր երապը ունի  
Օր պիտի գա—պիտի տեսնեք  
Ամեն ինչ իրական է դարձեր  
Ավելի առույգ պիտի երգեն ոչ միայն քերթողները  
Այլ բոլոր մարդիկը միաբերան

### ՇՈՒՆԱՎ

Բարեկամներ—սա անձոռնի շոգենավին  
նայեցեք

կայներն ի վար  
կայներուն թեներն ի վար  
մեր հապար տեսակ արկանքներն են կախվեր

Բայց անտարբեր ծովու մը վրա  
շոգենավը կքալե  
կքալե ու կքալե

Հեռվեն տեսնողները տոն է  
դրոշապարոպեր է շոգենավը—կըսեն—  
հեղ մըն ալ նավապետին հարցուցեք

Բայց անտարբեր ծովու մը վրա  
շոգենավը կքալե ու կքալե  
անոր կայներն ի վար  
կայներուն թեներն ի վար  
մեր հապար տեսակ արկանքներն են կախվեր

Բարեկամներ—սա անձոռնի շոգենավին  
նայեցեք

### ՄԻ ԼԱՐ ԼՈՒՅՍ ՄԻ ԼԱՐ

Մի լար լույս մի լար  
Երկինքեն ինկողը չի լար

Մի լար թե աղքատի տուն ինկար  
գլխու վրա է տեղդ

Մի լար լույս մի լար  
Գետնահարկ չինկող լույսերը թող լան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆՐԱԿԱՌՔՈՎ ՀԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԸ

Տասը դրուշ է կըսեն—կնստի  
Կերպէն—կուպէն որ հեռուններն երթա  
— Ուր—ով գիտեն—  
թերևս ետ մանկության տարիներուն  
թերևս առաջ հուսացած օրերուն

Բայց հանրակառք է այս—գիծեն դուրս չելլեր  
Բայց հանրակառք է այս—գիծեն դուրս չելլեր

ԱՆՁՐԵՎԸ

Թյունել չեք կրնար նստիլ  
Հեք անձրևի կաթիլներ  
Պատերազմի հարուստի տուն չեք կրնար մտնել  
Փարթամ տան տանիքը չի վապեր որ

Ես և նմաններս զձեզ կսիրենք  
Առատություն կբերենք  
Հացին քիտն կածաննա

Սակայն քուն ունիմ  
Գոնեն բարձիս վրա մի կաթիք

ՄԵՎԵՏ ՊԵՅ ՓՈՂՈՅԸ

Սալարկեցին Մեհմետ Պեյ փողոցը  
Մայթեր շինեցին  
Հիմա Կարապետ  
Չի գիտեր մայթե՛ն քալե թե մեջտեղեն

Ամեն օր—առտու երեկո  
Կարապետ անցնելու է Մեհմետ Պեյ փողոցեն—  
Տխուր է Կարապետ  
— Անիկա մեկ մեկ կճանչնար  
Փոշիի հատիկները հին Մեհմետ Պեյ փողոցին  
Որք մնացին իր հողաթափերը  
Կարապետին հողաթափերը սալահատակին վրա շմորուն

Սալարկեցին Մեհմետ Պեյ փողոցը  
Մեղք ըրին

ՆԱՄԱԿ

Քաղաք—պողոտաներուդ ձեռքերեն կհամբուրեն  
Անոնց յայնքին երկայնքին մեջ մեծցեր եմ ես  
— Եթե ճիտս ծուռ է մնացեր իրավ որ հանցանքը իմս չէ  
Պողոտաներեդ պերճանքը պերճորեն կվապեր  
Ես չէի հասներ

Քաղաք—լամբարներուդ լույս երեսը սիրեմ  
Լամբարի մը տակն էր համբույրս առաջին  
Համով աղջիկ մըն էր երպն աչքերուն մեջ  
Հիմա եթե բաժնվեր ենք իրարմե շատոնց  
Լամբարն ինչ ընե

Քաղաք—օր մ'ալ կուգամ հարկավ թուշս դնել մայթերեդ մեկուն  
Կարոտս առնել—անցած օրերու մենությանս վրա բալ  
Անցորդներուն վրաս խղճալու առիթը տալ իբրև ողորմություն  
Եվ այդպես կենալ կենալը մոռցած

Քաղաք—գիշերանց երբ նորեն լույսերդ վառին ու  
տանիքներեն վեր  
Գույն գույն մառախուղ մը տարածվի—երբ ամեն ինչ նիրհե  
Դուն պանդուխտ տղադ Չահրատը մի մոռնար  
Հարցնողներուն բարև ըրավ ըսե

## ՄԱՐԴՈՒ ՄԻՍ

Երբ երկու կողմը շենքեր շինեցին  
Փողոցը ծնավ

Մեծ էին շենքերն—այնպես հոյակապ—որ երբ հարցուցին  
Փողոց չեմ ըսավ—պողոտա եմ ես

Եվ ալ ամեն օր մեծ մարդիկն ըսես թե ինքնաշարժերն  
Իրենց շքեղությամբ կայն փայփայելեն անցան ու գացին

Փողոցը կրեց հուսանքն, այդ հարուստ—պարդերն այդ փարթամ  
Իր մորթին վրա—գոհարներու պես

Կարծես ամեն ինչ—արագ ու փայլուն—տոնական էին  
Պերճանքը ճանչցավ

Եկան ու գացին—հետքերն ալ տակավ կորսվեցան միշտ  
Մեկ բան չմոռցավ

Թե օր մ'ալ մարդ մը բուպիկ ոտքերով անցավ տատամտու  
Այդ օր պողոտան մարդու միս ճանչցավ

## ՎԵՐՉԱԲԱՆ

Այսպես քաղաքը քանի կմեծնա  
Քաղքին մեջ այնքան կպպտիվնանք մենք  
Մեր խրոխտ ետերուն սովերը միայն  
Կմնա մեծ մեծ շենքերուն ոտքին

Մեծ մեծ շենքերը քանի կշատնան  
Քաղաքն ալ այնքան մեծի հով կառնե  
Ու մեծ քաղաքին մեծության առջև  
Քիչ մ'ալ պպտիկցած մենք ակնածանքով  
Կնայինք մեծ մեծ շենքերուն—անձար  
Մեր հին մեծության վախճանը կուլանք

Օրե օր քաղաքն այսպես կմեծնա

**ԿԻԿՈ ԿԱՄՈՒՐՋԻՆ ՎՐԱ Է**

Կիկո կամուրջին վրա է  
Շոգենավը տյուր կընէ կերթա  
Կիկո բապրիքին հենած կնայի

Ամեն շոգենավ գալուն Կիկո կուրախանա  
Կամուրջին վրա է Կիկո  
Քիթը վեր վեր կքաշէ  
Մարդիկ կուգան—մարդիկ կերթան  
Կիկո կամուրջին վրա է

Շոգենավը տյուր կընէ կերթա

Քաղաքին այդ կողմերը օտար էին Կիկոյին  
Բարձր բարձր շենքերը օտար  
Մարդիկը—գեղեցիկ կիները օտար

Գոզնոց հազած աղջիկ մը եկավ  
Հինգ դրուշ դրավ ափին—  
Օտար էին մարդիկը—օտար—  
Կիկո մուրալու չէր ելած

**Թ Ա Ղ Ը**

Բոլոր տուները իրարու կնամանին  
Բոլոր տնեցիներն իրարու  
Խորթ աչքով մի նայիք Կիկոյին  
Ան իր թաղին մեջ ՄՅՈՒՍՅՈՒ ԿԻԿՈ Է

Թաղն ըսես թաղի չի նմանիր  
Տունն ըսես տունի չի նմանիր  
Կիկոն ըսես Մյուսյուի չի նմանիր  
Ասիկա տարօրինակ աշխարհի մըն է

Ունի չունի թաղը փերեգակ մ'ունի  
Ունի չունի հինգ վեց ճախարակ ունի  
Թաղեցիներն ըսես տուն ունին տեղ չունին  
Ունին չունին գեշ աղեկ գործ մը ունին

Սակայն խորթ աչքով մի նայիք Կիկոյին  
Ունին չունին գեշ աղեկ գործ մը ունին

### ՍԵՐԵՆԱՏԻ ՊԵՍ

Բարի սիրուհիի մը նման  
մառախուղը թևերուն մեջ է առեր Կիկոն  
Երբ ամենուրեք խոնավ է գիշերանց  
խոնավ—կայմերը կամ Կիկոյի հիշատակները—  
պետք է բոլոր լամբարները մտերմաբար բարևել  
պետք է փայփայել Կամուրջին բազրիքները  
հետո կծկվիլ մառախուղին ծոցին

Մառախուղը—բարի մառախուղը որ թևերուն մեջն է առեր  
ամեն ինչ

ամեն ինչ—կայմերը Կոպիները կամ Կիկոն  
բարի սիրուհիի մը նման կըսես  
Ի՞նչ բան կա ավելի հավատարիմ  
քան մեծ վիշտ մը—առանձնության մեջ—

— Կիկո կերպե—

Բարի սիրուհիի մը նման  
մառախուղը թևերուն մեջ է առեր Կիկոն

### ԱՎԵՏ ԷՖԵՆՏԻ ՓՈՂՈՅԸ

Կիկո կվախնա Ահմետ էֆենտի փողոցն անցնելու  
Ահմետ էֆենտի փողոցը մութ է  
Մութին համբուրվող կույզեր կան

Կիկո կվախնա Ահմետ էֆենտի փողոցն անցնելու  
Իր առանձնությունը միտքը կիյնա

### ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Երկինքն մուչինաներ\* կիյնան  
Ծառերն մուչինաներ կիյնան  
Բարձր բարձր շենքերն  
Կիկոյի մանկության օրերն  
Սալահատակի քարերն մուչինաներ  
կցատկեն

Մուչինա մուչինա  
Մուչինաները բոլորը մեկ Կիկոն  
կծափահարեն

— Գույն գույն կարկտան  
Երկու մատ մորուք  
Կիկոն մուչինա են կարծեր—

\* Մուչինա—դիմակ (թուրք.)

**ԴԻՄԱԿԱՎՈՐ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ  
ԿԻԿՈՅԻ ԵՎ ՄԱՐԴՈՅ ՀԱՄԱՐ**

Խնդացող մարդու դիմակ մ' է առեր  
Զրկանքով բռնված դեմքին անցուցեր  
Եվ ինքնավստահ  
Աղվոր օրերուն գալուն սպասեր

Խլեր այնպիսի անհուն կարոտով  
Դիմակն—ուժգևորեն երեսն անցուցեր  
Դիմակին ծիծաղն երես է ելեր

Ու Կիկո հիմա  
Ծիծողն կեցեր իր օրերուն առջև  
Համարձակորեն  
և ուրախացեր և ուրախացեր

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ**

Դուռը բացի որ Կիկոն էր—հրաման ըսի—նստեցանք  
Կիկո ըսավ թե շատ կարոտցեր էր պիս  
Ես ըսի թե շատ կարոտցեր էի պինք  
Հետո խորհեցա թե պինք որքան շուտ մոռցեր էի  
Հետո խորհեցա թե պիս որքան շուտ մոռցեր էր ինք

Ըսի որ ավելի հաճախ կուզեմ տեսնել պինք  
Ըսավ որ ավելի հաճախ կուզե տեսնել պիս  
Որոշեցինք ավելի հաճախ տեսնել զիրար  
Գնաց—դռան մեկ կողմն ես—դռան մյուս կողմն ինք—  
Արդեն իսկ զիրար մոռցեր էինք

**Ո Խ**

Միտքը գրեր է Կիկո  
Պիտի չմեռնի

Դուք բոլորդ պիտի մեռնիք  
Աշխարհ Կիկոյի պիտի մնա

Ու Կիկո աշխարհի վրա միսմինակ  
Բոլոր հայելիները պիտի կոտորե

**ՄԴՐԻՓ—ԴԻՉ**

ՆԱև հազվի պետք է  
ՀԵՏՈ արվեստով հանվելու համար

Կիկո արվեստը սորվեր է ՇԱՏՈՆՑ  
ՀԻՄԱ հագուստին կապասե

## ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կիկո աչքերուն ակնոց է առեր  
Ուր որ կնայի կապույտ կտեսնե  
Երկինքը կապույտ—ծովերը կապույտ  
Սիրած աղջկան աչքերը կապույտ  
Ուր որ կնայի կապույտ կտեսնե

Ակնոցը քթին չորս դին կնայի—  
Կըսես ծովերը կապույտ էին միշտ  
Կըսես երկինքը կապույտ էր արդեն  
Չի հավատար որ—նոր տեսա կըսե  
— Ակնոցը քթին չորս դին կնայի

Կիկո աչքերուն ակնոց է առեր  
ՀԻՄԱ կապույտը կապույտ կտեսնե

## ԱՐԿԱԾԱՆՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Կիկոյի միտքը ման կուգա քաղաքե քաղաք  
— Կիկո աշխարհի մասին կխորհի—

Կիկոյի միտքը կսավառնի մոլորակե մոլորակ  
— Կիկո կմտածե արեգակնային դրության վրա—

Կիկոյի միտքը կճախրե աստղե աստղ  
— Կիկո տիեզերք մը կերևակայե

Լույսեն ալ արագ  
— Կիկոյի միտքը կուզե սլանալ ավելի անդին

— Կմոլորի—չի կրնար  
Չրի ճամփորդելն այսքան

## ԿԻԿՈ ՄԵՌԱՎ

Բացօդյա շատ պառկեցավ  
Թող քիչ մըն ալ հողին տակ քնանա

Հանգիստ իր կոշիկներուն

## ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Հողը շատ կսիրեր—  
Երկինքեն ինկած աստղի մը պես էր Կիկո  
Կուզեր գիրկ գիրկի պառկիլ հողին հետ  
Կուզեր հողը գրկել—գրկել հիանալ  
մեռավ—հասավ մուրատին

Սակայն—չեմ գիտեր ինչու—աստղերը կուլան  
Կամուրջը կուլա  
— Ողջությանը Կիկո ուրիշ մտերիւք չունեցավ—

**Ձ Ե Ր Ո**

Մեկ անգամ մեկ մեկ  
Մեկ անգամ Կիկո վերո

Երկու անգամ մեկ երկու  
Երկու անգամ Կիկո վերո

Տասն անգամ մեկ տասը  
Տասն անգամ Կիկո վերո

Հարյուր անգամ մեկ հարյուր  
Հարյուր անգամ Կիկո մենք

Ցավը մեկ չէ—վիշտը մեկ չէ—մեկ չէ  
կրկանքը—մեկ չէ  
Լավ որ դպրոցը համրել ենք սորվեր  
Եկուր սիրելիս—սիրտերը մեկ են  
Արհամարիել ենք սորվեր

**Ե Ր Կ Ո Ր**

Երկնքին մեջտեղ—արևուն պոչին—  
Խոշոր—շատ խոշոր «Երկու» մը գծեմ  
Արյունով գծեմ—քրտինքով գծեմ  
Հոգ չէ—թող խոշոր «Երկու» մը գծեմ  
Այս առանձնության վերջն եկավ ըսեմ

**Ե Ր Ե Ք**

Երեք աղջիկ նստեր երազ կիյուսեն

Անոնց պատիկ պատիկ կատուներ տվեք  
Ձեպի կատուներու բանակ մը շինեն  
Անոնց հատիկ հատիկ խաղողներ տվեք  
Ձեպի հոյակապ ողկույզ մը շինեն

Երեք աղջիկ նստեր երապ կհյուսեն

Անոնց տարբեր տարբեր երապներ տվեք  
Ձեպի անպարագիծ տիեպերք մը կերտեն  
Դուք անոնց ձանձրույթ ու գրկանք տվեք  
Հղկեն ներկեն ձեպի արեգակներ շինեն

Երեք աղջիկ նստեր երապ կհյուսեն

### Չ Ո Ր Ս

Չորս ծագերեն չորս տեսակ հով կփչե  
Ականջ տվեք—գինովցեք  
Ու թողեք թող արևն երթա հորիպոնեն անդին  
— Հորիպոնեն անդին ալ արևուն սպասողներ  
կան

### Հ Ի Ն Գ

Հինգ տարու էր—դեռ խլինքը քիթեն կախ  
Տեղը կըներ կատուկեր Մելինեն  
Տասնհինգին նայոն գուլպա կհագվեր  
Թաղին տղաքն ախ քաշեցին պարապ տեղ  
Անոր սիրույն իրարու շատեր դանակ քաշեցին  
Մելինենին հոգը չէր  
Մեկ բան գիտեր—կբավեր  
Գիտեր թե հինգ տարու չէր

### Վ Ե Ց

Վեց երեսով խորանարդ  
Ամեն մարդու գատ երես  
«Ես»ս խորանարդին մեջ  
Խորանարդին դուրսը ես

### Յ Ո Թ

Յոթը պորտս յոթը գույնով դեմքիդ սիրահար  
Ծիրանի գոտի  
Շատ մի պարծենար  
Ես ներսիդիս քեզ պես հարյուր հատ ունիս

### Տ Ա Ս Ը

Տասը տողով տասը մարդու տասը տեսակ վիշտը կերգեմ  
Տասը տողով տասը մարդու հարյուրներու հապարներու  
Տասը վիշտը հարյուր վիշտը հապար տեսակ վիշտը կ'երգեմ  
Հարյուր վիշտը հապար վիշտը հարյուրներու հապարներու  
Տասը տողեն ամեն մեկ տող տասնապատիկ վիշտը գիտե  
Հապարներու հարյուրներու տասը մարդու կամ մեկ մարդու  
Ու մեկ մարդեն հապար մարդու տասը տողով վիշտը կերգեմ  
Տասը տողի մեջ իմ վշտիս տասն երեսակը թափելով—  
Հարյուրներու հապարներու վիշտն երգելեն հապար տեսակ  
Տասը տողեն վերջին տողին ես իմ վիշտերս ալ կմոռնամ

1

Կիկոն երկնքեն թելով մ'են կախեր  
 Կիկոն ուր—թելին ծայրն ով գիտե ուր—  
 Խեղճովը Կիկո ապրիլ է եկեր  
 Կիկոն ուր—թելը խաղցնողը ուր—

Թելին ծայրն արդեն կորսնցուցեր է  
 Թելով մը կախվեր Կիկո երկնքեն

2

Օր մ'ալ երկու թել իրար են եկեր  
 Մեկ թելին ծայրը Կիկո—մյուսինն ես—  
 Այսպես թել-թելի—թել թել սրտերով  
 Մտերմացեր ենք

3

Օր մ'ալ անհաջիվ  
 Թելեր միացեր իրար են եկեր  
 Իրար խառնվեր հանգույց են շիներ  
 Ու վերեն երկինքն ու վարեն ալ մենք  
 Չուր տեղ հանգույցը քակել ջանացեր  
 Այսպես ես ու դուն մեկ մեկ թելի ծայր  
 Թելին ծայրն արդեն կորսնցուցեր ենք

ԼԱԳՏԵՐՆԵՐՈՒ ԳԱԼԼԱՏԸ

Մութ գիշերներու մեջ, լույսի նշան՝  
 Լապտերներ կօծտեն երկինքն անբընակ,  
 Իրենց ճոխությանը, պերճանքով լըման,  
 Կշինեն շողի խուրձ մը բոլորակ:  
 Առկախ երկաթյա ձողն մ'ոսկեման,  
 Ապակյա, փոշոտ կոներ՝ իրենց թագ,  
 Մառախուղի շերտ մ'իրենց պատմուճան՝  
 Ահա, կմարին, վառին շարունակ:

Երգելն կանցնի հովն ամեն վայրկյան,  
 Թնին տակն՝ ուրիշ լույսերե նամակ,  
 Վերը, գմբեթին հապար աստղեր կան,  
 — Խայտաբղետ անհուն մը լուսաքանդակ,  
 Հազար լապտերի աշխարհի հրաշապան—  
 Լապտերներ՝ չքնաղ ու կաթնասպիտակ,  
 Մանրը լապտերներ՝ գեղով մ'աննըման,  
 Ահա, կմարին, վառին շարունակ:

Դեռ կառկայծի այդ լույս-լեռնաշղթան,  
Երբ խոլ ցնձատոն մ'այտերուն լավակն՝  
Ըլլան գիշերներ, ուր մե՛ծ լուսընկան,  
Փառահեղ մուտքովը երկնավլուտակ,  
Դանդաղ՝ կընթանա իր փառքին ճամփան,  
Քայլ քայլ հիացո՛ւմ սփռելէն համակ,  
Ու պենիթին՝ իր ցուքերն օրհնաբան  
Ահա՛, կմարին, վառին շարունակ:

#### ENVOIR\*

Մենք կապրինք մեր կյանքը ճրագ ճրագ,  
Աստղ աստղ՝ հոս ու հոն նետված ցի՛ր ու ցան,  
Օտար՝ իրարու, լքված, միայնակ,  
Երբենն՝ երբ անցնի հովն եղբայրության,  
Մեր-լուսընկային աչքերն անուշակ  
Ահա՛, կմարին, վառի՛ն գոհունակ:

#### ԵՐԳ ՃՐԱԳՆԵՐՈՒ ՎՐԱ

Կես-մութ—ճրագներ մեկ մեկ կվառին,  
Գիշերանց վառող լույսեր հաղթական,  
Գիշեր.— աղամանդ կիյնա քաղաքին,  
Օ՛ մեկ մեկ վառող լույսեր գիշերվան:

Ու բարակ ըստվեր մը թողած մայթին՝  
Միայնակ մարդիկ ման կուգան խոհուն,  
(Չորս դիեն՝ մըռայլ երգեր կըկաթին),  
Կնային տարտամ մութ փողոցներուն:

Վերըստին խոկալ կսկսին, հեռուն  
Նոր նոր ճըրագներ մեկ մեկ կ'ավելնան,  
Առանձին մարդիկ կան փողոցներուն,  
Կըկարդան լուտանք՝ պպիր մենության:

Կես-մութ.—ճըրագներ մեկ մեկ կվառին  
Հըպարտ վեր ցցված պատըզամներուն.—  
Կան, որոնք կարոտն ունին ճըրագին,  
Որ ցուք կթափե տան մ'անդամներուն:

Օ՛ մեկ մեկ վառող լույսեր գիշերվան:

#### ՄԵՌՅԱԼ ՊԱՐ

Դեղին լուսին մը դեղնած՝ դեղին լուսնի մը նման,  
Կան դամբաններ լուռ ու մունջ՝ դամբաններու լուռությամբ,  
Չորս դին միջոցն ընդարձակ միջոցներուն անսահման,  
Քարերեն վեր կցցվին ցից ցից քարեր—Ամպեր՝ ամպ...:

Արի՛,— երազն է՝ կանցնի կարկաչներով մանկունակ,—  
Ի՛նչ գեղեցիկ է պարթևու պահ մը, նիրհել վերստին,

\* ուղերձ (ֆր.)

Է՛, երբ արթուն կոփտես, որ հեշտ քայլեր՝ թըխորակ  
Անույշ աղջիկն՝ իր գաղտնի ժամադրության կտանին:

Հետո՞... լուսինը կրկին՝ դեղին լուսնի մը նման,  
Ու դամբաններ լուռ ու մունջ՝ դամբաններու լուռությամբ,  
Չորս դին միջոցն ընդարձակ միջոցներուն անսահման,  
Քարերն վեր ալ ցցված՝ ցից ցից քարեր.— Անպեր՝ անպ...:

### ՌՈՆՏՈ ԳԱՐՆԱՆ ՎՐԱ

Կաքավ կաքավ կաքավիկ  
Լայնջի լուսնակ լար մահիկ  
Պարող պարիկ պարով պար  
Ձեփյուռ բարբառ լույս բարբառ  
Ցող ցող այգուն խոնավիկ  
Շող շող արփին խամաճիկ  
Բարունակե բարունակ  
Երպ տաղ տաղ մանկունակ  
Շորիկ շորիկ խատուտիկ  
Շոգ շոգ երկինք կապուտիկ  
Մպփոջ շյուղ շյուղ մանուշակ  
Աղվոր աղջիկ անուշակ  
Մարգին մարմանդ պար արտին  
Գառին եզան պարարտին  
Շող շող արփին խամաճիկ  
Կաքավ կաքավ կաքավիկ

### ՄԻՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սև հագնիմ

Անպ հագնիմ անձրև հագնիմ  
Ցավը սրտիկս է այրեր  
Աշնան չոր տերև հագնիմ

Հուր ժողվեմ

Իմ սիրածես լուր ժողվեմ  
Հուրը գողնան ու երթան  
Ես նստիմ փրփուր ժողվեմ

Լուռ քալեմ

Ցավը սրտիս ծուռ քալեմ  
Երբ հանդիպիմ սիրածիս  
Ալ հարց չտամ ու քալեմ

Լույս իյնա

Աչքերուն թող լույս իյնա  
Այդ աչքերովն երբ նայի  
Նայվածքը հոգվույս իյնա

Հով ըլլամ

Հովուն պես գինով ըլլամ  
Սիրտս կարնե խենդի պես  
Երբ սիրածիս քով ըլլամ

**Տուն ըլլա**

Իմ սիրածս հոն ըլլա  
Ծաղիկը շուտ կթոռմի  
Սիրածս կոկոն ըլլա

**Գինի տամ**

Մարդ չտեսնե գաղտնի տամ  
Վարդ այտերը կարմրնան  
Համբուրեմ երանի տամ

**Տուն մտնեմ**

- Տան սեմեն ժպտուն մտնեմ  
Գլուխս դնեմ ուսին  
Ու երջանիկ քուն մտնեմ

**Երապիս**

Աստղ մը գա նստի սապիս  
Ես այդ սապով տաղ ըսեմ  
Աստղերը թող լսեն պիս

**Յար ըսեմ**

Սիրածիս գոհար ըսեմ  
Թե մեռնիմ լա ետևես  
Ողջնամ մի լար ըսեմ

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

Լուսին գիշերով  
Կոեգերինք կծկված մեր պատյաններուն մեջ  
Երազները թն կառնեն—խույս կուտան պատյանեն դուրս  
—կգունատին

Ներսը տրտունջք մը կմնա մեզի

Արյունած ավերով  
Կմագցինք կյանքն ի վեր  
Միշտ տխուր հրածեշտ մը գանիկի պես կախված մեր  
շրթներեն

Մնաս բարով մը՝ տակավին չապրված սերերուն

Ու հարց կուտանք—ինչու լացիր, ինչու կուզանք

ՆԱԽԱԿԱՐԱԳԵՏ

Ճամփա բացեք—կտրիճս կուգա—հեյ

Կիկոն է—տոնական պգեստ է հագեր—  
Մահիկ ասեղ  
Ասուպ դերձան է առեր  
ամենօրյա լաթերուն

Երազ երազ կարկտան  
լուսին կոճակ է կարեր  
Բոլորը մեկ արևներով արդուկեր

Տիկիններ—Օրիորդներ—Պարոններ  
Ճամփա բացեք—կտրիճս կուգա—հիյ

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Պատին վրա մահապղներ կան փակցված  
Մեկը կուգա—մեռնողներուն կնայի  
Իր անունը կփնտռե

ՆԱԽԱՀԱՐՉԱԿ

Իրավ է թե ակնթարթի մը չափ իսկ  
տարբերություն չկար—բայց

Իմ մենության պահերուս  
Ես կսիրեմ դեռ խորհիլ

Թե այդ գիշեր երբ շատոնց  
Մարեր էին լույսերը մեծ քաղաքին

Նախ դո՛ւն էիր թե նախ ես  
Իր շրթները անուշորեն երկարող—

Իրավ է թե ակնթարթի մի չափ իսկ  
տարբերություն չկար բայց—

## ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅՈՒՆ

Գնաց շիշ մը հուսախաբություն բերավ  
Լեցուց գավաթ գավաթ—բաժնեց  
խմեցին իրարու կենաց  
ու մեռան

## ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բառեր կորսամ  
ու բառերը տեղն ու տեղոք կշարեմ

Գոյականներ կորսամ—ածականներ կորսամ  
ածականները գոյականները կուտեն

Ես իմ կայտառ բայերս կափսոսամ  
— կման առանց ենթակայի

Եթե գոյականներ ունիք ավելորդ  
Բերեք—լավ գինով կառնեմ

## ՆԱԽԱԶԳԱՅՈՒՄ

— Պիտի—ըսավ—պիտի—երգեց—պիտի—բուսավ լեզվին վրա  
Ժամանակը հնձեց բոլոր պիտիները արմատեն  
Ինչպես եղավ—մեկ հատը մոռցավ

Գիտեմ—այդ մեկ հատը պիտի ուռձանար  
Եվ նունուֆար մը պիտի բանար ամեն լեզվի վրա  
անթառամ—չքնաղ—մշտալույս

**ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ  
ՄՈՐՈՒՔԸ**

Կաղանդ Պապային մորուքը ճերմակ է  
ԱՆՅՈՒՐԻ նման

Ըսե—Կաղանդ Պապա  
Մորուքեդ ՀԱՅ կշինվի՛

**ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ ՄԸ**

Կաղանդի ծառ մը շտկելու համար  
Երկու բան պետք է  
Նախ ծառ մը—հետո պարոներ ծառին վրա

Կաղանդի ծառ մը շտկելու համար  
Երեք բան պետք է  
— Ծառեն պարդեն պատ  
Հավատքը գալիք աղվոր օրերու

Կաղանդի ծառ մը շտկելու համար  
Մեկ բան կբավե—ոչ ծառ ոչ ալ վարդ—  
Ատիկա խիճերն աղամանդ կարծող  
Միամիտ հոգվույս բարի խաբկանքն է

Կաղանդի ծառ մը շտկելու համար  
Արդեն պատրանքը լրիվ կբավե

Բարի տարի ձեզ և բարի պատրանք

**ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ**

Ծառեն ժանյակ ծառեն մանյակ ծառեն սոխակ կախեցեք  
Ծառեն թելեր ծառեն ծամեր ծառեն լույսեր կախեցեք  
Ծառեն ծաղիկ ու խաղալիք  
Ծառեն պերճանք ու վարդարանք  
Ծառեն խաբկանք ծառեն պատրանք ու երապանք կախեցեք

— Կից մը տվեք—թող փլի

Նոր ծառ մ'առեք—ծառեն ճանճրույթ կախեցեք  
Ծառեն ճանճրույթ ծառեն ճանճրույթ ծառեն ճանճրույթ  
կախեցեք

— Այդքան առատ արդեն ուրիշ ի՞նչ ունիք—

## ԿԱՂԱՆՂԻ ԿԱԶԵԼ

Բարև ըսեմ այս Կաղանդին ու բոլոր հին Կաղանդներուն  
Մեր Կաղանդին ձեր Կաղանդին ու բոլորին Կաղանդներուն

Ես տարվույն մեջ—տարիեն դուրս—ինչ Կաղանդներ եմ  
ողջուներ

Թող ձերն ըլլա այս գիշերվան կարմիր գինին Կաղանդներուն

Տոն եմ տոներ ամեն անգամ երբ նոր սիրով մ'եմ գինովցեր  
Ամեն անգամ լույսն եմ խմեր այդ լուսածին Կաղանդներուն

Դուք ցնծացեք դուք բերկրացեք ու խայտացեք այս գիշեր դուք  
Խուլարկեցեք արևաքող գանձն ու ոսկին Կաղանդներուն

Իմ Կաղանդիս ըսպասեմ ես Մեր-Կաղանդիս նորահըրաջ  
Երբ դուք մըռայլ օրերե վերջ երթաք կրկին Կաղանդներուն

Բարև ըսեմ այդ Կաղանդին ու բոլոր հին Կաղանդներուն  
Մեր Կաղանդին ձեր Կաղանդին ու բոլորին Կաղանդներուն

## Մ Ա Ռ

Այդքան պերճանք—այդքան պչրանք—այդքան լույս  
Չեն բավեր

Ծածկել արյունը որ շիթ շիթ կկաթի:

Ճյուղերեդ

Այդքան ավիշ—այդքան տերև—ադքան ցող

Չեն բավեր

Որ հավատանք թե արևներ պիտի քաղենք

Ճյուղերեդ

Այդքան արյուն—այսքան արցունք—այսքան վիշտ

Չեն բավեր

Որ մենք դարձյալ սիրտ չկախենք

Ճյուղերեդ

ԴԱՐՈՒՆ ԵՐԳԸ

Ինչ գեղեցիկ է ծնիլ ամենուն հետ  
Փոքր ինչ շշուկ բերել միատեղ  
Երգել ամենուն հետ  
Մեռնիլ ամենուն հետ  
Մոռցվիլ ամենուն հետ

Բացեք ձեր պատուհանը դարուն երգերուն  
Բացեք ձեր դռները այս դարն երգողներուն  
Անոնք ձեր աներիմներն են  
Դուք եք անոնք

Վաղն այս ճամփեն անցնողները մեր ոտքին հետքերը  
պիտի տեսնեն գետնին վրա  
Մենք անոնց պիտի ժպտինք մեր ոտքերուն հետքերով  
Քանի անցորդները շատնան  
Մեր ժպիտը պիտի անհետի նոր ոտքի հետքերու տակ

Փառք անոնց որ այս ճամփեն պիտի անցնին  
Մեր հիշատակը թող զոհվի անոնց  
Որովհետև գեղեցիկ է ծնիլ ամենուն հետ  
Փոքր ինչ շշուկ բերել միատեղ  
Երգել ամենուն հետ  
Մոռցվիլ ամենուն հետ—ամենուն պես

ՇՈՒՐԶ

Կդառնանք  
Լույսին շուրջ  
Մեր շուրջը  
Մահ

Օր մըն ալ պիտի պզանք թե ավելորդ ենք  
Պիտի մեռնինք  
հոգևած

Լույսին  
Կյանքին  
Եվ ավելորդ ըլլալու վախին  
շուրջը դառնալեն

Ու պիտի դեգերինք  
Անմահության շուրջ  
Հուսահատորեն

Կդառնանք  
Մահվան շուրջ  
Մեր շուրջը  
Լույս

### ԱՆՈՒՐՁ

Ձեր  
ու ձեր բոլոր բարեկամներուն  
հոգիներուն ամեննն նուրբ լարերով  
հսկայական պարսատիկ մը շինեցեք  
Ու Կիկոն  
նշան առեք—իր անուրջին նետեցեք

Իր անուրջին որ Քատիլաք մը նստած  
կանցնի կերթա սրընթաց

Չէ— իսկ եթե չար բախտեն  
պարսատիկին նրբին լարերը փրթին  
Ու Կիկոն  
ձեր ոտքերուն տակը իյնա քարի պես

վայն խնամքով վերցուցեք  
փոշիները մաքրեցեք  
ձեր գիրկը նստեցուցեք

սիրտն առնելնն առնելն  
ձեր անուրջը պատմեցեք

Ձեր անուրջը որ Քատիլաք մը նստած  
կանցնի-կերթա սրընթաց

### ՔՈՒՐՁ

Մեկ կողմ քաշե վար առ քուրջերը բոլոր  
Պիտի տեսնես մարմին մը ձյունափայլ  
Ու մարմինն ներս—մարմինն անդին  
Պատրանաթափ եներ ճմոթկած  
Քուրջի պես

### ԼՈՒՐՁ

Առանձնությունը դժվար է—դժվար—  
Դժվար—հետևաբար Աստուծո վայել

Հուսալքումը դյուրին է—դյուրին—  
Դյուրին—հետևաբար մեզի է վայել

Մեր ապրիլը կես կատակ է—կես լուրջ—  
Եվ հետևաբար ապրողին վայել

Հնադարյան կամուրջ մըն է—ամեն օր  
Կանցնինք անկէ մեր գոյութունը շարկած  
Լուրջ—շատ լուրջ

Կուպանք կողբանք ամեն քայլի անդադար  
Վազող ջուրին մեջ նետելով մեկ առ մեկ  
Անուրջներ—ինչ անուրջներ

Ջուրերուն վրա կուրվագծվի հապիվ հապ  
Երկչոտ օղակ մ'արցունքներով կարկինված  
Մեր աչքերուն ու մեր շուրջ—

Ու գահավեժն ի վար ջուրը կքշե  
Ամեն ինչ—հին քուրջի պես

Հնադարյան կամուրջ մըն է—ամեն օր  
Կանցնինք անկէ մեր մահապոհները շարկած—  
Շուրջպարին մեջ անվախճան

ՀԱՆԴԵՍ

Շատ եպական հանդես մըն է ասիկա  
Մուտքն ազատ—ելքը չես գիտեր—երբ—ինչպես  
Երբ ականա ինքզինքդ հոս կգտնես  
Դույլ մը պարան մը կուտան ձեռքդ իսկույն  
Կմտնես դուն ալ մյուսներուն կարգին մեջ  
Բոլորդ մեկ շուրջանակի կշարվիք  
Աշխարհադեպ բազմությամբ մը խայտաբղետ  
Աշխարհակուլ ավազանի մը շուրջին  
Ավազանեն դույլ դույլ ապրում կքաշեք

Ոմանց պարանն երկար կըլլա մինչև հատակ կհասնի  
Ապրումներեն գեղեցկագույնը կպատե խորերեն  
Ոմանց կարճ և այնքան կարճ որ փոխանակ զուտ նյութի  
Միայն փրփուր պղպշակով անոնց դույլը կլեցվի  
Ոմանց դույլը կըլլա ընտիր—կըլլա խոշոր՝ կյանքի չափ  
Ոմանցը փոքր—ոմանցը ծակ—հետևաբար միշտ դատարկ

Ոմանց բարակ կըլլա պարանն ու դեռ կեսին կփրթի  
Ոմանց ոսկի դուլլեր կուտան—ոմանց դուլլեր ժանգոտած  
Բայց շարունակ—բայց անդադար—ավապանեն ապրումի  
Յուրաքանչյուրն իր բաժինը կքաշե

Իսկ ես անօգ անտիրական—զրկանքներով ճիտս ծուռ—  
Մեկ ձեռքիս դուլլ—մյուսին պարան—այդպես ապշած կկենամ  
Ու չեմ գիտնար պարանն ինչպես կողել դուլլին որ ես ալ  
Այս հանդեսեն դուրս գամ—հոգիս ապրումներով ճոխացած

Շատ եպական հանդես մըն է ասիկա  
Իսկ ես այսպես հանդիսատես կմնամ

### ԲԱՅՕԴՅԱ ՍԵՐԵՐ

Մեր սերերը բացօդյա են բարեկամներ  
Հոն ուր փողոցը մութ է  
Ու որ ամայի են փողոցները  
Հոն թև թևի ենք մենք և կամ գիրկ գիրկի  
և կամ շրթունք շրթունքի

Կնայիս ամենեն համով պահուն  
Համբույրը կիսատ կթողուն չար ոտնաձայներ  
—Մածուն ծախողը կանցնի

Մեր սերերը բացօդյա են բարեկամներ

### ՍԻՐԵՐԳ

Նոր նոր սիրերգ մըն եմ սորվեր  
չըսեմ կըսեմ չեմ կրնար  
ըսեմ կըսեմ չեմ կրնար

Գիշերն անուշ ու գիշերվան սերերն անուշ—անուշակ—  
Դուն ալ գիտես ես ալ գիտեմ—կյանքն իրարմով կսիրեն  
Ըսեմ կըսեմ  
ըսեմ կըսեմ  
ըսենք կըսենք չենք կրնար

Գիշերն անուշ ու գիշերվան սերերն անուշ—անուշակ—

### ԱՆՀԱՇԻՎ

#### Ձարեհ Խրախունիին

Անհաշիվ  
Անհաշիվ պիտի սիրես ամեն ինչ  
Ամեն ինչ—սուտ կամ իրավ—  
Թե ոչ օր մ'ալ հովուն ծովուն ինչպես հաշիվ պիտի տաս

Անհաշիվ  
Պիտի խաբես կամ խաբվիս  
Ամեն օր—տիվ կամ գիշեր—  
Թե ոչ օր մ'ալ հողին ջուրին ինչպես հաշիվ պիտի տաս

Ու պիտի  
Սիրաբանած աղջիկներուդ թիվը ճշգրիտ չգիտնաս  
Կամ չգիտնաս թե քանի վարկ սիրտն ավելի կկարնե  
Երբ հոտն առնե նոր սիրո մը խոստումին  
Ապա թե ոչ լիալուսնին ինչպես հաշիվ պիտի տաս

Եվ օրերեն օր մըն ալ  
Երբ Հաշվակալն հանկարծ քաշե հաշվափակին գիծը սեզ  
Դարձյալ պետք չէ որ գիտնաս  
Քանի տարի քանի ամիս քանի օր  
Ապա թե ոչ այդ բոլորին հաշիվն ինչպես պիտի տաս

### ԵՐԿՈՒ ՀԱՏ ՄՈՍ

Այս գիշեր  
Աստվածամոր մեծ պատկերին առջև ես  
Երկու հատ մում վառեցի

Եվ ըսի—  
Եթե քեզի մում մը վառել կբավե  
Եթե մումով մը կատարվին պիտի իղձերս բոլոր  
Աստվածամայրս իմ դուն  
Ըրե այնպես մը որ հասնիմ երջանկության քայլ առ քայլ  
Որովհետև ավելի լավ գիտես դուն  
Գիտես թե ինչ պետք է ինձի որ երջանիկ ըլլամ ես  
Մի մոռնար  
Այդ մոմերեն մին ես եմ

Աստվածամոր այսպես ըսի այդ գիշեր  
Երբ պատկերին երկու հատ մում վառեցի

Ու ըսի—  
Այդ մյուս մոմն ալ հավանաբար կճանչնաս թե որունն է  
Անոր մասին շատ եմ խոսեր քեզի հետ  
Ան գուցե  
Աստվածամոր կամ Աստուծո մասին շատ բան չի գիտեր  
Բայց հոգ չէ  
Եվ կամ ան  
Սա վայրկյանիս լուր չունի թե մում մըն ալ  
Իրեն համար վառեցի  
Հոգ չէ բայց  
Աստվածամայրս իմ դուն  
Ըրե այնպես մը որ ան ալ երջանկությունը ճանչնա  
Մի մոռնար  
Այդ մոմերեն մին ան է

Ու գիտես թե զինքը որքան կսիրեմ

### ՄՈՆԱ ԼԻՉԱ

Կթողում անույշ ժպիտդ անոնց  
որոնք ժպտի ծարավի  
կուզան ժպտիլ կտորվին  
իրենց տառապակոծ շրթներուն հեռեւոր չոր

Կթողում աղվոր աչքերդ անոնց  
որոնք ընկճված  
արհամարհոտ նայվածքներու տակ ամենօրյա  
հասկացողություն կփնտռեն բիբերեդ ներս

Կթողում սքանչելի պատկերդ տարիներուն  
որ եթե օր մը չէ օր մը խաղաղությունը մոռցվի  
մնաս հինավուրց հուշարձանի մը պես  
ներշնչես բարին

Ու կպահեմ ինձի  
անունդ որ նվագի մը կնմանի  
կպահեմ սրտիս թանգարանին մեջ  
տալու համար անոր  
որ մեկ անգամ միայն պիտի գա կյանքիս մեջ  
ամենեն անույշ երազիս իրականացումը բերած

## ՉՈՒԿԸ

### ՈՐ ՍԱՆՈՐԵՆԻԻ ՏԵՐԵՎ ՄԸ ՏԵՍԱՎ

Պատիկ ձուկը որ տերև մը տեսավ  
Թարմ—կանաչ—գարնան արևը խմած—  
— տերև չտեսավ  
Գարունը տեսավ—  
Գարնան երազով ցատքեց ծովեն դուրս  
Հոգևարք ինկավ

Չուկը որ տերև տեսավ գինովցավ  
Ես եմ

Տերևը որ փրթավ սալորենիեն  
Երակներուն մեջ համեմն ավիշի  
Արցունքի շիթ մը  
Կոթունեն առկախ

Տերևը որ փրթավ ինկավ հոգևարք  
Ես եմ

Ու ծաղիկներու մեջ սալորենին  
Աչքը՝ արևին—աչքը՝ անձրևին—  
Արև—որպեսզի պտուղը եփի  
Անձրև—որպեսզի պտուղը լեցվի  
Պտուղ—որ տևե միշտ սալորենին—

Այդ սալորենին ծաղիկներու մեջ  
Ես եմ

Իսկ այդ պտուղն արևահամ  
Որ բերնիդ մեջ լուռ կհալի  
Որուն կուտը պահ մը միայն կծծես  
Կամ հողերուն կամ ծովերուն կնետես

Օ այդ կուտը երջանիկ  
Ես եմ

## ԳՐԱՀԱՇԻՎ

Գիրքերով

Գիրքերով հաշիվ կընեն

Գիր գիրի քով

Գիր գիրի վրա կդնեն

Հաշիվ կընեն կհաշվեն

Հետո օր մ'ալ օդերուն մեջ կթոփն

Հետո օր մ'ալ ծովերուն տակ կտուպին

Օր մ'ալ կելլեն լուսին երթալ կփորձեն

Օր մ'ալ ռումբ մը կպայթի

Եվ ամեն ինչ կփլի

Օ գիրքերով

Գիրքերով

Քու անունդ գրեմ հեղ մը—կբավե

Լուսինս դուն—ռումբս դուն

## ՄՈՒԼԵՆ ՌՈՒԺ

Սիրո ջաղացքն է թևերը

ճոնչալեն

ճոնչալեն

կղաթևաւ

Ջաղացք այրեր

Ջաղացք կիներ

Ճամփան փորի վրա պտուկեր

սեր կանչելեն

սեր կանչելեն

անոնց թներն

ամայության մեջ կդառնան

կդառնան

Սիրո հորձանքն է կպատմե

մինակ մարդոց

սերն ու տարփանքն անմեկին

Մինակ այրեր

մինակ կիներ

կղզիացած

կծերանան կիյուծին

Սիրո ջաղացքը կդառնա կդառնա

սեր կանչելեն—

Սեր կանչելեն

մինակ սիրտերը կարյուկին կարյուկին

Իմացե՛ր եք դուք այս պլուզն իմացե՛ր չե՛ք իմացեր  
Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի  
Աստեղապարդ գիշերներուն ես այնքան գոռ կիմանամ  
Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի

Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի  
Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի  
Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի

Սարսափելի կրկնություններ կըլլան գիշերն ու օրերը  
Ու գիշերն գիշեր  
Մուփին արգանդն այս վիթխարի պլուզները կճեղքեն

Մուփը սև մուփը—գիշերը կով լուսնակե մը առկախ  
— Կան որոնք կսիրեն մուփը որ իր մեջ կպարփակե ամեն ինչ  
Ամեն ինչ որ տենչն ունի կորսվելու անհետանալու  
Մաշած զգեստը մաշած եսը շիկնող այտերը երկչոտ  
Ամեն ինչ—մեղքը—տապալած գիտակցությունն անողոք—  
Այս մուփը երապել կուտա փախստական հոգիներու

Կփախին կփախին կան հոգիներ որոնք կփախին  
Կփախին օրվան արևեն որ անհագորեն քրտինք կշոգիացնե  
Կփախին փողոցներեն ուր օրն ի բուն  
Կենդանի վինչեր կկքին  
Թափառաջրջիկ հանրատուներ կցուցադրեն իրենք փրենք  
Կփախին մեքենաբար կփախին մեքենայեն

Փախստական հոգիները բանտարկված իրենց եսին  
պողոտաներուն ներքև

Փախստական հոգիները կաշկանդված  
Դառնացած անիրավված  
— Պոռթկալու երգեր են պլուզները գիշերվան մեջ  
Պլուզները վիթխարի

Փախստական հոգիները վեհորեն կանգնած մուփին մեջ—  
ինքնավստահ

Հպորագույն—մուփին մեջ  
Համարձակ—մուփին մեջ  
Կանգնած հաղթապանք բռուցքի մը նման—բողոքի մը նման

Կանգնած ապատության իրավունքի մը նման  
Անդրդվելի ինքնավար անկախ ամենապոր  
Իրենց առանձնության մեջ  
Մեծ բան մը չէ անոնց պահանջը մարդասիրության ու  
բարեկամության այս աշխարհի մեջ

Ու որքան խիպախ ցցվին անոնք  
Մարդիկը նույն մարդիկն են  
Սեր սփոփանք մտերմություն փնտռող մարդիկը  
Չոհողության պատրաստ մարդիկը  
Աշխատելու ստեղծելու պատրաստ մարդիկը  
Սիրելու սփոփելու մտերմանալու պատրաստ մարդիկը  
Մարդիկը նույն մարդիկն են

Հիմա քանի որ գիշեր է մութ է կերպեն կերպեն  
Հոգիներ կան իրենց առանձնության մեջ ընկճված

Յնկճված վաղվան իրենց պարտություններուն տեսիլքով  
Համակերպած ստրկացած գերեվարդալ շղթայակապ  
Քանի որ գիշեր է

Կփախին կփախին իրենց խղճալի կաղապարեն  
Ու բյուրավոր բյուրավոր հոգիներ կան փախստական  
Հոգիներ որոնք ցերեկն երբ հանդիպին անծանոթներ են  
իրարու  
Ցերեկանց իրարու հանդեպ անտարբեր կամ օտար գոռոպ կամ  
երկյուղած

Գերի իրենց կերպարանքին  
Սակայն քանի որ գիշեր է հիմա—ամեն ինչ սև ամեն ինչ սև  
ամեն ինչ հար և նման իրարու  
Կթոին կթոչտին երազներն ու վիրար կգտնեն անծանոթ հորի-  
վոններու մեջ  
Այլևս առանձին չեն պառկած եղևնիի մը տակ կամ խրճիթին  
սեմին

ՈՒՐԻՇԻ մը երազին հետ իրենց երազն է մտերմացեր—  
Կան որոնք կվայելեն բարեկամի մը կատակները  
Կան որոնք կապրին խոստումը բարի սիրուհիի մը  
Կան որոնք իրենց մորթին կզգան կրքոտ փայփայանքը արվի  
մը մատներուն  
Կան որոնց դրացին գավաթ մը ջուր կերկարե բամպակի  
արտին մեջ

Կան որոնց ծիծղուն հարկ մը աչք կքթթե  
Ու բոլորը միաբերան բոլորը միաբերան  
Իրարու կպատմեն կպատմեն կարոտը իրենց մահն փորագրված

Մինչև որ դողանջել սկսին ներդաշնակ պանգակները  
եկեղեցիներուն

Մինչև որ արշալուսին ոտներուն երկարի շուքը  
մինարեններուն

Քուն մտնե սևանոթ Աստվածը բարեգութ բալունողորմ  
Ու խաչակնքեն ծերուկ մայրերը աղոթք ընեն բավկատարած  
վերստին պոռթկելիք բոլոր վավակներու՞ համար  
աշխարհի

Որովհետև առավոտ է լույս է կրկին ու նոր օր մըն ալ սկսած է  
չարչարելու տառապեցնելու համար  
Չարչարելու տառապեցնելու առանձին հոգիները վերստին  
վերստին վերստին

Իմացե՛ր եք պլուզը գիշերվան մեջ իմացե՛ր չե՛ք իմացեր  
Այս պլուզը գիշերվան մեջ այս պլուզը վիթխարի  
Ընդհանրական համամարդկային տիեզերական լայնատարած  
Հարլեմի Նոր-Օդեանի Սեն-Լուիի Մատակաւաքարի  
Պարսելուայի

Հռենոսի Վուզայի Խաղաղականի Ատլանտյանի  
Սինկափուրի Ատիս  
Ապեպայի Յանկ-Ցեի Հիրոշիմայի ձեր երազկոտ անծանոթ  
համանուններեն

Ու նայե՛ր նայե՛ր եք գիշերանց աստղերուն որոնց անոնք ալ  
կնային կնային

Բարեկամներ—մեզի նման են աստղերն ալ—կդառնան  
ՈՒՐԻՇԻ մը ջուրջ կդառնան

## ՏԱՐԵԴԱՐՉ

Այսօր դիպվածավ  
Երբ փողոցը կամ հանրակառքին մեջ  
Կամ երկինքին վրա—երկինքեն անդին  
Երեսունըհինգ մոմ տեսնեք վառված  
Չահրատը հիշեցեք

Չեր բանը գործը ձգեցեք մեկդի  
Պահ մը ձեր վիշտերն ու քենը մոռցեք  
Դիտեցեք մոմերու պուրակն այդ բռնկած  
Ու մտածեցեք

Թե օր մ'ալ հով մը պիտի փչե խոյ  
Այս բոլոր մոմերը պիտի մարին  
Ու պիտի ցրվին անջրպետին մեջ  
Ուր ոչ մոմ կապրի—ոչ դուք—ոչ Չահրատ

Պահ մը խորհեցեք  
Ու հետո դարձյալ  
Դուք ձեր հոգերուն  
Ես իմ մոմերուս

10 մայիս 1959

Կ Ա Պ Ո Ի Յ Տ Ն Ո Ղ

## ԿԱՊՈՒՅՏ ՀՈՂ

Հերկե հոգիս հերկե—այս հողը կապույտ է  
Կապույտը երկնքիդ ծովերուդ նման է  
Այս հողը ուրիշ է—այս հողն երկինք է  
Այս հողը ծով է

Հերկե հոգիս հերկե—այս հողը կապույտ է  
Կապույտը երկնքի ծովերու վայել է  
Այս հողը երկնքեն փրթեր է իջեր է  
Այս հողը ծովերեն քակվեր է եկեր է  
Այս հողը կապույտին գանձերը բերեր է

Հերկե հոգիս հերկե—այս հողը ուրիշ է  
Մայիս է զարուն է սիրուհի է մայր է  
Այս հողը հողերուն ամենեն կապույտն է  
Կապույտը երկնքիդ ծովերուդ նման է  
Հերկե հոգիս հերկե—այս հողը կապույտ է  
Հող չէ—քու կյանքդ է

## ԼԱՅԻ ԳԻՇԵՐ

Ինչպես դեմ դրիր փուշ-պսակին խոցերուն  
Մենք մարդ ենք—կհաւկնանք—  
Իսկ մենք ինչպես կտոկանք այս թանձրամած տաղտուկին  
Դուն մարդ չես—չես հասկնար

## ԵՍ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ ԵՎ ՕՐԻՈՐԴ ԽԱՂԱՂՈՒՅՈՒՆԸ

Հոն ուր ծովը կվերջանա ու եղևիններուն ետև  
մարգագետինը կսկսի  
Օրիորդ Խաղաղության հետ թև թևի  
պարելու գացի  
Խոտերուն ու ճերմակ-դեղին մարգարտածաղիկներուն վրա  
Պարեցինք չեմ գիտեր քանի պար քանի տարի

Օր մըն ալ—մայրամուտի մը  
Երբ քաղքին լույսերը մեկ մեկ կվառեին  
Հաստ կարմիր շրթներով կին մը նշմարեցի  
Ժպտեցավ ինձի և ցուցադրեց գեղեցիկ վիստերը  
Ես Չանձրույթն եմ ըսավ միայր ձայնով  
Մինչդեռ դեղնած խոտերուն ու թառամած ծաղիկներուն վրա  
Օրիորդ Խաղաղությունը մեռավ ինձմէ առաջ

## ՓՈՇԻ

Տերս և մեծ իշխանս դուն փոշի  
Իջիր  
Ծառերու կարասիներու սրտերու  
և հիշատակներու վրա

Իջիր  
Վերքերու արյունին վրա  
Իջիր

Իջիր—չէ որ օր մը պիտի իջնես  
հոյակապ մոռացության մը պես  
անունիս և հավակնություններուս վրա—  
Դուն տերս և մեծ իշխանս ամենապոր

## ՈՍԳ ՍՏԿՈՂ ԿԻՆԸ

Ոսպ մը—ոսպ մը—ոսպեր—ոսպ մը—քար մը—ոսպ մը—ոսպ  
մը—քար մը  
Կանաչ մը—սև մը—կանաչ մը—սև մը—քար մը—կանաչ  
ոսպ մը  
Ոսպ ոսպի քով—քար ոսպի քով—հանկարծ բառ մը—բառ  
ոսպի քով  
Հետո բառեր—ոսպ մը—բառ մը—բառ բառի քով—հետո  
խոսք մը  
Ու բառ առ բառ խոլ բարբառ մը—հինցած երգ մը—հին  
երապ մը

Հետո կյանք մը—ուրիշ կյանք մը—կյանք կյանքի քով—ոսպ  
մը—կյանք մը  
Դյուրին կյանք մը—դժվար կյանք մը—ինչու դյուրին—  
ինչու դժվար  
Բայց քով քովի կյանքեր—կյանք մը—հետո բառ մը—հետո  
ոսպ մը  
Կանաչ մը—սև մը—կանաչ մը—սև մը—ցավ մը—կանաչ  
երգ մը  
Կանաչ ոսպ մը—սև մը—քար մը—ոսպ մը—քար մը—քար  
մը—ոսպ մը

### ԳԻՇԵՐԱՊԱՀԸ

Գիշերակազմ նիհարապահն ու նիհարակազմ գիշերապահը  
կհանդիպին իրարու  
Մին կլարն իր հորենական ժամացույցը—մյուսն իր  
հորենացույց ժամականը  
Հետո երկուքը մեկ երկինք կնային  
Մին կտեսնէ հրաշապան լիալուսին մը—մյուսը հրաշալուսին  
մը լիպան  
Նիհարակազմ գիշերապահն ու գիշերակազմ նիհարապահը  
կբարևեն Վիրար  
Մին կհանէ իր մոխրագույն գլխանոցը—մյուսն իր մոխրանոցը  
գլխագույն  
Հետո երկուքը մեկ մութին մեջ կսուլեն

Մին կհալածէ իր հիվանդմայր աներկախը—մյուսն իր  
հիվանդկախ աներմայրը  
Գիշերակազմ նիհարապահն ու նիհարակազմ գիշերապահը  
կդեգերին միատեղ  
Մին կխորհի իր կնոջ մոտալուտ ծննդաբերության վրա—  
մյուսն իրենին ծննդալուտ  
մոտաբերության  
Պաղլեղի տրամադրությամբ ու տրամալեղի պաղադրությամբ  
կծպտին իրարու  
Վերջին անգամ մըն ալ կսուլեն միատեղ որովհետև առտու  
կըլլա

Ու նիհարակազմ գիշերապահը առանձին կմնա

### ԴԻՄԱՍՏՎԵՐ

Պահ մը խորիե  
թե  
Այդ աչքերեն  
ներս  
Ինչ պատկերներ կան  
Պահ մը խորիե  
թե  
Այդ աչքերեն  
դուրս

Ինչ իմաստներ կան

Պահ մը խորհե  
թե

Այդ ճակտին ետին  
Ինչ բաղձանքներ կան

Թե այդ ճակտին  
վրա

Ինչ խորշումներ կան

Այդ շրթներուն  
վրա

Ինչ ծարավներ կան

— Ու ելիր գծե  
Դեմք մը որ խնդա

### ԿՐԿԵՍ

Անասունները կշարժին մարդերու նման  
ու մարդիկ կձափահարեն  
անասուններու պես

Գազանապուսպը—միայն գազանապուսպը կիրագործե  
գերիջխանությունը մարդուն

մյուս բոլոր մարդիկը կստրկանան այդ ուժին առջև  
անասուններու պես

Իսկ կրկեսեն վերջ  
անասունները երկաթներուն ետև  
մարդիկը դուրս

### ՄԱՐԴՈՒ ՄԸ ՄԻՏՔԸ

Ծառին կնայի—ծառը չի տեսներ—ինքզինքը կտեսնե  
Ճամփուն կնայի—ճամփա չի տեսներ—ինքզինքը կտեսնե

Վեր կնայի—ասուպներ կան երկինքն ի վար—  
Չի տեսներ—ինքզինքը կտեսնե

Ու հայեփն կնայի—չի տեսներ ինքզինքը—  
— Կբարևե

### ԳՈՒՆՏ

Փորձե՛ր եք բնավ—փորձե՛ր—չե՛ք փորձեր  
Հաստատուն կենալ  
Սանկ մեկ երկու մեթր տրաւագիծով  
գունտի մը վրա

Կենալ—ու հետո գունտը թավալել  
Փորձե՛ր եք բնավ  
Հաստատուն մնալ միշտ գունտի վրա

Ես ու նմաններս ամեն օր այսպես  
Կշանանք կճգնինք հաստատուն կենալ  
Մեծ ու վիթխարի  
Գունտի մը վրա  
Հապարավոր մեթոք տրամագիծով—

— Ու կմտածենք  
Անոնց վրա որոնք  
Կճգնվին այս հսկա գունտին տակ—  
Այս հսկա գունտին տակ կճգնվին

### ԱՂԵՐՍԱԳԻՐ

Քնչ դժվար է երբ մարդ ձեռքը աղերսագիր մը ունի  
Ու չի գիտեր որո՞ւ հղե որո՞ւ տա

Փողոց փողոց կամ դուռնե դուռ կպտտի ճարահաստ  
Փողոցն անել—դռները գոց երեսին  
Երազ երազ կամ սիրտե սիրտ կդեգերի շվարուն  
Երազը մութ—սիրտերը փակ իր սրտին

Քնչ դժվար է երբ մարդ ձեռքը աղերսագիր մը ունի  
Ու չի գիտեր որո՞ւ հղե որո՞ւ տա

Մինչդեռ իր սիրտն ու թոքերը փրցուցեր  
Մինչդեռ իր վիշտն ու հոգերը լեցուցեր  
Ու շարեր է տող տողի  
Դրոշմաթուղթերն իր արցունքին աղի ջուրով փակցուցեր  
Մատն է կոխեր ստորագրեր կոխելու պես վերքին վրա  
Ու վապեր է փողոց փողոց սիրտե սիրտ  
Պաղատագին հարց է տվեր ո՞վ կառնե ո՞վ կկարդա—

Ով կառնե ով կկարդա  
Արար աշխարհ կելլե վրան կխնդա

### ԼՈՒ

Առավոտուն արթնցա որ  
Քովս պպտիկ լուն անկողինիս մեջ—  
Մինչև առավոտ արթուն է ծծեր  
Ուռած թմբուկի պես ուռեր թմբեր

### Լու

Պպտիկ լու  
Ինչ պետք կար այդքան ծծելու

Մատովս կամաց մը դպա իրեն  
Ու պայթեցավ լուն անձայն անշշուկ  
Լուն այդ պպտիկ լուն առավոտ կանուխ  
Անկողինիս մեջ պայթելով մեռավ

Լու

Անխոհեմ լու

Ինչ պետք կար այդպես ուռելու

Մինչդեռ կրնայիր հիմա պատիկ լու  
Ուրիշ լուերու հետ ուստուսել խուսք խուսք  
Փոքին արծաթն—հողերուն ոսկին  
Խմբովին ճանչնալ պատմել իրարու

Լու

Անփորձ լու

Ինչ պետք կար այդքան խմելու

Կրնայիր դիտել երկինքը կապույտ  
ձևուշ երգերը լսել հովերուն  
Համ սիրաբանիլ արևներու տակ  
Հաճույքին թափով ցատկել ցատկոտել

Լու

Պատանի լու

Ինչ պետք կար այդպես ճաթելու

Եկար—բանաստեղծի արյուն է ըսիր  
Ծծեցիր ամբողջ գիշեր մը ծծեցիր  
Գինովցա՛ր—ըսե լու—իմ արյուննիս հետ  
Իմ երպաներս ալ երկցա՛ն քեզի

Լու

Բանաստեղծ լու

Ինչ պետք կար այդքան գինովնալու

Կրնայիր հիմա դեղին կատվի մը  
Մետաքս մապերուն մեջ ծուլ մրափել  
Գորգին թավիշին մեջ ընկողմանած  
Ապասել գալիք աղվոր օրերու

Լու

Վաղամեռ լու

Ինչ պետք կար այդպես շտապելու

Առավոտ մ'ալ հիմա պիտի արթննամ  
Որ լուն պատիկ լուն անկողնիս մեջ չէ  
Պիտի հիշեմ քինք տեսակ մը կարտով  
Ու պիտի խորհիմ

Անփառունակ լու

Ինչ պետք կար այդպես մեռնելու

ՄԺԵՂ

Արևն երբ ինկավ ճահիճներուն վրա  
Մժեղը ծնավ

Իրանը նրբին—թևերն այնքան նուրբ—որ երբ հարցուցին  
Մժեղ չեմ ըսավ—պարիկ մըն եմ ես

Եվ ալ ամեն օր աչքն արևներուն—թևերն հովին  
Թռչտեցավ ժիր—անդուլ երգելն երգն իր միաբար

Կարծես ամեն ինչ—ծառերն ու մարդիկ—տունական էին  
— Հաճույքը ճանչցավ

Դիտեց ամեն ինչ—անհագ ու անհոգ—սքանչացավ միշտ—  
Մեկ քան զինքն հուլեց

Երբ օր մ'ալ խայթեց մարդ մը մենավոր—քիչ մը բանաստեղծ—  
— Մծեղը այդ օրը թախիծը ճանչցավ

### ՄԻՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Եթե միշտ նույնն է քաղաքը—միշտ նույն  
Տարի օրերը—մարդիկը միշտ նույն—  
Դուն փոխվե

Եթե միշտ նույնն են  
Միշտ նույն—հուլյերդ հրճվանքդ միշտ  
նույն—

Մի ապրիլ

Կամ շուրջդ նայե—  
Նոր դեմք մը գատե դեմքերուն մեջն—  
Նոր անուն մը առ—ձրի է հոգիս  
Նոր երազ մ'ընտրե—

Դեռ նույնն են եթե  
Միշտ նույն—հուլյերդ հրճվանքդ միշտ  
նույն—

Առ քայլե

### ՏԱՌԱՊԱՆՔ ԵՎ ՄԵԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.

Ծով—ծովու վրա մեծ շոգենավեր  
Մեծ նավերը շատ—մեծ նավերը մեծ  
Ծովն ալեյի մեծ

Մարդ—ու մարդեն ներս մեծ տառապանքներ  
Տառապանքը շատ—տառապանքը մեծ  
Մարդն ալեյի մեծ

Բ.

Դույլ մը—դույլ մըն ալ—ներսիդիս ջրհոր  
Դույլ դույլ տառապանք քաշեցեք հոնկե—  
Ջուրը չի հատնիր—այս ինչ ջրհոր է—  
Դույլ մը—դույլ մըն ալ

Գ.

Արևուն տեղ—պատուհանեդ  
Տառապանքը ներս կմտնե  
— Վարագույրը վար առ հոգիս  
Ու քնացիր—դեռ առտու չէ

Դ.

Հարվածներ կիջնեն  
Ամեն մեկ հարված բեկոր մը կառնե

Կտանի քեզմե  
Ու դուն չես գիտնար

Հարվածներ կիջնեն—կիջնեն անընդհատ  
Գոյությանդ անձև մարմարիունին վրա—  
Հարվածե հարված  
Կիրկվիս դուն—մինչև որ գիտնաս

Տառապանքներու պես մշտանորոգ  
Մուրճի հարվածներ կիյնան մորթիդ վրա  
Դուն—որ ալ գիտես—գիտակից ժպտով  
Կանգուն կմնաս

Կմնաս աղվոր արձանի մը պես  
Ապրելու պատրաստ

## ԿԱՂԱՉԱՐ ԵՎ ՄԱՀ

Ա.

Թողեք—թող կյանքս ապրիմ այսպես թե այնպես անընթաց  
կերպով

Փոսը մոտ է—փոսը ուր ամեն ինչ կկորավի

Բահ բահ հողը կթափեն—հող չէ—մոռացություն է կթափեն  
Ու մինակ կմնաս հողին տակ ինչպես մինակ ես վրան

Բ.

Որդը—որ կկրծե անվերջ կկրծե

Որդը—որուն համար կպարարտանան բոլոր մարդիկը

Կպարարտանան հույսերով ցանկություններով կիրքերով

Որդը—որուն պիտի երթամ օր մը ինքզինքս հրանցնել

Որդը—որ կկրծե անվերջ առանց գիտնալու թե լավ կկրծե

Որդը—որ բոլորին կսպասե նույն ախորժակով

Գ.

Եկեր ես ճակատդ ոտքերուս քսելու

Ըսե—ցարդ քանի սիրտ վիրավորեցիր

Քանի երազ խորտակեցիր քու երազներդ խորտակվելն ի վեր  
Նորտակեցիր—նորերն ալ խորտակելու ծարավով

Քանի սպանդ տեսար—քանիներ սպաննեցիր—  
Սպաննեցիր առանց քիչ մըն ալ դուն սպաննվելու

Եկեր ես ճակատդ ոտքերուս քսելու

ոտքերս աճեր են իրենց տիղմին

ուրիշին արյունին մեջ

Դ.

Երկնքեն կախված դանակներ կան—դանակներ կան—  
դանակներ կան

Ու մենք թափոր շնչավոր դիակներու  
կփախչինք մահապարտ  
դանակներու տակեն

Եկուր կինս եկուր կինս եկուր որ տակավին մեր դանակը  
չինկած մեր ծոծրակին վրա  
Մատներդ պտտին մարմնույս վրա մատներս մարմնույդ վրա  
մարմինս մարմնույդ վրա մորթ մորթի  
Երբ բաժնվինք ես իմ դուն քու մենք մեր հաճույքը մեզի հետ  
տանինք

Եկուր կինս եկուր կինս եկուր

Ե.

Մենք հավիտենական թիապարտները կյանքին  
հավիտենապես հավիտենականացած  
Ինքնախաբեության մութին մեջ  
Մութին մեջ սովերացած առհավետ  
Մենք կաղապարներ

## ՊԱՏՐԱՍ

Պետք էր հաղթել տևականացած հուսալքման  
Վարժիլ ապրելու առանց երպի—հաղթել—  
Հաղթեցի

Ու հիմա հպարտ կանգնած մահվան սեմին  
Կսպասեմ—ոչինչ ունիմ կորսնցնելիք  
Քանի որ մեկ անգամեն կորուսեր եմ ամեն ինչ

Պիտի չհասկնա մահը թե որքան երանելի է ան  
Որ կսպասե իրեն առանց դեղևումի  
Համարձակորեն—  
Ներսիդին հույսի փշրանք միակ չպահած

Որ կնայի նույն անտարբերությամբ  
Մահվան ու կյանքին—կյանքին ու մահվան  
ու չափսուս սր

Պիտի չուզելի «մահ»-ն ըլլալ ու հանդիպիլ  
արհամարտանքին այդ վիթխարի  
այդքան վիթխարի—պիտի չուզելի—

Ես եղա մահկանացուն  
Մահանալու համար օրը օրին  
Մահանալու համար մաքուր անաղարտ  
Մերկացած ամեն կիրքե տենչանքե—

Պատրաստ

Ձ Ո Ն  
Խ Ա Փ Շ Ի Կ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ի Մ Ը

---

Գ Ա Ն Կ

Տափակ ոսկորներ կառնե քով քովի  
կկարե

Գանկեր կշինե

Խոսե կըսե կխոսին  
Լռե կըսե կդռին  
Խորիե կըսե կխորհին

Խոսե կըսե կխոսին  
Խոսե կըսե կպոռան  
Լռե կըսե չեն լռեք

Ճ Ա Ն Կ

Միայն կատուն չի ճանկեր  
Ոչ ալ քախտը միայն  
Ոչ ալ չեն գիտեր ձեր որ սիրուիրն

Ես  
Ես ալ ճանկս կ'անցնեմ ձեր պզտուներուն—  
Դուք կհառնեք  
Ու կմեկնիք

Լուսավոր—  
Լուսավոր մերկության մը մեջ—  
Լուսավոր  
Եվ ապառ

Ու ճանկես կախված կմնա  
Յնցոտին  
Ձեր բոլոր ամոթներուն

ՈՒՇ

Ոչ քեզի համար—և ոչ ալ ինձի—

Չկրցա գրել

Երիտասարդի խանդով կայծկլտուն

Սիրերզն ոսկեթել

Երբ դուռդ վարկի արդեն շատ ուշ էր

ՈՉ

Ինձի հաճույք մը պատճառել կուզե՛ս—Ոչ—

Մշուշ կիջնե ծովուն վրա—շոգենավերը  
կսուզեն—

Անդին ձուկ մը կհեծկլտա—

հետո նորեն

համուզելեն

Ինձի հաճույք մը պատճառել կուզե՛ս—Ոչ—

Մշուշ կիջնե սրտիս վրա—շոգենավեր կուզան  
կերթան—

Ոչ մը կտրուկ ու վճռական

Սև մուխի պես կբարձրանա—

սակայն նորեն

համառորեն

Ինձի հաճույք մը պատճառել կուզե՛ս—Ոչ—

Շոգենավեր կերթան չեն գար—մինչ մշուշը  
կթանձրանա

Ու սև մուխ մը համառորեն

Կկուտակվի մշուշին վրա—

Ոչ մը դժնե կարձագանքե

Հետո կիջնե ծովուն վրա—

Հեռուներեն

Պզտիկ ձուկ մը կհեծկլտա

ՈՂԲ

Եկուր—ըսի—դեմս նստավ ու երգեց—

Երապիտառն երգ մըն էր

Չոր ես շատոնց չէի լսած կյանքիս մեջ—

Հետո լռեց—Երկարորեն դիտեց պիս—

Նայվածքներուն տակ կզգայի թե կտաքեամ համրորեն—  
Եկուր—ըսի—ձեռքես բռնեց ու տարավ—  
Ճաճանչախառն տեղ մըն էր  
Ուր ես շատոնց չէի եղած կյանքիս մեջ—  
Հովեր քաղեց—ծովեր քաղեց—սերեր քաղեց ափին մեջ  
Ապագայի հույսեր քաղեց երփներանգ—  
Եկուր—ըսի—բայց մեկնեցավ անվերադարձ—ալ չեկավ—  
Քսան տարու կար չկար

### ԿԱՐԿԻՆ

Մեկ ոտքին ես—մեկ ոտքին դուն  
Դուն անմատույց կեդրոն լույսի  
Ես բոլորտիքդ շրջանակ թափառուն  
Ոչ վերջն հայտնի—ոչ ալ սկիզբն—իմ  
Ճամփուս

Կդառնամ հար  
Ամեն բույե  
Նույնքան հեռու  
— Սևանջրպետ շառավիղի մը չափ հեռու—  
Ես քեզմե

Սիրո կարկին  
Մեկ ոտքն անջարժ  
Մյուսը խեղճուկ շրջանակ

### ՎԱՅՐԵՆԻՍ

Բարև կըսեք—ձեր սիրտերը կբանաք—  
Ես վայրենի ունի եմ  
Կկծկվիմ—փուշ կըլլամ—  
Ձեր սիրտերը կարյունին

Մեկը մյուսեն լույս երազներ կխոստանաք գուք ինձի  
Վայրի ժայռ եմ—ամառվան  
Արևներուն տակ եփած—  
Ձեր երազներն ալ մորթիս պես կխանձեմ—  
Կվառիք

Անցնող գացող շոգենավեն ձեռք թաշկինակ կշարժեք  
Վայրագ ծովն եմ ես ձեր տակ  
Ջուրս ձեզի արցունք կընեք ու կուլաք—  
Որպեսզի լաք—ու միայն լաք—ես ջուր ունիմ անսպառ

Ու կերթաք—  
Տառապանքիս հետն առանձին կմնամ  
Եվ ավելորդ բազմության մեջ մարդերու  
Աչքերս կինքն համառորեն կփնտռեն—չեն գտներ  
Վայրագ ծովս—Վայրի ժայռս—իմ վայրենիս—իմ ունիս

## ԷԼԵԿՏՐՈՆԻԿ

Հազարումեկ բառ կա հիմա ձեռքիս տակ  
Էլեկտրոնիկ ուղեղ եմ  
Բառերեն բառ կզատեմ  
Հարևար բառը հարմարին քով ճարտարորեն կկցեմ

Թե «երկինքն» է  
Կապույտ կըսեմ—ծավի կըսեմ—աստեղազարդ կամ լավարթ  
Իսկ թե «հովն» է  
Խենթ հով կըսեմ—մոլեգնած հով—փոթորկաշունչ—ամեհի

Բայց երբ «դուն» ես  
Բառ չեմ գտներ գովքդ հյուսելու—իմ անույշ—  
Էլեկտրոնիկ նույնիսկ ըլլամ կխանգարվիմ—կկենամ—

Հազարումեկ բառ կա թեպետ ձեռքիս տակ

## ՀԱՇՎԻ ՄԵՔԵՆԱ

Դուն հաշիվի մեքենա ես  
Հաշիվ կընես—սա ես նա ես—  
Ես ուրիշն եմ—ես երազն եմ—  
Կտեսնե՛ս

Թե հաշիվ-չես—մեքենա ես—  
Մեկ բան գիտես—գիտես սա ես—

Ես ոչինչն եմ—ամեն ինչն եմ--  
Կըմբռնե՛ս

Թե մեքենա չես—հաշիվ ես—  
Թիվ թիվի քով կորած թիվ ես—  
Իսկ ես սերն եմ հաշիվե դուրս—  
Կսիրե՛ս

Ես անհաշիվ զարնող սիրտն եմ—  
Սա չեմ նա չեմ—բայց երազն եմ—  
Դուն մեքենան ես անսխալ  
Չես գիտեր

## ՄԺԵՂԻ ՀԱՇՎ

Երբ ամուսնացավ  
Կիկո խորհեցավ  
Սենյակին մեջը որքան մժեղ կա  
Կեսն իրեն երբ գա  
Կեսն ալ իր կնոջ կերթա—կկիսվի—

Բայց մժեղները—աշուն էր—շատցան  
Ու հիմա նորեն  
Մժեղը նույնքան  
Կին մ'ալ ավելի

## ԿԻԿՈՅԻՆ ԿԻՆԸ

Կիկոյին կինը բարակուկ դերձան  
Ասեղին ծակեն անցնելու է

Կիկոյին կինը անհատակ մառան  
Յուղ ըլլալ սանին մեջ եփելու է

Կիկոյին կինը շաքարի աման  
Լեզու թափելու  
Պոչ խաղցնելու

Առկայծ լամբարի պատրույզին նման  
Մարմրելու է

Կիկոյին կինը տաքուկ վառարան  
Գիշերն գիշեր աղվորնալու է

## ԿԻԿՈՅԻՆ ՏՈՒՆԸ

Կիկոյին տունը թիթեղե վանդակ  
Կըսես արեւուն տակ պիտի հալի

Կիկոյին տունը ծակոտկեն նավակ  
Կըսես ջուր կառնե—պիտի ընկղմի

Կիկոյին տունը ճաթած պղպշակ  
Կըսես այսօր կա—վաղը կանհետի

Ծուխը կհատնի  
Լույսը կմարի

Տանիքին թառած կույզ մը խենդ տատրակ  
Հիմա անոնց հետ կելլե կթոփ

Կիկոյին տունը սիրո պահպանակ  
Կերերա սակայն պիտի չփլի

## ՏՈՒՆԸ

Աղավնիներ թույն կշինեն տանիքեն ներս կիսափուլ  
Կղպիին ամենեն հին տունը  
Մերն է

Պատշգամբին ճեղքերեն դուրս խոտեր ծաղիկ կբառան  
Կղպիին ամենեն նոր սերը  
Մերն է

## ՉԱՐ ԲԱՆԵՐ

Գացեք ըսեք չար բաներուն որ չըլլան  
Որ չըլլա թե պատահին  
Կամ երբ ըլլան հեռու մնան մեր այս պպտիկ աշխարհէն  
Համն ու հոտը խաթարելու չհասնին

Չար բաներուն բարև ըսեք մեր կողմէն

Ըսեք գիտէք թե անոնք կան ու միշտ կրնան պատահիլ  
Ըսեք գիտէք թե կրնան  
Օր ցերեկով մութ գիշերով հանկարծակի գալ մեզի

Բայց դուք ըսեք չար բաներուն որ չըլլան  
Որ չըլլա թե պատահին  
Կամ երբ ըլլան հեռու մնան մեր այս պպտիկ աշխարհէն

Քանի որ դուք չեք գիտեր ինչ  
Քանի անոնք չեն գիտեր ինչ  
Սեր ու սիրով  
— Մերթ կենսութիւն—շաղ ու շողով  
— Մերթ հուսաբեկ—ահ ու դողով—  
Շյուղ շյուղի

Շիներ ենք մենք մեր աշխարհը լուս օրերու հյուրընկալ—  
— Պպտիկ աշխարհ մը որ հապիվ հապ կրցեր է պարտկել  
Մեր պպտիկ կյանքն ու մեր անդորրը շերմիկ—

Այս բոլորը գացեք ըսեք չար բաներուն—և ըսեք  
Որ չըլլա թե պատահին—  
Երբ պատահին հեռու մնան մեր այս տաքուկ երդիքեն  
Համն ու հոտը խաթարելու չհասնին

## ՓՈՒՍԱՐԵՆ

Տայի ինչ որ ուզեիր  
խանդ ուզեիր ա՛ն ըսելի—ծովու չափ—  
Խանդադատա՛նք—պարուրեի քեզ անսահման գորովով

Լո՛ւս ուզեիր—տաքիդ տակ  
արեգակներ շարեի

Խաղաղություն թե ցանկայիր—Երկինքեն  
հազարուսեկ ծիածանով անցքիդ կամար կերտեի

Տայի ինչ որ ուզեիր  
Ինչ որ կրնաս դեռ ուզել

Հո՛ւս ուզեիր—երա՛կ—պատրա՛նք—ինքս լեցուն եմ այնքան  
Որ ոչ թե քեզ այլ տփեպերք մը հորդելու կբավե

Ա՛ն ըսելի—որքան կուզես—որքան կրնաս—ավելի—

Փոխարեն  
Ազատություն—ազատությունս տայիր

ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ

Օր կըլլա

Ես և ինքս ձեռք ձեռքի

Անօրինակ փնտռտուքի մը կելլենք—

Ու ծալքերուն մեջ էությանս անպարփակ

Ինքնությունս կպեղենք

Միօրինակ տարազներու հաճախանքեն ձանձրացած

Օր մ'ալ մենք

Բազմերեսակ ինքնությունս ճանչնալ կուզենք մարդկորեն

Դյուրին չէ—

Անջրպետին մեջ մոլորակ քարկոծելու չի նմանիր—

Ինքնությունս այնքան խոր է—այնքան խիտ

Որ ձեր գիտցած տիեզերքին սահմաններեն կհորդի—

— Երկինքն ի վեր դուք ի վերջո քանի՞ հատ աստղ կհամրեք—

Մինչ եթե

Երբ օր ըլլա ու—դուք ձեզի—ձեր ինքնությունը պնդեք

Ինչքա՞ն արև կգտնեք իոն—քանի քանի տիեզերք—

Չե՞ք գիտեր ինչ հարուստ եք

Ես և ինքս և դուք եկեք—ձեռք ձեռքի—

Մեր էության խառնարանին մեջ անծիր

Զարմանահրաշ փնտռտուքի մը կելլենք

ԱԼԵԻՄԻ

Ձեր սերերը բերեք ինձի—տարբադադրեմ և ըսեմ

Որքանը տեսչ—որքանը հույզ է անոնց

Ըսեմ որքան կոհողություն

Կամ ինչ չափով գորով ու գութ գուրգուրանք կա անոնց մեջ

Սեր կչափեմ—սեր կկշռեմ—գործս է աս

Բերեք ինձի ձեր սերերը—ես մասնագետ մեկնիչ եմ—

Եթե սերեր ունիք հինցած

Կամ նոր սիրել եք սկսած

Բերեք քննեմ—կշռեմ չափեմ

Ու ըսեմ

Որքանն իրավ—որքանը սուտ է անոնց

Կամ թե որքան պատրանք ու հույս

Որքան տարփանք

Որքան նախանձ ու դառնություն  
Կամ ինչ չափով ատելություն կա ձեր սիրույն մեջ թաքուն

Օն—քաջ եղեք—մի վախնաք—  
Ձեր սերերը բերեք ինձի—տարրալուծեմ անսխալ

### ՀԱՄԱՌՈՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես վերջակետն եմ որմե վերջ ամեն բառ  
Գլխագրով կսկսի  
Ու ես նորտողն եմ որմե վերջ ամեն կյանք  
Երջանկության կնայի

### ԲԱՐԵՎ

Բոլորեն հեռու  
Դաշտի մը մեջտեղ միայնակ բուսած  
Ծառի մը շուքին  
Կունակս հողին անկեղծ գորովին  
Հանձնած կնիրիեմ  
Դաշտի մը մեջտեղ այսպես միայնակ  
Հեռու բոլորեն—

Հեռու կերպեմ—

Ու կոպերես ներս կխուժեն հանկարծ  
Անուններ—դեմքեր—դեմքեր—անուններ—  
Դեմքեր անանուն  
Անդեմք անուններ—  
Շարք շարք կոպերես ներս կթափանցեն  
Արթուն կերպեմ—  
Դաշտի մը մեջտեղ իբրև թե մենակ—  
— Հեռու բոլորեն—

Կկանգնիմ նորեն

Ու մնաս բարով կըսեմ սիրալիր  
Դաշտի մը մեջտեղ միայնակ բուսած  
Ծառին կովաստվեր—  
Ու քայլերու տակ գորովն հորդահոս  
Խոտին ու հողին—  
Կերթամ աննահանջ

Կերթամ գրկաբաց

Թներու մեջտեղ գրկելու նորեն  
Անուններ—դեմքեր—դեմքեր—անուններ—  
Անդեմք անուններ  
Դեմքեր անանուն—  
Ու կփսփսամ աղոթքի մը պես  
— Բարև ամենուն

Այսպես ամեն առավոտ  
Հրածեշտ կառնեմ կբաժնվիմ ես ինձմե

Տանս դուռը երբ կփակեմ ետևես  
Գիտեմ թե  
Եսս ներսն է— և ամեն քայլ զիս կանջատե իմ ետևս

Այսպես ամեն առավոտ  
Հրածեշտ կառնեմ կբաժնվիմ ես ինձմե—  
Կխառնվիմ ուրիշներով շինված հսկա ծովուն մեջ

Ու կտեսնեմ—պատուհանին ետևես  
Եսս կեցեր զիս կդիտե մտատանջ

Իսկ ես ամեն առավոտ  
Կերթամ ձուլվիլ ուրիշներով շինված հսկա ծովուն մեջ  
Մինչդեռ եսս պատն երեսին նստեր կուլա ետևես—

Հրածեշտ կառնեմ կբաժնվիմ ես ինձմե—  
Առավոտուն—ես մանավանդ առավոտուն դժբախտ եմ

Ուրիշներե վեր—անոնցմե տարբեր  
Չըլլալու համար

Ուրիշներու հեռ —ճիշտ անոնց նման  
Ուլեցի ըլլալ

Ուրիշներուն պես—անոնց հավասար  
Չկրցա ըլլալ

Ուրիշներեն վար—միշտ անոնց շուքին  
Լալ կրցա միայն

Լաց որ ես կուլամ—ինձի համար չէ  
Ուրիշին համար

ՎԱՀԱՆ

Վահան մը լույս  
Վահան մ'աննյութ—զուտ գաղափար—բորբ հավատք  
Հայարտ բռներ եմ կուրծքիս  
Լուտանքներուն դեմ մոլեգնած աշխարհին  
Դարանակալ խժոժության դեմ անկուսպ  
Մինչ մայրերեն—իբր թե  
Հանդարտորեն կքայեմ  
Երազատես սուրբի նման անտարբեր—

Իսկության մեջ ես կուրծք կուտամ հապարումեկ հարվածի  
հապարումեկ թշնամանքի ու դավի—

Երբ հանդիպիք դուք ինձի  
— Թշնամի թե բարեկամ—

Մեկուն վրա այս քաղաքին փոշեպաճույճ մայթերեն—

Մի կարծեք թե մինակ եմ  
անապավեն—անօգնական—կամ անպեն—

Դուք որ—օտար—չեք նշմարեր հարկավ վահանն իմ պորեղ—

Վահան մը լույս

Վահան մ'աննյութ—պուտ գաղափար—բորբ հավառք

Ձոր հպարտ

Կուրծքիս վրա դրոշի պես կբռնեմ

### ԱՄԱՌՆԱՅԻՆ

Օր մըն ալ

Հինգ հիսունի շոգենավը առանց ինձի պիտի մեկնի  
Կամուրջեն—

Դուք խոնջած

— Ծրար ծրար ձեր մեկօրվա քրտինքներով բեռնավոր—

Համր ու դանդաղ

պիտի կորիք իմ աչքերես  
ծովն ի վեր

Ես

Հինգ հիսունի

յոթնուկեսի ութը տասնի

ու բոլոր մյուս

շոգենավերն հոծարակամ փախցուցած

Թափառական

պիտի մնամ

Կամուրջին վրա—Կամուրջին հետ

պիտի հսկեմ—

կես գիշերվան մառախուղին գիրկս բաց—

Ու խոնջած

Երբ դուք պառկիք

ու քուն մտնիք ինքնամոռաց

հեշտանքին մեջ թմրության

Ես—ձեր տեղ—

Պիտի մեկ մեկ համրեմ հաշվեմ

երկնի աստղերն անհաշիվ

Ամեն մեկուդ

աստղ մը դրկեմ լուսափետուր

որպեսզի

Անոր լույսով

ձեր ու բոլոր ձերիններուն

ապագայի

երպաները վարդարեք—

Օր մըն ալ

Պիտի տեսնեք հինգ հիսունի շոգենավին չկամ ես—

Դուք բոլորդ ծով—փոթորկոտ ու մեծ—  
 Ես այդ ծովուն մեջ  
 Ես այդ ծովուն մեջ յուղի մը կաթիլ  
 Այլատարր ու խորթ  
 Ես յուղի կաթիլ  
 Երազկոտ ծփուն մակերեսն ի վեր  
 Դուք բոլորդ ծով—փոթորկոտ ու մեծ  
 Ծովը սրտիս մեջ

ԼՈՒՍՆԱՐՇԱԿ

Այսքան դրամ ծախսել մսխել չէր արժեր—  
 Ելան գացին որ ինչ տեսնեն—քարով քար

Այդքան շատ քար

— Հեղ մը ձեր շուրջը նայեցեք—  
 Հոս ալ կար—

Այսքան երազ մսխել վատնել չէր արժեր

Անշրպետի լարախաղացն եմ

Կնայիք ամառ գիշերով  
 Հրթիռ մը կհեծնեմ լուսափետուր  
 Ու աստղե աստղ կ'ոստոտեմ

Կամ գիտավորի մը պոչին կառչած  
 Մղոններ կկտրեմ  
 ակնթարթի մեջ

Ու երբ վստահ ըլլամ  
 թե բոլորդ հիացած եք  
 ու բոլորդ հիացումեն հագեցած  
 Վերջին խոնարհություն մը կընեմ  
 լուսնին վրայեն

Հետո կիջնեմ վար—երկիր  
 Գլխարկս կերկարեմ ձեպի—պաղատագին  
 Իմ կորսված մարդկությունս կմուրամ

Ես ոսկեմատ դերձակ եմ—  
 Ձեր սիրտերն երբ այդքան շատ  
 Սեր պարփակել չկրնամ

Չդիմանան ու պատռին—  
Կարեմ կըսեմ—ոչ կըսեք

Ես հավակնոտ գրչակ եմ  
Կարոտ կերգեմ—սեր կերգեմ—  
Ձեր աչքերեն հայտնի է  
Հապարումեկ տենչ ունիք—  
Գրեմ կըսեմ—ոչ կըսեք

Վարպետորդի ստահակ եմ—  
Սեր կառնեմ—հույս կծախեմ—  
Երբ ամեն ինչ չորցեր է  
Ու պետք ունիք պատրանքի—  
Ճարեմ կըսեմ—ոչ կըսեք—

Ես պատմության ցուցակ եմ—  
Օր կըլլա ետ կնայիք  
Հին սերերով կօրորվիք—  
Շատ են—մեկ մեկ չեք հիշեր  
Շարեմ կըսեմ—ոչ կըսեք—

Ես քմահաճ վտակ եմ  
Կհոսիմ ուր որ ուզեմ—  
Բոցեր ալք ալք մեծնայեն  
Երբ ձեր սրտին գան հասնին  
Մարեմ կըսեմ—ոչ կըսեք

Ես լրջությամբ հագեցած  
Ձեր օրերուն—կատակն եմ—  
Երբ աշխարհը մութ տեսնեք  
Ոստոստելեն կվապեմ  
Կխոնարհիմ ձեր առջև  
Պարեմ կըսեմ—ոչ կըսեք

Պատրաստական շարժակ եմ—  
Ձերն ըլլալեն ձանձրացած  
Երբ կանգ կառնե սիրտն—անկոր  
Բաբախելե երբ դադրի—  
Լարեմ կըսեմ—ոչ կըսեք

## ՔԱՐ

### Ա.

Քարը—որուն վրա կկոխեք կանցնիք  
Քարը—որուն վրա կթքնեք  
Քարը

կոր կնետեք իրարու գլխուն  
լուտանքի տեղ  
անեծքի պես

Այդ քարը կառնեմ գուրգուրանքով  
սենյակս կտանիմ—  
կծնրադրեմ առջին  
ու կադրթեմ

Բ.

Քար—իմս—իմ քարս—քար  
քար սրտիս—քար երևակայություններուս  
քար—անկարելին—քար անդրովելին—  
քար—իմս—իմ բաժինս—քար

Գ.

Կոխեցեք քարերուն վրայեն անցեք  
Քարերուն վրայեն քարե քար ցատկեցեք  
Դիտեմ կարավանները կենսուրախ  
Դիտեմ կարավանը հաստատաքայլ  
և—սպասեմ հոս անվաղորդայն  
քարացած—ես  
Անցեք բարեկամներ կոխոտելով անցեք  
Ես ինքս քար—քար

Դ.

Ու քարերն ինչ են որ ձեզի համար  
Դուք կնետեք զանոնք  
Ես կհավաքեմ

Ե.

Կաղոթեմ  
Կծնրադրեմ առջին  
այդ քարը զոր կառնեմ գուրգուրանքով

Քար

որ անեծքի պես  
լուտանքի տեղ  
Կնետեք իրարու գլխուն  
Քարը—որուն վրա կթքնեք  
Քարը—որուն վրա կկոխեք կանցնիք  
Քար—իմս—իմ քարս—քար

### ԱՂՈՔԷ

Բոլորին

Թող բոլորին օրհնություններն ավիշի պես զան սրակին  
Սեպին վրա սա ազապուն որ Չահրատ

Չահրատ ըլլալ կհավակնի պարզապես

Թող բոլոր հին օրհնություններն այդ սեպին վրա կաթկթին—  
Որովհետև ծանր է վիշտը որ սա պահուս կսպառնա

Ու այդ սեպը եթե նույնիսկ

նույնիսկ Չահրատն ալ ըլլա

Կփտի

Թող բոլորին օրհնություններն իջնեն

իջնեն մորթիս վրա

Ու այդ էջքին

այդ էջքին մեջ համաչափ

Ես մաքրվիմ զարևանային անձրևներու պատրանքով—

Ու բոլոր

Անոնց առջև որոնց իմ նոր երպաներս կպարտիմ



## ՄԱՅՄՈՒՆ

Մայրուն որ կըսեմ կապիկ չկարծեք  
Տան սև փխսիկին անունն է  
Փխսիկ որ կըսեմ աղվոր չկարծեք  
Աշխարհիս ամեննն տգեղ կատուն է

Սև է որ կըսեմ սեփսև չկարծեք  
Սևությանը մեջ աչքերը դեղին են  
Դեղին որ կըսեմ արև չկարծեք  
Արևը մեկ է—աչքերն երկու են

Երկու որ կըսեմ զատ զատ չկարծեք  
Երկուքին խորն ալ երազը մեկ է  
Երազ որ կըսեմ մեծ բան չկարծեք  
Մարդու մը կողմն սիրվիլն է

Ութսուն տարու էր ան  
Երբ այս երգը կերգեր  
Ու մենք որ միշտ պատրաստ էինք ծաղրելու  
Կծիծաղեինք

Միշտ պատրաստ էինք ամեն բան մերծելու—  
Դեռ ոչ մեկ հիշատակ ունեինք պատմելիք—  
Թե հիշատակներն որքան կհուլեն  
Չէինք գիտեր

Մինչդեռ ութսուն տարու էր ան երբ կերգեր—  
Չայնին մեջ—երգին մեջ—աճապարանքը կար  
Երթալու դեպի ետ  
Ուր ինք մանկամարդ աղջիկ տակավին  
— Լույս օրեր ապրելու տենչն աչքերուն մեջ—  
Մանտոլինին վրա մատնահարել են  
Կերգեր իր մուտքը կյանքի սեմն ներս

Այս այն տարիքն էր ուր շրթներ կողողդան  
Կսիրեմ ըսելու անորոշ վախեն—  
Ուր ամեն աղջիկ հայրն ու մայրը մոռցած  
Պատրաստ է մեկնելու խոստումի մ'ետևեն  
Իսկ մենք ուրախ էինք ամեն երգ ծաղրելով  
Երբ ութսուն տարու էր ու կերգեր մեղմորեն—

Դեռ ոչ մեկ անցյալ ունեինք հիշելիք—  
Թե ետ չեն դառնար օրերն երբ երթան  
Չէինք գիտելի

Տարիներ հարկ եղավ որ անցնին արագ  
Որ երբ այդ երգն այսօր դիպվածավ լսեմ  
Աչքերս բոլորեն անդին դարձուցած

Արտասվեմ գաղտնորեն բոլոր անոնց հառաբ  
Որոնց կյանքն անցավ կարոտովն այն երգին  
Չոր անոնք—ինձի պես—  
Չկրցան երգել

### ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Օգոստոսի արևուն տակ ու հովուն տակ հյուսիսի  
Շոգենակույկ մը նստած  
Հաճի Լևոնը գնաց

Եվ անոնք որ ծովափեն  
Ծովն ու ծովուն փրփուրները դիտեցին  
Խոսք մեկ ըրած խորհեցան—  
Կարգը մեզի քիչ մը ևս մտեցավ

Հաճի Լևոնը տարին—  
Ամեն ինչ էր քայց ամեն ինչ ըլլալեն ալ ավելի  
Իր դարի մտտ տարիներուն հաշիվով

Մեր բոլորին երաշխիքն էր մահվան դեմ  
Մինչդեռ հիմա կարգը մեզի քիչ մը ևս մտեցավ

Մեկ քահանա չորս մահակիր դագաղ մ' անշունչ փայտի պես  
Շոգենակույկ մը դրին  
Ու ծովն ի վար նավարկելեն Հաճի Լևոնը տարին

Մինչ անոնք որ տեսան—լացին—չլացին—  
Չգացին թե կարգը իրենց քիչ մը ևս մտեցավ  
Օգոստոսի արևին տակ ու հովուն տակ հյուսիսի

### ԵՐԶԱՆԻԿ ԲԱՆԱՍԵՂԾԸ

Բանաստեղծ եմ երջանիկ—  
— Որ դուռը կամ որուն դուռը որ վարնես  
Զիս կընդունեն գրկաբաց  
Ժպիտներուն ամենեն քաղցրն իրենց դեմքին կշողա—

Երջանկությունն այս է կըսեմ ես ինձի—  
— Որ դուռը կամ որուն դուռը որ վարնես  
Կոնակի վրա կբացվի  
Ասպնջական երգ մը կիջնե հոգիիս մեջ մեղրի պես—

Ամեն մեկ դուռ մտերմորեն կբացվի  
Ամենն տաք բարևներով կարծարծի հուրը սրտիս  
Ու կհոռնամ ինչու եկա—ինչու այս դուռը վարկի  
Երջանկությունն այս է կըսեմ համոզված

Եվ այս գիշեր երբ բուրվիք դուք սեղանին շուրջ ճաշի  
Երբ առօրյա ձեր հոգերեն ձերբազատ  
Մանրեք շերտը թարմ հացին—  
Սպաս մըն ալ ինձի դրեք մեկ անկյունը սեղանին  
— Գուցե կուգամ ու ձեր դուռը կ'զարնեմ

### ԴԵՍՊԱՆ

Ես ձեր ամենեն հին մեկ երազն եմ  
Կոր դուք այլևս պիտի չերազեք  
Ես ամենուր մեջ թաքուն պոռթկումն եմ  
Կոր դուք այլևս պիտի չհիշեք

Ձեր հին չափերը պիտի խորտակեք  
Ձեր ամենեն մեծ ցնորքեն մեծ եմ  
Տիեզերագնաց օդաչուն եմ ես  
Ձեր անտահմանին սահմանն եմ ահա

Ես ձեր ամենեն վերջին դեսպանն եմ  
Դուք ո՞վ եք

Անդին իբր թե պարահանդես կար  
Վարսահարդարին խանութին առջև  
Իբր թե կեցած թուխ աղջիկ մը կար  
Փայլուն աչքերով կուլար իբր թե  
Մինչդեռ քիչ անդին պարահանդես կար

Փայլուն աչքերովն իբր թե կուլար  
Կուլար որ պինքն հոն տանող մը չկար—  
Այդպես առանձինն ինք կար իբր թե  
Մարդիկ իբր թե ուրախ էին միշտ  
— Ու չոր աչքերով աղջիկը կուլար

Իբր թե մարդիկ միշտ ուրախ էին  
— Վարսահարդարին խանութին առջև  
Իբր թե կեցավ աղջիկը երկար  
Հետո տուն գնաց իբր թե դժբախտ  
Իբր թե դժբախտ դժբախտ քուն մտավ—

Պարահանդես կար անդին իբր թե  
Միշտ ուրախ էին մարդիկ իբր թե

## ՏԻԿԻՆ ԲՐԱԾՈ

Տիկին Բրածո—ինչպես եք  
Ինչպես ըլլաք—ծովեն ելած ձուկի պես—  
Ծաղարանը նստեր եք  
Պաղպաղակ չէ—ձեր մենությունը կլիպեք ծովուն դեմ—  
Հին փառքերու ծովեն ելած ու շմորած ձուկի պես—  
Տիկին Բրածո—լքվեր եք

Տիկին Բրածո—բարև ձեզ—  
Ձեր փափկասուն գեղեցկությունն ինչպես է—  
Ուր է—չկա—քսան տարի առաջ էր  
Այն ատեն դուք կին գեղանի—ես պարմանի նորելուկ  
Ձեր իգության հրապույրին անձնատուր  
Շատերու հետ ձեր բոլորտիքն էի շրջեր սիրտս թունդ  
Ձեր աննատույց մտերմության մեկ փշրանքին տիրանալու վուր  
հույսով

Ձեիք գիտեր որ հիշեք  
Ծաղարանին մեկ անկյունը նստեր եք  
Պաղպաղակ չէ—ձեր անցյալի հպարտությունը կկրծեք ծովուն  
դեմ

Հիացումի ծովեն ելած ու մոռցված ձուկի պես  
Պարզ բարևի մը ծարավով տապալակող ձուկի պես  
Նստեցեք—  
Մնաք բարով տիկին Բրածո—տիկին Չուկ

## ՀԱՐՅՈՒՄ

Ըսի—Դուն ո՛ւր կնստիս—  
Ըսավ—Հո—հո—հովուն դեմ

Հարցուցի—Ե՛րբ ծնար դուն—  
Ըսավ—Հի—հի—հի—հիմա

Մատս դրի մերկ կուրծքին  
Ըսի—երբ հարկ է սիրել  
Քանի՛ սիրտ կա հող—

Ըսավ  
Հա—հա—հա—հա—հավար հատ

Կկակապե՛ր ան—թե ոչ—  
Մինչև այսօր չեմ գիտեր

ԱՅԵՆՔ 1969

## ՄՐՆՏԱՂՄԱ

Մինտաղմայի քառանկյունին մեջ աթոռներ կան շարված  
Հին աստվածներ հոն կնստին փեփսի-քոլա կիսմեծ

## ՍՈՒՆՅՈՆ

Ծովու չաստվածը ծովափնյա իր պալատեն երկնամերձ  
Գացող եկող օդանավերը կհամրե վարմացկոտ

### ՎՈՒՒՆԱՂՄԵՆԻ

Կկարծեի որ այս կողմը տեղ մը ծնած էր Վենյուս—  
 Հատ մը տեսա—երբ հարցուցի ըսավ Շվետ եմ ծնած

### ◆ԱՐՔԵՆՈՆ

Ատենոք

Խոււք մը մարդիկ Աքրովոլ լեռն են ելեր  
 Աթենայեն իմաստություն կորսելու—  
 Քարացեր այուն են դարձեր

### ԼԵՔԱՎԻՅՈՍ

Որքան շատ մարդ կա աշխարհիս վրա  
 Ու որքան աստված—հատ մը անձ գլուխ—

### ◆ՈՒՍՔԱ

Քիչ մըն ալ մենք աստվածանանք ըսինք եկանք այս գիշեր  
 Նախ սիրթաքի պարեցինք—

## ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

Մենք ալ մեր

Պատերազմները ունեցանք մեր անցյալին մեջ մենք ալ—

Օրերուն դեմ

Որոնք անցան առանց կնոջ—առանց ընկեր բարեկամի  
 Առանձին—

— Մենք անպեն

Անթնդանոթ

Պատերազմներ ունեցանք մենք լռեցայն—

Եվ անոնց

Պայթյուններն անշուկ

Կրակներն որոնք երբեք չայրեցան

Արյուններն որոնք երբեք չթափեցան հողն ի վար

Մեր ռազմաշունչ հիշատակները բերինք—

Մենք ալ մեր

Հերոսամարտը մղեցինք մեր անցյալի մեջ մենք ալ—

Վերապրեցանք վիրավոր

### ԿԻԿՈՅԻՆ ԵՐԳԸ

Կիկոյին երգը ճշինչ հողմավար  
 Չաղացքի հեքիաթ—մեքենային դեմ

Կիկոյին երգը բզկուն միալար  
 Մժեղի կարմանք—հրթիռներուն դեմ  
 Կիկոյին երգը սրմունջ սիրավար  
 Աշուղի խռովք—շվայտության դեմ

— Սույ համբերատար

Երբ վաղն է խավար—

Փսփսուք գաղտնի որ չի հասուննար

Կայրի ինքն իր դեմ

Կիկոյին երգը մռնչյուն արդար

Բողոք մը վերջին—սահող կյանքին դեմ

Կիկոյին երգը լռություն մարմար

**ԲԱՐԻ ԵՐԿԻՆՔ**

Այդպես կուպես քանի որ—ըսավ—այդպես թող ըլլա—  
Ըսի—կեցվածք չունի՛ս դուն—  
Չարմացավ—կեցվածքն ի՛նչ է  
Ես պառկվածք ունիմ լոկ  
Պուտ մը երկինք որ գտնեմ  
Տակը կանցնիմ կպառկիմ  
Կերպեմ երկինքիս չափ—

— Ի՛նչ ըսեի ես իրեն  
Բարի երկինք մաղթեցի

**ԵՐԿՆԱՍԱՅՈՒԹՅՈՒՆ**

Բանաստեղծին հետ միատեղ ճամփա կելլենք երգելու  
Ինքը կերգե—մենք երգելու պես կընենք

**ԵՐԿՆԱԾԻԾԱՂ**

Երկինքն ի վեր խարսխած  
Չարածճի աստղ մը կա  
Երեք միլիոն տարի է—երկրագունտին կնայի  
Ու կմարի խնդալեն

**ԵՐԿՆԱՔԱՐ**

Քար չի բավեր քարկոծելու անջատ անջատ բոլորս ալ  
Կհավաքվինք նույն աշխարհին վրա ամենքով միատեղ  
Ու կսպասենք ահագնադողորդ երկնաքարին որ չի գար

**ԵՐԿՆԱՎԱՌ**

Անշմար  
Պատիկ աղոտ ճրագ եմ—  
Աշուն թախծոտ երկինքներուն աստղերն հովեն եք մարին  
— Թող մարին—ես կվառեմ

## ԵՐԿՆԱՔԵՐ

Չէ մարտեր—  
Երկնաքերին զագաթեն  
Իր մեծութիւնը կփսխեն դեպի վար  
Ներողամիտ մայր հողին

## ԵՐԿՆԱՔԵՐԹՎԱԾ

Քերթված մը գրված  
Իբրև գրչածայր թարթիչներդ սև  
Երկնքի կապույտն իբրև մագաղաթ  
Հեղինակը ես

## ԱՍՈՒՊ

Հատ մըն ալ կար որ ի վերջո ճանճրացալ  
Չափված ձևված կարգուտարքեն պարտադիր—  
Փորձեց փախչիլ—անջրպետին մեջ իսպառ  
Պատանեկան երապի պես հալեցալ

Օգոստոսի գիշեր մըն էր լուռ—խաղաղ—  
Ու նոր ասուպ մը ինկալ

## ԵՐԿՆԱՀՐԱՎԵՐ

Եկեք ամենքով հուսահատ ու խոնջ  
Եկեք ամենքով պարտոյալ պարտասուն  
Այս է երկինքը կոր ես տրուպ քերթող  
Բուռ բուռ կբաշխեմ ձեր ծարավներուն

Երկինքն օթևան աստղին արևին  
Երկինքն օթևան ձեր երապներուն

**ԾՈՐԱԿՆԵՐ**

Ես խանութպան—նստեր ծորակ կծախեն—  
 Մարդիկ կուզան մեկ մեկ ծորակ կզատեն—

Ոմանք դեղին—որ երբ բանան արև հոսի ծորակեն—  
 Ոմանք ճերմակ—որ վազե հույս ձյունափայլ—  
 Ոմանք ծորակ կուզեն լույսի—ոմանք սիրո—շատեր ալ  
 Համբերության կարեկցության ազատության ծորակներ—

Ես իբրև թե կփնտոեն—հատ մը կուտամ ըստ բախտի  
 Ահա կըսեն—լավագույնն է—քեզի համար պատեցի

Երբ տուն երթան զետեղեն  
 Ու ծորակները բանան  
 Ու դիպվածով եթե ջուր գա ու հոսի  
 Կուրախանան անսահման  
 Ահա կըսեն—արևի ջուրն է ոսկի

Ահա հույսի—ահա լույսի կամ սիրո  
 Համբերության կարեկցության ազատության ջուրն է այս  
 Ու այդ ջուրով երես ու սիրտ կլվան

Կխոնարհին ծորակն ի վար—լիահագուրդ կիմեն  
 Ես խանութպան—դեռ շատ ծորակ կծախեն

**ԱՆՊՏՈՒՂ ՍԱԼՈՐԵՆԻՆ**

Սալորենին որ գարնան պտուղ չտվավ  
 Ամչցավ—

Տխուր նայեցավ իր տերևներուն  
 Իր լերկ ձյուղերուն  
 Ու լացավ

Եվ լաճերը թաղին—պտուղի գող—  
 Ոչ մեկ քար նետեցին  
 Արհամարհանքով ծառին նայեցան  
 Ու գացին

Այդպես լքված ու այդպես առանձին  
 Սալորենին  
 Անոնց ետևեն նայեցավ կարոտով  
 Ու լացավ

Եվ Պարոնները Տիկիները թաղին  
Ձնշարեցին  
Հեք սալորենին

Որ այդպես անպետ—այդպես հանցավոր  
Լացավ

Միայն կատու մը սև—շուքի բարեկամ  
Արևի նման դեղին աչքերով  
Երկար նայեցավ սալորենիին  
Ու տուն տեղ եղավ  
Չորս իստ ձագ բերևով ծառին ստվերին

Հիմա սալորենին  
Խանդով կերկարե իր գով հովանին  
Որ ձագուկներն ամրան կիպիչ արևեն  
Չըլա թե այրին

#### ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐ

Ամեն ինչ ծայրեն վերսկսելու  
Ի վերջո նորեն այսպես ըլլալու  
Տոն է այս գիշեր—

Լույսը վառեցեք—եթե չի բավեր  
Ձեզ տաքցնելու ձեր լույսը ներքին—  
Տոն է այս գիշեր—

Պահ մը ամեն ինչ վերջացնելու  
Ամեն ինչ ծայրեն վերսկսելու  
Տոն է այս գիշեր

Հույսեր վառեցեք—եթե չեն բավեր  
Ձեզ տաքցնելու ձեր հույսերը հին—  
Տոն է այս գիշեր—

Ի վերջո նորեն այսպես մնալու  
Քիչ մը ավելի հուսալքվելու  
Տոն է այս գիշեր

Երգել փորձեցեք—եթե չեք մոռցեր  
Խանդոտ երգերը ձեր պարսնանության—  
Տոն է այս գիշեր—

Չուր տեղ վատնված օրերն հիշելու—  
Գոյության տխուր հաշվեկշիռին  
Տոն է այս գիշեր—

Լույսեր ու հույսեր վառեցեք գույն գույն—  
Երգեր երգեցեք հինեն ու նորեն—  
Տոն է այս գիշեր—

Գոյատևելու տոնն է այս գիշեր

## ԲՈՒՈՐՆ ԱԼ

Անոնք բոլորն ալ Պարոն են Տիկին են  
ես մի ոմն Չահրատ

Բոլորին ալ խոսքը կշիռ ունի ու  
Բոլորին ալ շուքը ծանր է—կապար—

Ես մի ոմն տաղասաց  
Անպին լուսին կամ ինծի պես կես խենդ մարդոց սիրահար

Անոնք բոլորն ալ Տիկին  
Անոնք բոլորն ալ Պարոն  
Պատկառապալու Պատ Պատկերապարդ

Ես մի ոմն  
քիչ մը սիրող—քիչ մը քանդող—ու քիչ մը շատ երազող

## ԲՈՒՈՐՍ ԱԼ

Քանի որ բոլորս ալ նույն  
նավը նստեր կսուրանք անվերադարձ

Քանի որ բոլորս ալ նույն  
անձկությամբ կկառչինք նավին  
խոլարշավ

Ու քանի որ բոլորս ալ նույն  
թափով կհրենք անոնք որ կիյնան վար

Ով պիտի հարցնե մեզի այս գիշեր  
ո՛ւր և ինչո՛ւ

Քանի որ բոլորս ալ նույն  
հարցումեն կփախչինք

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Ջուրն էր—առավ—քշեց տարավ  
Ի՛նչ բան կըսեք—Մեկինեին  
Մանկությունն էր անգույն—պղտոր—  
Թե նույնինքն Մեկինեն էր—  
Քշեց տարավ

Ջուրն էր—քշեց—տարավ անդարձ  
Ինչպես—կըսեք—բռնի ույժով  
Մեկինեին փեշե՛ն քաշեց  
Թե նույնինքն Մեկինեն էր  
Հեռուներուն կանչին վապեր—  
Ջուրն էր—քշեց—առավ—տարավ

Տարավ անդարձ—ինչո՛ւ—կըսեք—  
Կա՛րձ էր կյանքը Մեկինեին

Թե նույնինքն Մեկինեն էր  
Կարճ մնացեր աշխարհիս մեջ—  
Ինչո՞ւ—կըսեք—բշեց տարավ

Ետ չբերավ—  
Ջո՛ւրն էր—կըսեք

### ՓՐՈՖԵՍԵՐՈՐ ՓԱՐՈ ԵՎ ԻՐ ԼՎԱՅՔԻ ՄԵՔԵՆԱՆ

Օրենքներն այնպես կայահանջեն որ  
Ամեն ոք բերե  
Ուղեղը հանձնե  
Անպայման  
Փրոֆեսե՛րը Փարոյին  
— Այդ ամենագետ փիլիսոփային—  
Որ պանոնք լվա  
Մեքենային մեջ իր ամենակոպ

Կտրամադրեն օրենքներն հետո  
Որ հյու հնապանդ  
Ամեն ոք դարձյալ  
Ետ առնե ուղեղն իր մաքուր—լվացված  
Ջոջ մեքենային մեջ փարոյական—  
Ջետեղե գանկին մեջ  
Մեկնի գոհունակ—  
Իսկ կան որ անօրեն

— Ուղեղով անվա—  
Ժանգոտ մեքենային դեմ փարոյական  
ու բարոյական  
Կկանգնին հպարտ—կկանգնին աղվոր  
Արևուն երկարող ծաղիկի սը պես  
Հպարտ և ապատ

### ԹՈՒԹ

Թթենիեն  
Թուֆ սը ինկավ—  
— Թուֆ սը կարմիր  
Արյունոտ

Արյունոտ  
Կուրծքիդ վրա  
Արյունոտ կուրծքիդ վրա սիրատոջոր—

Արթնցար—  
Մազցեցար  
Արյունն ի վեր  
Կարմիր թուֆի ծառն ի վեր

Անգիտակ թե  
Կարմիր թուֆի ծառն ես եմ  
Սիրատոջոր  
Արյունոտ

Թովմասի սիրտը կնեղանար  
Տեսավ կատուն որ կխաղար պոչին հետ  
Վեր նայեցավ—Տեր ըսավ  
Ինչ կըլլար եթե զիս ալ պոչով ստեղծեիր

ԱՆՑԱՎ

Նստեր էին  
Ոտքի էլան  
Նորեն նստան

Դագաղ մը անցավ

ՍԻՐԱՇՆԵՐՈՒԴ ԲԵՐՆԻՆ ՄԵՉ

- Պողոս աղբար տանձին քիոն քանի՞ է
- Երեք ոսկի քեզի համար էֆենտիս
- Երկու քիո տանձ որ առնեն հինգ ոսկի տամ չի՞ բավեր
- Դուն օտա՞ր ես—բնավ մի տար էֆենտի
- Թե որ փրկե չե՞մ տար քեզի—քեզի չտամ որո՞ւ տամ
- Պողոս Աղբար սա դրոմները թա՞րմ են
- Դուն ի՞նչ կըսես—ծաղիկները վրան են դեռ—չե՞ս տեսներ
- Այս առավոտ ինքս եմ գացեր զատեր եմ
- Այս առավոտ ծաղիկներս հագա ես ալ դուրս ելա

- Եկուր տես որ գիշեր չեղած ծաղիկներս թռուեցան
- Քանի՞ քիո դրում կըռն էֆենտիս
- Պողոս Աղբար Պողոս Աղբար—ըսե՛ դուն ալ ուզա՞ծ ես
- Ամեն օր չէ բայց երբեմն նոր ծաղիկներդ հագնիլ
- Քարափն ի վեր քարափն ի վար սանկ քեյֆովդ պտտկիլ
- Ու տուն դարձիդ ըսե՛ դուն ալ ինձի նման տեսա՞ծ ես
- Որ ծաղիկներդ ամենքը մեկ լավկան լավկան թռուներ են
- Չհասկցա բա՞ն մը ըսիր էֆենտի
- Երկու քիո տանձ ալ կըռե ըսի—նայե խակ չըլլա
- Հոգ մի՛ ըներ—տանձ չէ—կարա՛գ—բերնիդ մեջը կհալի
- Պողոս Աղբար—սա տանձերուն տեղ օր մըն ալ փորձե՛ր ես
- Կախվիլ կենալ և արևուն տակ երապել ճյուղն ի վար
- Ու հասուննալ հողեն ալիջ օդեն բուրմունք ընպելով
- Երկու քիո դրում երեք—երկու քիո տանձ ալ վեց
- Օր մ՛ալ հալի սիրածներուդ բերնին մեջ
- Ինը ոսկի ամենքը
- Բարով ուտես—նորեն եկուր էֆենտիս

ԱՐՎԵՍ ՔԵՐԹՈՂՈՒԹՅԱՆ

Քերթված մը պպտիկ գանձանակ մըն է  
Բաց—կպարնանա  
Թե երբ է այդքան պերճանք հավաքեր

Քերթված մը կապույտ աշտարակ մըն է  
Բարձր—այնքան որ երբ գագաթն ելլես  
Կապշիս—ու չորս դիդ ուրիշ կերևա

Քերթված մը բյուրեղ աշտանակ մըն է  
Մոմ չէ—երապն է կփառի բերնին  
Մինչ լույսն ուղղակի հոգվույդ մեջ կիջնե

Քերթված մը երկչոտ նապաստակ մըն է  
Եթե բուռ մը սեր չիրանցնես  
Քեն կընե—անդարձ կփախչի քեզմե

Քերթվածն անուղղա անտռակ մըն է  
Շփանալ կուպե

Թիվ մը թիվի քով—թիվ թիվերու մեջ—  
Ու թիվերու մեջ կորսված թիվ մը  
Չլլալու տենչն է—  
Տարբեր ըլլալու պահանջն է ձերը  
— Նմաններու մեջ տարբեր ըլլալու—

Տարբեր ըլլալու պահանջն է ձերը—  
Ամբողջության մեջ ամբողջին նման  
Չկորսվիլն է  
Ձեր ամբողջ դատը  
— Ամբողջության մեջ չկորսվիլը—

Տարբեր իսկ ըլլաք—բոլորեն տարբեր—  
Բոլորեն նույնքան տարբեր ըլլալու  
Ի վերջո դարձյալ դարձյալ իրարու  
Նման ըլլալու  
Տարսափն է ձերը  
— Դարձյալ անանուն թիվ մը մնալու

Ու գիտնալու թե լոկ վերո մըն է  
Ի վերջո ամեն թիվի վախճանը

## ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Ոտք ոտք ելեք սա խարխուլ սանդուղեն  
Աստիճան մը վեր—աստիճան մը վար—  
Ու երբ տեսնեք թե տեղ մը չեք հասեր

Չեր ջուրջ դարձեք

Ճիշտ երեք հարյուր վաթսուն աստիճան

Էք ուր որ էիք

— Ու որ ըլլալ էր ձեր դերը կյանքին—

Անշուք—անանուն

## ՄԻՉԵՎ ԳԱՆԱՍՏ

Գնալըի ծովեզերքը նստեր եմ

Մարմարայի ծովը խաղաղ կտարածվի կապուտակ

Ես ծովը քար կնետեմ

Քար կնետեմ—օղակ օղակ կախեկոծի Մարմարան

Քար կնետեմ—նոր օղակներ կընդարձակին հիներուն հետ  
թևանցուկ—

Շրջանակին մեկ կողմն ինծի մյուս կողմն հեռուն հորիզոնին  
կերկարի

Ես այդ գիծ գիծ դեպի հեռուն երկարող

Արևափայլ աղեղին պիրկ կկառչիմ—

Եվ քանի որ ոչ անցագիր ոչ տուն պետք է—ոչ վիպա—

Մարմարայեն արհաբար կելեմ դուրս  
Եգեական Միջերկրական—Ատլանտյանն ալ կանցնիմ խրոխտ  
Կերթամ մինչև Գանատա

Անոնք որոնք վիս կդիտեն—տգիտաբար կկարծեն  
Թե Գնալը ծովեզերքին արևուն տակ նստեր եմ—  
Մինչդեռ ես

Մոնթրեալի մայթերն ի վեր մայթերն ի վար ձեպի հետ

Կդեգերիմ ամիսներու տարիներու կարտով—

Մերթ ես ձեպի մերթ դուք ինծի մենք իրարու կպատմենք

— Հին օրերով նոր օրերով խանդավառ—

Օրերը հին օրերը նոր և դեռ օրերը գալիք

Մինչև որ

Հովը ելլե ու Մարմարան ցատքե ալիք առ ալիք

Խճաքարերն ի վեր փշրի Գնալըի ծովափին—

Կաթիլ մը ջուր—բաժանումի արցունքին պես պաղ—աղի—

Իյնա դեմքիս և արթննամ երազանքես ես ընդոստ

Սիրոս—անձայն—արյունի

## ԳԱԳԻԿ ՃԺԲ.

Պաշտոնական ու տոնական

Ցնցոտիներով զգեստավորյալ

Գագիկ ՃԺԲ.

Բարեխնամ Արքայն

Հայոց Աշխարհի  
Իր հավատարիմ  
Շանը հետ  
Շան պ'էլիպենն կանցնի

Թեպետ լուռ է Գագիկ Արքայից Արքայի  
Կտանի անձայն  
Ժանը լուծը կյանքին—

Շունը սակայն  
Որ քանի օր է անոթի է այնքան  
Կկաղկանձե  
Տրտմաձայն—

Եվ ախորժակով անսահման  
Կլափե շուքը Գագիկ ձժԲ.  
Բապումողորմ Արքային—

Որ կորուսած առհավետ  
Շուքն իր տոնական—  
Ու պաշտոնական  
Գլուխը վեր բռնած—

Շան պ'էլիպենն  
Կանցնի հպարտորեն  
Անծանոթ  
Անշուք

— կրույց —

— Բարև կըսեմ կբարևեմ երբ ես ձեզ  
Բարև կըսեք կբարևեք երբ դուք վիս  
Ըսեք—ինչո՞ւ տխուր եք

— Բարև կըսեմ կբարևեմ երբ ես ձեզ  
Չեմ այն որուն բարև ըսիր քիչ առաջ  
Ու դուն չես այն որ քիչ առաջ բարև ըսավ բարևեց  
Որովհետև մեր փոխադարձ բարևներուն ընդմեջեն  
Պահ մը անցավ ու երկուքս ալ այդ պահին չափ փոխվեցանք

— Բարև կըսեմ ես բոլորին ու բոլորն ալ սրտաբաց  
Բարև կըսեն կբարևեն իրենց քերթողը բարի  
Որովհետև անոնք գիտեն որ երբ վիշտեր ունենան  
Միշտ քերթող մը պիտի գտնեն իրենց կողքին վշտակից

— Չափ ու կշիռ կբաժնեմ ես բոլորին  
Ու որպեսզի չափն ու կշիռն անսեթևեթ գործածեն  
Տարապներով ես կպարպեմ անխախտ օրենքը հայտնի—  
Անոնց դեպի՛ աստղ ու լուսին ճախրանքներն ես կվարեմ

— Աստղի վրա թե լուսնի  
Ու որ ըլլան երբ ներպզամ թե կկանչեն վիս անձար—  
Պատրանքներու խաբկանքներու հսկա ծրարս շակկած  
Հոն կտուրամ պատրաստակամ—արագությամբը լուսին

— Արագությանը լույսին  
Երբ կտուրաս կկորսվի քու Կանգվածդ ապապուն—  
Կեստ կդառնաս դուն հեք քերթող որ կտենչաս մեծ ըլլալ

— Համաձայն ձեր ամենակալ օրենքին  
Պետք է կամ խուլ անշարժությամբ կանգնի-փրկել ամեն չափ  
Եվ մնալ մեծ Կանգվածիդ կշիռքով—  
Կամ լույս դառնալ և անհետիլ տիեզերքին մեջ ի սպառ

— Իսկ քերթողներն այդ վառ լույսն են անկորուստ—  
Ես կպեղեմ ու կչափեմ—ես ձեր աչքին կհանձնեմ  
Այն ինչ որ կա պահված արդեն լինելության մեջ տարրին—  
Դուն ոչինչեմ արժեքներու նոր խրախճանք կկերտես—  
Բարև կըսեմ ձեռք կերկարեմ ես քեպի

— Բարև կըսեք ձեռք կերկարեք երբ ինձի  
Ըսեք—ինչո՞ւ ուրախ եք

## ԼՈՒՍԱՆՏՔ

Ով ինչ ինքնիրեն լույս է նշմարեր  
Ինչ լույս է քաջեր ինքսինքը հեռու  
Բազմություններեն փոթորկուտ ու մեծ  
Ով ինչ ինձացեր ինքսինքն անջատեր

Ձեր անունները խառնեցեք ծովուն  
Ով ինչ է ցաներ ծովափի խիճին

Ինչ լույս է ծլեր ինքնամիտի ու խեռ  
Այնինչ ալիքն ով չէ ուզեր ըլլալ

Լուսանցք է շիներ ով ինչ խարխախով  
Բազմություններեն անջատվեր հեռու  
Ու լույսերուն մեջ փոթորկուտ ու մեծ  
Ով ինչ ինքնիրեն լույս է նշմարեր

## ՄԵՈՒԸ

Քույր—ե՛ս անունդ մոռցա  
Թե ոչ քիչ մըն ալ դուն անուն չունեիր—  
Ինչո՞ւ համար կմտեին սարփինաները բարի  
Երբ ձեռք ձեռքի կքալեինք մշուշին մեջ որ չկար—  
Հանկարծ ջուրջս նայեցա  
Չկայիր

Քույր—ե՛ս արդյոք չտեսա  
Թե ոչ քիչ մըն ալ դուն երբեք չկայիր—

Ինչո՞ւ համար կմտեին սարփինաները բարի  
Մշուշին մեջ որ չկար  
Կքալեինք ձեռք ձեռքի  
Միփոնավոր առավոտներ ակնթարթի մեջ ծնան—  
Կվախնայիր կմտեիր սարփինային պես բարի—  
Քույր—ե՛ս արդյոք չկայի  
Թե ոչ քիչ մըն ալ դուն կայիր առանձին—

Ինչո՞ւ անունդ մոռցա

## ՍԵՎ ԵՐԳԵՐ

### Ա.

Մեր ծնունդները սևով կնքված  
Մենք որովհետև սև օրի ծնած  
Սև օրի համար  
Սև սուրի համար  
Մեր ծնունդները մեռնելու համար

### Բ.

Վախը մեր մեջն է—մեջն ու մեզմե դուրս—  
Վախն է կոսոսի մեր շնչերակեն  
Վախն է կկաթի քիվերու ելրեն—  
Վախն սպասելն է սպասող մահվան  
Վախը մեր մեջն է սև շուքի նման

### Գ.

Ժանտ ամբոխներու գութին հանձնված  
Եկուր—սիրական—վերջին համբույրին  
Եկուր սա վերջին գիրկընդխառնումին  
Սիրո վայելքի սա վերջին փորձին  
Ու մոռացության

Ժանտ ամբոխներու կիրքին հանձնված  
Ով իմ սիրական

### Դ.

Մենք որովհետև ծնած սև օրի—  
— Օր մը ձեռք ձեռքի  
Օր մը կուրծք կուրծքի  
Օր մը մենավոր—  
Սակայն ամեն օր քիչ մը ավելի  
Քիչ մը ավելի մեռնելու համար  
Առանց հաշիվի  
Մեր ծնունդները սևով կնքված

### Ե.

Վաղը շատ ուշ է—Ով իմ սիրական—  
Վաղը դագաղն է ամեն այսօրվան—  
Այսօրվան համար այս օրն է իրավ—  
Ով իմ սիրական—սիրելն է իրավ—  
Մոռնալն է իրավ—

Այսօր սկիզբն է սկսող մահվան  
Ով իմ սիրական

### Զ.

Վախը կա մեր մեջ—մեջն ու մեր միջև  
Եվ մենք ենք իրավ մեր կարոտներով  
— Մեր կարոտները վախով կնքված  
Վախով սևացած  
Վախով մահացած

Որովհետև մենք սև օրի ծնած  
Մեր կարգուները մեռնելու համար

Է.

Ու մահն է իրավ—  
Ու մահվան համար  
Մենք ենք իրավ—մենք—մենք մեր վախերով

Ու մահն է իրավ իր սև հուրերով  
Մենք մեր վախերով—  
Ու մահն է իրավ իր սև սուրերով  
Մենք մեր կարտով  
Սևով կնքված մեր ծնունդներով  
Մենք մահվան համար

Ը.

Մենք մահվան համար—մեզի համար մահ

### ԲԱՆՏԱՐԿՅԱԼ

Երկինքն ի վեր—երկնաալաց  
Այս աշտարակն ինձի համար են շիներ  
Որ մագցիմ գագաթն ի վեր—

գագաթն

Դիտեմ ես ձեզ որ կվապեք դուք ձեր բանտերը շակված

Կդիտեմ ձեզ հավերժական ձեր վապքին մեջ—հևիև—  
Ձեր քանակները կորացած լուծին տակ ձեր բանտերուն—  
Այսքան վերեն որոշակի կտեսնեմ  
Ես ձեր բանտերն—ես ձեր բանտերն—ես ձեր բանտերն  
ամրաշեն

Ես ձեր բանտերը կտեսնեմ բաղեղի պես պատած ձեզ  
— Ազատության ձեր երգին դեմ խուլ հավետ—  
Անժամանակ խորշումներուն տակ բանտեր կան ձեր դեմքին  
Այսքան վերեն մեկիկ մեկիկ կհամրեմ—

Նետո դանդաղ ես կիջնեմ վար—կկորսվիմ ես ձեր մեջ  
— Ձեր վապքին մեջ հարատև—  
Կորաքանակ —բանտարկյալ—

Երկինքն ի վեր—երկնաալաց  
Այս աշտարակն ինչու համար են շիներ

### ՊԱՐՈՆՅԱՆ

Անոնք որոնք կբավկաթոռաբավմին  
Անոնք որոնք կբարեհամաբավածախեն  
Անոնք որոնք կբարեհամբավագնեն  
Անոնք որոնք կլորձնաշրթնածափահարեն  
Անոնք որոնք կլորձնաշրթնածափահարվին  
Անոնք որոնք կապշափառաբանեն ու կապշափառաբանվին  
Անոնք որոնք կամենագիտանան դրամախելացորեն  
Անոնք որոնք պետք—չէ—ըլլան—այնպես—ինչպես—որ—են

Անոնք որոնք կմեծխոսեն  
Անոնք որոնք կդրամադիպեն  
Անոնք որոնք կանակալիպեն  
Անոնք որոնք կվաշխառագործեն շահախղճաբար  
Անոնք որոնք կհամալարախաղան միաչվան  
Անոնք որոնք կպարծենամուրան  
Անոնք որոնք կմեծոչնչանան  
Անոնք որոնք կնախանձաշարծեն անոնք—որ—իրենց—պես—  
—չեն

Անոնք որոնք կտիրացվատեն  
Անոնք որոնք կմեծաբարերարանան թեթաայունակորեն  
Կնային հայելիիդ մեջ  
Կմեռնին խնդալեն

### ՉՐՈՒՅՑ

— Այս կողմերը տեղ մը պզտիկ սկիպը մը կա  
— Մեր այս կողմերը ոչ մեկ սկիպը կա  
Ամեն ինչ շատոնց սկսեր է հոս  
— Բայց ես կիմանամ թե պիս կկանչե  
Պզտիկ սկիպը մը որ կկայծկտա  
Ադամանդի պես  
Ադամանդ որուն բազմատաշ դեմքին  
Գոյացման հրաշեկ արևն է ինկեր  
— Կանչեր կլռեն  
Իմ լսողության սեմեն շատ հեռու  
Տեսողութենես մղուններ անդին

Կայծեր կմարին  
— Սկիպը մըն է աս ուժամակի պես  
Պայթելու պատրաստ  
— Հոս անշարժության ծոցն է ամեն ինչ  
Ոչ մեկ բան ինքզինք կվերստեղծե  
— Բայց ես կիմանամ թե պիս կկանչե  
Պզտիկ սկիպը մը որ կհեծկտա  
Ու տեր մը կուպե  
Միլիոն խոստումով  
Միլիոնաբարբառ  
Ձերո մը անտեր  
Ձերո մը ատակ միլիոն դառնալու  
— Միլիոնն հավասար է հոս պերոյի  
Ոչ մեկ բան ինքզինք կբազմապատկե  
— Այս կողմերը տեղ մը պետք է որ ըլլա  
Պզտիկ սկիպը որ կանհամբերի  
Ես պինքը վաղուց ուզեր եմ ճանչնալ  
Կամ գիտեմ ես պայն առանց ճանչնալու  
Գիտեմ թե սաղմն է ան լինելության  
Ու հոս է հիմա  
— Այստեղ ժխտումն է ամեն նորության  
Ձուր թե ան ըլլա պտուկ ինքնակամ  
Նախ ծիլ հետո ոստ ու ծառ դառնալու  
Այստեղ ոչ մեկ բան կվերընձյուղի  
— Օրորոց հուլիսի  
Մեկնակետ լույսի  
— Այստեղ մերժումն է հանգրվաններու  
Ոչ մեկ բան ինքզինք կվերարծարծե  
— Մուտ է այստեղ մուտ բայց խորշն մը մուտ

Կսեմ կուպ կուպ սկիպն անտերունջ  
Ան որ կարծեցի թե իմս էր միայն  
Ան որունն ըլլալ կարծեցի միայն  
— Չուր թե ան ըլլա սկիպն ամենուն  
Հոս մոայլ վերջեր կթևածեն խուլ  
Ոչ մեկ բան ինքզինք կվերսկսի  
— Այս կողմերը տեղ մը պզտիկ սկիպ մը կա  
Գիտե՞ս թե ուր է

Մեր այս կողմերը ոչ մեկ սկիպ կա  
Ամեն ինչ շատոնց սկսեր է հոս  
— Բայց ես կիմանամ թե պիս կկանչե  
Պզտիկ սկիպ մը որ կկայծկտա  
Ադամանդի պես  
Ադամանդ որուն բազմատաշ դեմքին  
Գոյացման հրաշեկ արևն է ինկեր

### ՄԵՍՐՈՂԱԲՈՒՅՐ

Խունկ կբուրեն  
Որդան կարմիր ու մագաղաթ կբուրեն

Վանք կբուրեն  
Ապաշխարանք կբուրեն  
Ծով ու մեծ պահք ու ճգնություն կբուրեն

Ավետարան կբուրեն  
Խաչ ու նարեկ—աղոթք ու ողբ ու շարական կբուրեն

Մահ կբուրեն  
Հերոսամարտ ու նահատակ կբուրեն

Արև ու արտ կբուրեն  
Վարդ ու սոխակ—Սայաթ-Նովա ու Կոմիտաս կբուրեն

Կյանք կբուրեն  
Վերապարթում ու հաղթանակ կբուրեն

Ուր որ ըլլան հողմացրիվ ուր որ գաղթեն—վարդապե՛տ  
Քու տառերդ ապատություն կբուրեն

### ԿՈՄԻՏԱՍ

Արև կա  
Իր երգերուն մեջ հողն եփող արև կա  
Արև կա սիրտ տաքցնող  
Ու կարոտով սիրտերն այրող արև կա

Տերև կա  
Իր երգերուն մեջ բողբոջուն տերև կա  
Տերև կա շոգ ամառներեն վերապրող  
Ու աշնան հետ ոսկի դարձած տերև կա

Անձրն կա  
Իր երգերուն մեջ գարնան շաղ անձրն կա  
Անձրն կա սիրտ թրջող  
Ու կարոտներն խապառ մարող անձրն կա

Բարն կա  
Իր երգերուն մեջ հանապիուռ բարն կա  
Բարն կա մեր գութաներգեն հարսներգեն  
Խաղաղություն սիրող մարդոց բարն կա

### ԲԱՌԵՐ ԲԱՌԵՐ

Բառեր բառեր—իմ պինվորներս դուք եք—  
Ես ձեզ մեկ մեկ կողջագուրեմ ու կորագունդ կորագունդ  
Իմ ձեռքովս կշարեմ—  
Ու երբ տեսնեմ թե ամեն ինչ կարգին է  
— Թե ոչ մեկ պորք—ոչ մեկ պինվոր սխալ ոտքով չի քայլեր—  
Ես ձեզ ճակատ կորկեմ—

Արիասիրտ իմ պինվորներս դուք եք—  
Իմ անունովս դուք կիջնեք մահասպիուռ դաշտը ռազմի—  
Բանաստեղծի դրոշմ սեզ  
Լուսածածան կալեծփի ձեր ձեռքերուն մեջ հպոր—  
Կմարտնչիք—ամրոց ու բերդ կնվաճեք հաղթապանծ—

Բառեր բառեր—իմ պինվորներս խիպախ—  
Ես բառերու խենթ ռազմավար—առանց ձեզի չկամ ես

Կ Ա Ն Ա Ն Չ Հ Ո Ղ  
(1976)

### ԿԱՆԱՆՉ

Գարնանամուտին  
Կիկո թթվածին տալ ուլեց օդին  
Կանանչ հազվեցավ

Բայց ամեն մարդ որ կանանչ կհազվի  
Թթվածին չի տար

Անպայման տերև ըլլալ պետք է նախ

Կիկո թթվածին տալ ուլեց օդին  
Գարնանամուտին

Անշուք մեկ մայթին վրա մեր թաղին  
Ժառ մը ծաղկեցավ  
Կանանչ

## ՀՈՒ

Ով որ դառնա  
Ինչ որ դառնա  
ջարուեակ  
առանցքի մը շուրջ  
—և արագ—

Կգեղեցկանա

Կհալին

իր տգեղ կողմերը  
Ընդհանուրին մեջ  
Եվ ընդհանուրով  
գունագեղ բոլորակ մը դարձած  
ներդաշնակ—այսպես

Ինչ որ դառնա

Ով որ դառնա

ջարուեակ  
առանցքի մը շուրջ  
—և արագ—

Կգեղեցկանա

## ԱԿԱՆՁ

Այն օրը երբ

Երկինքը վերածվի ականջի մը խոշոր

Պոռացեք—

Պոռացեք ձեր ցավերը

Պոռացեք որքան կրնաք

Վատահ

Թե ականջ մը կա ձեր դիմաց

Հոգ չէ թե անսիրտ

Հոգ չէ թե անջիղ

Առանց ուղեղի—

Բայց խոշոր—

Ականջ մը Երկինքի չափ

## ՄՏԱՏԱՆՁ

Միայն խիղճը չի տանջվիր—

Ոչ ալ մարմինը միայն—

Մխոքը

Միտքն ալ կուգան մտածումներ

Ու կտանջեն

Ու կտանջեն չարաչար

Մինչ սիրող  
Վիրավոր լամբարի նման  
Կվառի ու կմարի  
Կմարի ու կվառի

### ՀՈԳ

Ես Կիկոն եմ—  
Կորաքամակ  
քանի որ  
Աշխարհի հոգը շալկած—

Կամ աշխարհն եմ—  
Խուճապահար  
քանի որ  
Կիկոյին հոգը շալկած

### ՊԱՀԱՆՁ

Ես երբ ուզեմ թոչուն ըլլալ օդանավ կնստիմ  
Դեպի ձեպի կթռիմ  
Անօրինակ աշխարհ մըն է հոս ուր ամեն ոք  
Պահանջ մը ունի

Անօրինակ աշխարհ մըն է հոս ուր ամեն ոք  
Կպահանջե

Այն ատեն կ'ուզեմ ես թոչուն ըլլալ  
Թոչիլ սանձարձակ  
Առանց հոգի  
Առանց կապի  
Ազատ  
Դեպի քեզ  
— Դեպի ոչ իսկ քեզի—

### ՀՈՏ

Մեծ ու պզտիկ  
Սակայն միշտ նույն  
Կեդրոնին շուրջ  
օղակ օղակ գոյացող  
օղակ օղակ տարածվող

Եթերին մեջ  
շրջանակներ  
ուրվագծող հոտն եմ ես  
Որ կետե մը ճամփա կ'ելլեմ  
— անգիտակ  
Թե մինչև ուր  
մինչև որու

ինչպես ինչու  
պիտի հասնիմ ի վերջո  
անջրպետի  
հավերժին մեջ  
կորսվելն պահ մ'առաջ—

Մինչև իսկ  
Մինչև ձեզի կրնամ հասնիլ օր մըն սլ  
Ու միատեղ  
կրնանք կորիլ  
միջոցին մեջ  
ձեռք ձեռքի—

Դուք գինովցած—  
Ես գինով—

### ՀՈՄ

Ես շաղախն եմ որ գուրգուրոտ կտոբեմ  
Աջխարհացրիվ ձեր անուններն իրարու

Համեստունակ ես շաղկապն եմ ձեր միջև  
Առանց ինձի կկորսվիք գուցե դուք  
Իրարու հետ եղբայրորեն զավաթ մը շուր չխմած—

Ու երբեմն ես ինքս մեծ հրապարակ մըն եմ ուր  
բավությունս մը գուրնկույն

Երկրագունդի հապար ծագեն կհավաքվիք կուգաք դուք—  
Ու խանդավառ ամբողջության մը մեջ հաբած—դուք ձեզի  
Կփաստեք թե մինակ չեք—

Ես կարոտի տաղն եմ անծայր—ամեն օր  
ծայրեն կգրվիմ

### ՄԵՇԱՍՔԱՆՉ

Այս այն լեզուն է որով զավակներս կխոսին  
Թեպետ ես հայր չեմ

### ՀՈՐԱՆՉ

Կենսունակ—  
Արևն ի վեր—լույսն ի վեր—  
Կանանչ ծիլ մը կմազցի

Ծիլն ի վեր  
Ծիլին գծած ծիրն ի վեր  
Անջրպետ մը կերկարի

Տոպրե ութրա կըսե մին  
Մյուսը կըսե կուտ իվնինկ  
Պարապին մեջ կագուցվին

Փորը կուշտ  
Արևն ի վեր—լույսն ի վեր—  
Կատու մը կհորանջե

### ՀՈՍ

Հոս ըլլալու կամ չըլլալու  
այդ երկուքին միջև գիծն եմ  
բարակուկ

Դյուրաթափանց այդ սահմանն եմ  
— կամ թե չկամ—հայտնի չէ

Մինչդեռ շատեր պիս փշաթել՝ երկաթե դուռ  
կկարծեն

Հոս ըլլալու կամ չըլլալու  
այդ երկուքին միջև սահող  
ակնթարթն եմ ես կարճուկ—

Արագալույս այդ պահիկն եմ  
— կամ թե չկամ—հայտնի չէ  
Մինչդեռ շատեր պիս տարիով կչափեն

Անշրպետին մեջ անծալ

Ժամանակին մեջ անսկիզբ անվախճան

### ՀՈՎ

Մինչ ուրիշներ փոթորիկ  
Ես հովերուն մեջ ամենն փոքրը—շունչ—  
Շունչ որ անպոր կհատնի  
Ծովերն ի վեր փչող հովուն չհասած—

Մինչ ուրիշներ օվկեան  
Ես ծովերուն ամենափոքրը—կաթիլ—  
Կաթիլ—այն որ տակավին ծով չհասած  
Շոգի կըլլա—կանհետի—

Մինչ ուրիշներ լուրթ երկինք  
Ես սիրածիս համար նեղիկ լուսամուտ—  
Ես սիրածիս համար կաթիլ արցունքի  
Ես սիրածիս համար սիրո շունչ մը տաք—

### ՀՈՐ

Մենք հակառակ դարձած շրջուն հորեր ենք  
Բոլորս ալ  
Մեր հասակին չափ խորունկ

Ես—կեղծ բժիշկ—ականջս ձեր  
կուրծքի վանդակին  
Կըսեմ—շունչ առեք—ավելի խորունկ—  
Ու մտիկ կընեմ թե ձեր խորերուն  
Բան մը կա ձեզմե որ կկրկնե «Հոն»  
Հոն—ուր ամեն ինչ լույս է ավելի  
Հոն—ուր ամեն ինչ ավելի խաղաղ  
— Տենչ մը կա ձեր մեջ վազող դեպի հոն—

Ես—անուս բժիշկ—ականջ փակցուցած  
ձեր կուրծքին—երբ դուք  
շունչ կառնեք խորունկ—ավելի խորունկ  
ու կարտաջնչեք—կշնչեք նորեն—  
Մտիկ կընեմ—«Հոն» կփսփաք դուք  
«Հոն» կհեկեկա ձեր սիրտը թիք թաք  
«Հոն» կսուլեն ձեր թոքերը փքուն—

Այն ատեն կըսեմ—հապացեք հիմա—  
Իմ կարգիս ես ալ կհապամ շատ լուրջ  
Ու կգրեմ ձեր դեղագիրը—«Հոն»—

Իսկ դուրսը կարմրականջ մը նորափետուր  
կարմրականջ մը նաշխուն  
բայց կարմրականջ մը անկարող  
պէթոնը կտցահարեղու  
Ուրեմն  
Կարմրականջ մը դժբախտ

ՆԱՀԱՆՁ

Գալ մինչև հոն ուրկե անդին  
Սերը կսկսի

Ու ետ դառնալ կամովին  
— Առանց երգի—

ՃԱՃԱՆՁ

Սեն է որ ազահորեն կքալե մեր վրա  
Ու այն որ երբեմն ավելի կկշռե  
Սեն է

Սեղ որ ժիր հասկերու արմատը կկրծե  
Որպեսզի լույսը պակսի մեր ամենօրյա հացեն

Բայց կան որ բանաստեղծն են անքուն  
գիշերներու

Կկանգնին սևին դեմ  
Ճաճանչագեղ  
Սպիտակ  
Փուռեն նոր ելած տաք տաք հացի պես

### ԱՌԱՆՅ ՄՂԶԱՎԱՆՁԻ

Քանի որ մենք գետ եղեր ենք—հոսեր—  
Թե ծովն ու լիճը ոռոգելն է պետք  
Այդ մենք կորոզենք

Քանի որ մենք նետ եղեր—սլացեր—  
Թե անջրպետներ ծակելն է պայման  
Այդ մենք կծակենք

Քանի որ մենք կետ ենք եղեր փոքրիկ—  
Թե անհրաժեշտ է օր մ'ալ կորսվիլ  
Մենք չենք կորսվիր

### ԿԱՆՉ

Մարդուն մեկը կանչեց—Նշան—  
Ելա գացի բայց անունս Նշան չէր

Հիշատակներն էր կորուսեր—առավ ինչ որ  
ունեի—

Ինչ որ տվի մոռացություն է—մահ էր—

Ու ետ դարձա—ճամփան օտար  
Վերադարձի ճամփան չէր—

### ՂՈՂԱՆՉ

Մեքենային ձայնը դողանց է հիմա  
կշռութավոր  
տիրական

Մեքենային ձայնը դողանց է հիմա  
անառասպել  
իրական

Մեքենային ձայնը դողանց է հիմա  
ինքնամատույց  
սիրական

## ՈՐԱԿԱՆՁ

Ուլականչ մը ճեղքեցի—մեջեն  
կասկապույտ  
ծովը թափեցավ

Չիմես—չես կրնար

## ԾԱՂԿԱՄԱՆՁ

Ծաղկաղջիկ ու ծաղկամանչ  
Ծաղկամանչ ու ծաղկաղջիկ  
Ձեռք ձեռքի  
Պարապություն մը կշիւեն  
Մեջը կիյնան  
Կտրավին կկարծեք

Մինչդեռ այն պոր պարապություն կկարծեք  
Պարապություն չէ ինքնին  
Մինչդեռ այն որ իյնալ կըսեք իյնալ չէ  
Մինչդեռ այն պոր դուք կորսվիլ կկարծեք  
Վերածնիլ է նոյի նոր

## ՀՈՂ

Ես  
Վաղանեռ Մովսեսի որդի—  
Հայրդ ըսին  
Հողակույտ մը ցույց տվին

Հայր—իմ հայրս—հող  
Ես  
Հողի պավակ

## ՈՂՋԱԿԻՉՈՒՄ

Ի եփջատակ այն Չահրատին որ դեռ քսան տարու էր  
Այսօր Չահրատը  
Հիսուն տարեկան  
Կողջակիպե այն որ ինքն էր և որ ինք չէ այլևս

Այս այն պզակն է թե մարդուս մեջ արդեն  
Արև ըսես—արև չէ—  
Հավատք ըսես—հավատք չէ  
Բան մը սքակտեր է իսպառ  
Հողն է պակսեր իոն ուր անուր կկոխե՞րնք ատենդք

Եվ աստղերեն պոր կկործենք մենք վառել  
Անոնց հանար որ դեռ քսան տարու չեն  
Շոգն է պակսեր տաքցնող

## ՍՊԱՍՈՒՄ

Միշտ նույն կինն է որ կայցելե  
Այսպես ամեն տարեդարձի  
Ու միշտ նույն երգը կերգե—  
Անակնկալ ոչ մեկ խորշում կիջնե ողորկ իր դեմքին  
Աններդաշնակ ոչ մեկ նոր ձայն կխանգարե երգը հին  
Բայց ես փնթը տարվե տարի  
Ավելի պերճ  
Եվ ավելի ցանկահարույց կգտնեմ—  
Թեպետ ասիս սեղմել ուզեմ—գիտեմ թե  
Պիտի փախչի պիտի պրծի ան մատներուս արանքեն  
Ու երգը զոր հիսուն տարի նույն բերկրանքով լսեցի  
Անարձագանք պիտի կորի—և լռե—  
Բայց նորեն  
Ինչպես ամեն տարեդարձի ես իր գալուն կսպասեմ

## ԿԵՐ

Երբ պզաք թե  
Այլևս  
Մարդոց—մարդկության տալիք բան չունիք  
Ենիճամիի<sup>1</sup>  
Թոշուններուն կեր տվեք  
15. 2. 1968

<sup>1</sup> Մվկիթ Ատամբուլում, ուր աղավիններ են հավաքվում: Ծ. Խ.

## ՏԻԿԻՆ ԴՈՒՔ ԵՎ ՊԱՐՈՆ ԵՍ

Տիկին—եթե կհաճիք  
Մեկ ծայրեն դուք—մեկ ծայրեն ես բռնենք սա լայն աշխարհին  
Ծալլենք ծալլենք պպտիկնա  
Անկողինի չափ ըլլա  
  
Հետո եթե կհաճիք  
Այս աշխարհին բազմություններն ավելորդ  
Անկողինեն նետենք վար  
Անդունդն ի վար գլորին  
  
Ու մենք մնանք առանձին  
Տիկին Դուք և Պարոն Ես

31. 1. 1968

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Զահրատ ԱԼ. ԹՈՓՅԱՆ** . . . . . **3**

**ՄԵԾ ՔԱՂԱՔԸ (1960)**

Մեծ քաղաքը . . . . .	21
Թաղ . . . . .	21
Շոգենավ . . . . .	22
Մի լար լույս մի լար . . . . .	23
Պատմություն հանրակառքով ձամփորդության մը . . . . .	24
Անձրևը . . . . .	24
Մեհմետ պեյ փողոցը . . . . .	25
Նամակ . . . . .	25
Մարդու միս . . . . .	26
Վերջաբան . . . . .	27

**ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԻԿՈՅԻ**

Կիկո կամուրջին վրա է . . . . .	28
Օտար . . . . .	29
Թաղը . . . . .	29
Սերենատի պես . . . . .	30
Ամենտ էֆենտի փողոցը . . . . .	31
Բարեկենդան . . . . .	31
Դիմակավոր պարահանդես Կիկոյի և մարդոց համար . . . . .	32
Այցելություն . . . . .	32
Ոյս . . . . .	33

Սղբիս—Դիս	33
Տարբերություն	34
Արկածախնդրություն	34
Կիկո մեռավ	35
Հողի մասին	35

### ԱՂՅՈՒՍԱԿ

Ձերո	36
Մեկ	37
Երկու	37
Երեք	37
Չորս	38
Հինգ	38
Վեց	39
Յոթ	39
Տասը	39
Անհաջիվ	40

### ՀԱՆԳԵՐ

Լապտերներու պալլառը	41
Երգ ճրագներու վրա	42
Մեռյալ պար	43
Ռոնտո գարնան վրա	44
Սիրերգություն	45
Բանաստեղծություն Պետրոս Դուրյանի ու կյանքի մասին	47

### ՆԱԽԱՔԵՐԹՎԱԾՆԵՐ

Նախակարապետ	48
Նախապաշտություն	49
Նախահարձակ	49

Նախախնամություն	50
Նախադասություն	50
Նախապագում	51

### ԿԱՂԱՆԴ

Կաղանդ Պապային մորուքը	52
Կաղանդի ծառ մը	52
Կաղանդի ծառ	53
Կաղանդի կապել	54
Ծառ	54

### ՇՈՒԲՁՊԱՐ

Դարուն երգը	56
Շուրջ	57
Անուրջ	58
Քուրջ	59
Լուրջ	59
Կամուրջ	60

### ՀԱՆՂԵՍ

Հանդես	61
Բացօդյա սերեր	62
Սիրերգ	63
Անհաջիվ	63
Երկու հատ մոմ	64
Մոնա Լիզա	65
Չուկը որ սպորենիի տերն մը տեսավ	66
Գրահաջիվ	68
Մուլեն Ռուժ	68
Պուկ գիշերվան մեջ	70
Տարեդարձ	74

**ԿԱԳՈՒՅՏ ՀՈՂ**

Կապույտ հող	75
Լացի գիշեր	76
Ես մարգագետինը և օրհորը խաղաղությունը	76
Փռշի	77
Ոսպ ստկող կինը	77
Գիշերապահը	78
Դիմաստվեր	79
Կրկես	80
Մարդու սը միտքը	81
Գունտ	81
Աղերագիր	82
Լու	83
Մծեղ	85
Միօրինակություն	86
Տառապանք և մխիթարություն	87
Կաղապար և մահ	88
Պատրաստ	91

**ՁՈՆ ԽԱՓՇԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԸ**

Գանկ	92
Ճանկ	93

**ԲԱՐԻ ԵՐԿԻՆՔ (1971)**

Ուշ	94
Ոչ	94
Ողբ	95
Կարկին	96
Վայրենիս	97
Էլեկտրոնիկ	98

Հաշիվի մեքենա	98
Մծեղի հաշիվ	99
Կիկոյին կինը	100
Կիկոյին տունը	100
Տունը	101
Չար բաներ	102
Փոխարեն	103

**ՁԱՐՄԱՆԱՀՐԱՇ**

Ձարմանահրաշ	104
Ալշիմի	105
Համառոտ քերականություն	106
Բարև	106
Այսպես ամեն առավոտ	108
Լաց	109
Վահան	109
Ամառնային	110
Յուղ	112
Լուսնարշավ	112
Լարախաղացը	113
Ոչ	113
Քար	115
Աղոթք	117
Հրածեղ	118

**ՄԱՅՄՈՒՆ**

Մայմուն	120
Նինա	121
Մահագրական	122
Երջանիկ բանաստեղծը	123
Դեսպան	124
Իբր թե	125
Տիկին Բրածո	126

Հարցում	127
Աթենք 1969	127
Հերոսամարտ	128
Կիկոյին երգը	129

### ԲԱՐԻ ԵՐԿԻՆՔ

Բարի Երկինք	130
Երկնասացություն	130
Երկնածածաղ	131
Երկնաքար	131
Երկնավառ	131
Երկնաքեր	132
Երկնաքերթված	132
Ասուպ	132
Երկնահրավեր	133

### ԾՈՐԱԿՆԵՐ

Ծորակներ	134
Անպտուղ սալորենին	135
Կաղանդի Գիշեր	136
Բոլորն ալ	138
Բոլորս ալ	138
Հարցաթերթիկ	139
Փրոֆեսեր Փարո և Իր լվացքի Մեքենան	140
Թուր	141
Պոչ	142
Անցավ	142
Սիրածներուդ բերնին մեջ	142

### ԱՐՎԵՍ ԶԵՐԹՈՂՈՒԹՅԱՆ

Արվեստ Բերթողության	144
Թվավոր Բերթված	145

Աստիճանավոր Բանաստեղծություն	146
Միչև Գանատու	146
Գազիկ ԺՃԲ.	147
Պարոն Այնշթայն	149
Լուսանցք	150
Մշուշ	151
Սև երգեր	152
Բանտարկյալ	154
Պարոնյան	155
Չրույց	156
Մերոպաբույր	158
Կոմիտաս	159
Բառեր Բառեր	160

### ԿԱՆԱՆՉ ՀՈՂ (1976)

Կանանչ	161
Հոլ	162
Ականչ	163
Մտատանջ	163
Հոգ	164
Պահանջ	164
Հոտ	165
Հոծ	166
Մեծաքանչ	167
Հորանչ	167
Հոս	168
Հով	169
Հոր	169
Հոն	170
Կարմրականչ	171
Նահանչ	171
Ճաճանչ	171

Առանց մղձավանջի	172
Կանչ	173
Ղողանջ	173
Ուկականջ	174
Ծաղկամանջ	174
Հող	175
Ողջակիպում	175
Սպասում	176
Կեր	177
Տիկին Դուք և Պարոն Ես	177

Ձախրատ

ՄԵՇ ՔԱՂԱՔԸ

Заград

БОЛЬШОЙ ГОРОД

СТИХИ

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.  
Ереван — 1977

Խմբագիր՝ Մ. Ս. Քերպյան  
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գառպարյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
«Լեռստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ—523.

Հանձնված է շարվածքի 11/IV 1977 թ.: Ստորագրված է  
տպագրության 3/1 1978 թ.: Թուղթ՝ № 1, 70×108<sup>1/32</sup>,  
տպագր. 6,0 մամ.—8,4 պայմ. մամ., հրատ. 5,7 մամ.+1 ներ-  
դիր: Պատվեր 1149: ՎՋ 08801: Տպաքանակ 5000: Գինը՝ 1 ռ.:  
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տեր-  
յան 91:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլի-  
գրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի  
№ 2 տպարան, Երևան, Տերյան 44:

Типография № 2 Госкомитета Совета Министров Арм.  
ССР по делам издательств, полиграфии и книжной  
торговли, Ереван, ул. Теряна, 44.